Azg Վազ

4 ՀՈԿՏԵՄԲԵՐ 2008 ՇԱԲԱԹ 182 (4076)

Սենատը հաստատել է Թուրքիայում ԱՄՆ դեսպանի թեկնածությունը

ԱՄՆ Սենատը երեկ հավանություն է տվել Թուրքիայում ԱՄՆ դեսպանի պաշտոնում Ջեյմս Ջեֆրիի նշանակմանը, հաղորդում է «Ազատությունը»: Սեպտեմբերի վերջին Սենատի արտաքին հարաբերությունների հանձնաժողովում կայացած լսումների ժամանակ Ջեֆրիին ամերիկացի օրենսդիրների ուղղած հարցերի զգալի մասը վերաբերում էր հայ - թուրքական հարաբերություններին ու Հայոց ցեղասպանությանը:

«Ամերիկյան վարչակազմը ճանաչում է, սգում եւ խստորեն անհանգստացած է այն պատմական փաստերով, որոնք դուք բնութագրեցիք որպես մեկեւկես միլիոն հայերի զանգվածային սպանություն եւ բռնագաղթ՝ իրադարձություններ, որոնք տեղի ունեցան Օսմանյան կայսրության գոյության վերջին տարիներին», այսպես էր պատասխանել Ջեֆրին սենատոր Քերիի հարցին՝ վստահեցնելով, որ պաշտոնական Վաշինգտոնը հայ-թուրքական հաշտեցման կողմնակից է: Ջեյմս Ջեֆրին 2002-2004 թվականներին պաշտոնավարել է որպես Ալբանիայում ԱՄՆ-ի դեսպան, 2004-2005 թվականներին եղել է Բաղդադում Միացյալ Նահանգների գործերի ժամանակավոր հավատարմատարը: Մինչեւ վերջերս ԱՄՆ-ի նախագահի ազգային անվտանգության գծով խորհրդականի տեղակալն էր:

«Ռուսաստանը ողջունում է Հայաստանի մտադրությունները՝ խորացնելու կապերը Վրաստանի հետ»

Ռուսաստանի եւ Հայաստանի արտգործնախարարների համատեղ ասուլիսի ժամանակ **Էդվարդ Նալբանդյանը** նշեց, որ «մեզ Վրաստանի հետ կապում է բազմադարյան բարեկամությունը: Մենք մեր հարաբերությունները դիտարկում ենք առագային ուղղված հեռանկարում ոչ միայն այն պատճառով, որ հայկական ապրանքների 70-75 տոկոսն անցնում է Վրաստանի տարածքով եւ Հարավային Օսիայի իրադարձությունների ժամանակ էական դժվարություններ առաջացան այդ ապրանքները Հայաստան հասցնելու հարցում»: «Մենք դժվարություններ ունենք վրացական ղեկավարության եւ ոչ թե վրաց ժողովրդի հետ», իր հերթին նկատեց Ս. Լավրովը: Պատասխանելով լրագրողի հարցին՝ նա նշեց, որ Ռուսաստանին չեն մտահոգում Հայաստանի մտադրությունները՝ շարունակել համագործակցությունը ՆԱՏՕ-ի, առավել խորացնել տնտեսական եւ այլ ոլորտներում կապերը Վրաստանի հետ: «Մենք եւս պահպանում ենք ՆԱՏՕ-ի երկրների հետ համագործակցության ձեւաչափը. մենք ունենք ՆԱՏՕ-Ռուսաստան խորհուրդ, որը շարունակում է գործել՝ չնայած դաշինքի որոշ երկրներ ցանկանում են առկախել որոշ կարեւոր հարցերի քննարկումը, սակայն դա նրանց ընտրությունն է: Հայ գործընկերների հետ մենք չունենք տարակարծություններ՝ ինչպես գործակցել ՆԱՏՕ-ի հետ», ընդգծել է ՌԴ ԱԳ նախարարը: Ինչ վերաբերում է Հայաստանի պայմանավորվածությանը Վրաստանի հետ՝ խորացնելու տնտեսական կապերը, Ռուսաստանը, ըստ Լավրովի, կարող է միայն ողջունել եւ հույս հայտնել, որ այդ պայմանավորվածությունները կհանգեցնեն նրան, որ չի կրկնվի կովկասյան ճգնաժամի ընթացքում տեղի ունեցածը՝ բեռների տեղափոխման արհեստական սահմանափակումները Վրաստանի կողմից:

ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ

Վազգեն Առաջին Ամենայն հայոց կաթողիկոսի ծննդյան 100-ամյակ

Օրերայի եւ բալեսի ազգային թատրոնում երեկ պաշտոնական նիստ էր՝ երջանկահիշատակ Վազգեն Առաջին Ամենայն հայոց կաթողիկոսի ծննդյան 100-ամյա հոբելյանին նվիրված: Ներկա էին ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը, ԱԺ նախագահ Հովիկ Աբրահամյանը, վարչապետ Տիգրան Սարգսյանը, արտաքին գործերի նախարար Էդվարդ Նալբանդյանը եւ պաշտոնատար այլ անձինք:

«Համախմբվել ենք մեկ անգամ եւս արժեւորելու այն արգասիքները եկեղեցական եւ ազգային մեր կյանքի, որոնք ձեռք բերվեցին Վազգեն Առաջին Ամենայն հայոց կաթողիկոսի հայրապետության երջանում եւ այսօր էլ շարունակում են ծառայել մեզ եւ պետք է ծառայեն սերունդներին», միջոցառմանը ներկա գտնվողներին հայտնեց Ամենայն հայոց Գարեգին Երկրորդ հայրապետը:

Ն. Մ.

«Ամերիկյան ֆինանսական ճգնաժամը չի հասնի Հայաստան»

Հուսով է վարչապետ Տիգրան Սարգսյանը

Հայաստանի վարչապետ Տիգրան Սարգսյանը, երեկ պատասխանելով լրագրողի այն հարցին, թե ինչպե՞ս կանդրադառնա ամերիկյան ֆինանսական ճգնաժամը Հայաստանի վրա, ասաց, որ հույս ունի, թե այն չի հասնի Հայաստան, քանի թե ԱՄՆ Կոնգրեսը հաստատել է 700 մլրդ դոլար կազմող ծրագիրը, որն առաջին հերթին ուղղված է տուկայի կայունացմանը: Փորձագետների տեսակետները վկայակոչելով, վարչապետը նշեց, որ այս փուլում ճգնաժամի հիմնական պատճառը անվստահությունն է ընկերությունների միջեւ՝ գործարքներ չեն կատարվում, լուրեր են շրջում, որ այս կամ այն ընկերությունը շուտով կսնանկանա եւ այլն: Այդ անվստահությունն էլ հնարավորություն չի տալիս գործարքներ կնքելու եւ ֆինանսական տուկայում, այդ թվում՝ արժեթղթերի տուկայում, անկում է արձանագրվում: ԱՄՆ Կոնգրեսի նախօրեին ընդունած որոշմամբ, Տիգրան Սարգսյանի հավաստմամբ, միջոցները կուղղվեն վստահության վերականգնմանը, եւ այն ակտիվները, որ այժմ կասկածելի են համարվում, ձեռք կբերի ԱՄՆ գանձապետարանը: «Վստահությունը կվերականգնվի, հուսով ենք, որ 2009 թվականը ֆինանսական տուկայի համար կայուն կլինի եւ այդ բացասական ազդեցությունները չեն հասնի Հայաստան», եզրափակեց վարչապետը:

Ա. Մ.

«Ոսկե ծիրանը» ծվարել է Թատերական գործիչների միության մեկ սենյակում

Կինոմիության նորակառույց հսկա շենքում կինոփառատոնի համար տեղ չկա



ՌՈՒԶԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ

«Ոսկե ծիրան» 5-րդ կինոփառատոնի փայլուն հաջողությունից հետո թվում էր, թե կազմակերպիչների համար ի վերջո պիտի ստեղծվեն աշխատանքային ֆիզ թե շատ հարմարավետ պայմաններ, որպեսզի հաջորդ կինոփառատոնի ժամանակ այլեւս չլինեն նստելու տեղ փնտրողներ, գետնարմից հազիվ ոտքի վրա կանգնողներ, շոգից ուշագնաց լինողներ... Բայց, ինչպես ցույց տվեցին վերջին 2 ամիսները, փառատոնը հայտնվեց ֆոյվորական վիճակում եւ ընդամենը մեկ սենյակում տեղավորվելու հնարավորություն ստացավ շնորհիվ Թատերական գործիչների միության նախագահ Հակոբ Ղազանչյանի:

«Փառատոնն արդեն ոտքի էր ելել ու քայլում էր առաջ, սակայն ամեն ինչ գլխիվայր շրջվեց, եւ 5-րդ կինոփառատոնի ավարտից հետո հայտնվեցինք նոր գրասենյակ փնտրելու բարդ խնդրի առջեւ: Գիտեք, որ Երեւանում այլեւս չկան ազատ տարածքներ, քանի որ ժամանակին բազմաթիվ մշակութային օջախներ սեփականաշնորհվեցին ու հիմա ազատ գրասենյակ գտնելը շատ է դժվարացել: Փառատոնին օգնելու անկեղծ ցանկություն ունեն բոլորը՝ նախագահի աշխատակազմը, մշակույթի նախարարը, Երեւանի քաղաքապետը, կինոգործիչների միությունը, մի խոսքով՝ բոլոր նրանք, ովքեր իրենց մասնիկն ունեն փառատոնի կայացման մեջ, բայց ինչպես երեւում է, նրանք լուրջ դժվարություններ ունեն ազատ տարածքներ գտնելու: Մեզ համար չափազանց կարեւոր է գրասենյակ ունենալ կինոյի տանը, որն այժմ լայն թափով վերակառուցվում ու ծաղկում է ժամանակակից բոլոր պայմաններով, որոնք խիստ անհրաժեշտ են կինոփառատոն անցկացնելու համար, սակայն կինոմիության նախագահ Ռուբեն Գետոյանցը երեկ վերջնականորեն մերժեց «Ոսկե ծիրանին» գրասենյակ տրամադրելու մեր 5 տարվա խնդրանքը:

Տես էջ 2

Հրազդանի 5-րդ բլոկը կվերակառուցեն չինացիները

Հրազդանի 5-րդ բլոկի շինարարության տնօրենության եւ Չինաստանի Խարբին քաղաքի շինմոնտաժային թիվ 3 տրեստի միջեւ երեկ պայմանագիր կնքվեց, որ տվյալ կազմակերպությունը կիրականացնի բլոկի շինմոնտաժային աշխատանքների մոտ 80 տոկոսը: Պայմանագրի ստորագրման ժամանակ նշվեց, որ այս կազմակերպությունը նախկինում՝ 2001-ին կատարել է Հրազդան ՋԷԿ-ի կաթսայատան ագրեգատի նորոգման աշխատանքները եւ նմանատիպ աշխատանքներ մի շարք երկրներում:

Ա. Մ.

Վերահրատարակվել է նշանավոր եկեղեցականի «Ս. Միտոնի օրհնությունը» ուսումնասիրությունը

Ամենայն Հայոց կաթողիկոսի օրհնությամբ Մյուռոնօրհնության առիթով Մայր Աթոռի հրատարակչական բաժինը վերահրատարակել է 20-րդ դարի նշանավոր եկեղեցական եւ մեծավաստակ գիտնական Կարապետ եպիսկոպոս Տեր-Մկրտչյանի «Ս. Միտոնի օրհնությունը» ուսումնասիրությունը, որն առաջին անգամ լույս է տեսել 1912 թ. «Արարատ» ամսագրում: Ուսումնասիրությունը վերահրատարակության է պատրաստել Մայր Աթոռի արխիվի եւ թանգարանների տնօրեն Ասողիկ քահանա Կարապետյանը: Կարապետ Սրբազանն իր ուսումնասիրության մեջ անդրադառնում է Հին եւ Նոր Կտակարաններում օծության յուղի մասին հիշատակություններին, բացատրում Մյուռոնի խորհուրդը, նրա գործածությունը Հայ Առաքելական եկեղեցու ծիսակարգում՝ ընդգծելով Ս. Մյուռոնի նշանակությունը մեր ժողովրդի ազգային-եկեղեցական կյանքում: Գրքում իբրեւ հավելված ներկայացված են Ս. Մյուռոնի օրհնության երեք սրբությունների՝ Կենաց փայտի մասունքով Ս. Խաչի. աստվածամուխ Ս. Գեղարդի եւ Ս. Գրիգոր Լուսավորչի Աջի, ինչպես նաեւ Մյուռոնօրհնեքի ժամանակ գործածվող որոշ սրբազան մասունքների եւ առարկաների 23 լուսանկարներ:

Մամեդյարով. «Հայաստանի ագրեսիան խոչընդոտում է զարգացմանը ողջ տարածաշրջանում»

Ադրբեջանի արտգործնախարարին, ամենայն հավանականությամբ, ուղղորդում է Անկարան

ՀԱԿՈԲ ՉԱԲԵՅԱՆ

Հոկտեմբերի 2-ին Բաքվում Ադրբեջանի արտգործնախարար Էլմար Մամեդյարովը հայտարարել է. «Հարավային Կովկասում մշտական խաղաղության եւ կայունության հաստատման համար Հայաստանը պետք է դադարեցնի ադրբեջանական տարածքների օկուպացումը»: Այդ մասին «Ադրբեջանցի նախարարը հրապարակեց խաղաղության վերջնական նախապայմանը» վերնագրով տեղեկացրել է Նյու Յորքի «turkishny.com» կայքէջը: Ըստ տեղեկության, Մամեդյարովն այդ հայտարարությունն արել է Նորվեգիայի փոխարտգործնախարար Ռայմոնդ Յոհանսենի հետ հանդիպմանը: Այնուհետեւ նա ասել է, որ տարածաշրջանի խաղաղության եւ անվտանգության համար անհրաժեշտ է նաեւ ապահովել օկուպացված տարածքները լքելու հարկադրանքի տակ հայտնված փախստականների վերադարձը բնակության նախկին վայրեր եւ այդ վայրերում վերականգնել ենթակառույցները:

Մամեդյարովը կարծիք է հայտնել, որ Հայաստանի ագրեսիվ քաղաքականությունը զարգացման խոչընդոտ է ողջ տարածաշրջանում, ընդգծելով, թե Լեռնային Ղարաբաղի հիմնահարցը կարելի է լուծել Ադրբեջանի տարածքային ամբողջականության շրջանակում միայն: Ըստ վերոհիշյալ կայքէջի, Նորվեգիայի փոխարտգործնախարարը հավանություն է տվել Մամեդյարովի՝ տարածքային ամբողջականության եւ փախստականների վերադարձի վերաբերյալ ասածներին:

Յոհանսենին Բաքվում հրավիրված մամուլի ասուլիսում անուղղակի հաստատել է նաեւ պաշտոնական այցով Ադրբեջանում գտնվող ԱՄՆ պետքարտուղարի օգնական Զոն Նեգրոպոնտեն՝ ասելով. «Միացյալ Նահանգները պաշտպանում է Ադրբեջանի եւ Վրաստանի տարածքային ամբողջականությունը»:

Տես էջ 2

ԱԶԳ

ԸՆԹԱՑԻԿ

Օմբուդսմենին հավաս չի ներշնչում մարտի մեկի դեպքերի ժողովենի փորձաքննությունը

2008-ի հունվարի մեկից մինչեւ սեպտեմբերի 30-ը ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը ստացել է ավելի քան 2845 դիմում-բողոք, որոնցից 907-ը՝ գրավոր: Գրավոր դիմումներից 48-ը կազմում են կոլեկտիվ դիմում-բողոքներ, որոնք ներառում են 1299 դիմումատու: Նշված ժամանակաշրջանում դրական լուծում է ստացել 79 դիմում-բողոք, վերականգնվել են 177 անձանց խախտված իրավունքները: 9 ամսվա ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակից պետական մարմիններին ուղղված նամակների թիվը կազմում է 887:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպան **Արմեն Հարությունյանը** ուսումնասիրել եւ պարզել է, որ Հայաստանի հեռուստաընկերությունները բազմակարծություն չեն ապահովում: Ավելին՝ երեկվա ասուլիսում պաշտպանը հայտարարեց, որ օրերս ԱԺ ընդունած «Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին» ՀՀ օրենքը գնահատում է որպես հետընթաց:

«Տպագիր մամուլում էլ այդ բազմակարծությունը շատ դեպքերում վեր է ածվում վիրավորանքների: Այն մշակույթը չի սերմանում, որը մեզ է պետք: Հեռուստատեսության եւ ռադիոյի օրենքի վերջին փոփոխությունը, որում մրցույթները հետաձգվեցին, գնահատում եմ որպես հետընթաց: Եվ ըստ էության դա ուղղակիորեն հակասում է «Ա1+»-ի գործով եվրոպական դատարանում կայացրած վճռին, որտեղ նշված է, որ մրցույթը ներկայումս պետք է իրականացվի»:

Խոսելով հասարակության շրջանում մշտապես առկա սեփականության խնդիրների մասին, պաշտպանը տեղեկացրեց, որ իրեն են դիմել Հյուսիսային պողոտայի կառուցման պատճառով իրացման գործընթացի տակ ընկած Լալայանց փողոցի 45 բնակիչներ:

«Ըստ էության օրենքի ընդունումն էլ չի նպաստում մարդկանց սեփականության իրավունքի պահպանմանը: Գնահատող ընկերությունները շուկայական գներից ցածր գին են նշանակում, եւ քաղաքացիները ոչ մի կերպ իրենց իրավունքները պաշտպանել չեն կարող», նկատեց օմբուդսմենը՝ ընդգծելով, որ այս հինգ տարիների ընթացքում ոչ մի քաղաքացի, ում սեփականության իրավունքը ոտնահարված է եղել, գործ չի շահել»:

«Անպատժելիության կուլմինացիա եմ համարում Անդրանիկ Բաբայանի եւ Արթուր Սահակյանի հետ կապված գործը: Մեր իրավապահները ոչ թե պետք է դիմեն հանրությանը, որ նա իրենց վստահի, այլ իրենց գործունեությամբ պետք է նվաճեն այդ վստահությունը: Այս տեսակետից գործի քննությունը առանցքային նշանակություն կունենա ամբողջ իրավական համակարգի հեղինակության համար»:

Արմեն Հարությունյանը կարեւոր է համարում ՀՀ նախագահի՝ մարտի մեկի իրադարձությունների վերաբերյալ փաստահավաք խմբի ստեղծման հրամանագրի նախագիծը, որտեղ ընդդիմության եւ իշխանության ներկայացուցիչները հավասար քանակով ներկայացված կլինեն:

Ինչ վերաբերում է մարտի մեկի դեպքերին առնչվող հայցերի ժողովենի փորձաքննությանը, ըստ Արմեն Հարությունյանի՝ դրանք պետք է ներկայացվեն միջազգային փորձաքննության. «Դրանք պետք է ավելի լուրջ ուսումնասիրվեն: Հավասար քանակի անկախ փորձագետներ են լինելու՝ իշխանությունից 2-ը, ինչպես նաեւ 1 հոգի «ժառանգությունից» եւ 1 հոգի էլ ՀԱԿ-ից»:

Լրագրողներից մեկի հարցին, թե պաշտպանի համար սպասելի՞ էր, որ ԵԽԽՎ մոնիտորինգի հանձնաժողովը «անհանգստություն եւ ափսոսանք» կհայտնի նախօրեին տարածած իր հայտարարության մեջ, օմբուդսմենը պատասխանեց. «Իհարկե սպասում էի, որովհետեւ այդ բանաձեւի մոտեցումը խիստ ադեկվատ էր եւ ես որպես մարդու իրավունքների պաշտպան, համամիտ եմ ԵԽԽՎ մոտեցումներին»:

ՆԱԻՐԻ ՄՈՒՐԱԴՅԱՆ

Մամեդյարով. «Հայաստանի ագրեսիան խոչընդոտում է զարգացմանը ողջ տարածաշրջանում»

1-ին էջից

Նեգրոպոնտեն նշել է, որ դարաբաղյան հակամարտության կարգավորումը կնպաստի ինչպես Ադրբեջանի անվտանգության, այնպես էլ տարածաշրջանի խաղաղության եւ կայունության ամրապնդմանը: Ապա նա շարունակել է. «ԱՄՆ-ը երբեք այսքան չի ձգտել Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի խաղաղ եղանակով կարգավորմանը, որքան հիմա: Մենք կողմնակից ենք տարածքային ամբողջականության սկզբունքից ելնող եւ միջազգային իրավունքի մյուս նորմերը հաշվի առնող, կողմերի համար ընդունելի լուծմանը»:

Պպասել, որ Բաքվում Նորվեգիայի փոխարտգործնախարարն ու ԱՄՆ պետքարտուղարի օգնականը հայտարարեն Ղարաբաղի հիմնահարցն ազգերի ինքնորոշման իրավունքի հիման վրա լուծելու անհրաժեշտության մասին, իրատեսական չէ: Սակայն խնդիրը ոչ այնքան Յոհանսենը կամ Նեգրոպոնտեն են, այլ Ադրբեջանի արտգործնախարար Մամեդյարովը եւ Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի կարգավորման համար նրա առաջադրած «տարածքային ամբողջականության» նախապայմանը, որը վերջնագրի բնույթ է կրում:

Մինչդեռ Թուրքիայի նախագահ Աբդուլլահ Գյուլի երեւանյան այցի նախօրյակին եւ այցից մինչեւ Նյու Յորքում սեպտեմբերի 26-ին հրավիրված եռակողմ հանդիպման ավարտն, Ադրբեջանի ղեկավարությունը, առավել եւս Մամեդյարովը, խուսափում էին Հայաստանին վերջնագիր ներկայացնելու ոգից: Ըստ երեւույթին Անկարան ելնելով Հայաստանի հետ Թուրքիայի մերձեցման փոլոորտի ստեղծումից, զգուշացրել էր նրանց: Հասկանալի է, որ այդ ժամանակահատվածում Հայաստանի մասին արտահայտվելիս ընդգծված զսպվածություն էին ցուցաբերում նաեւ Թուրքիայի ղեկավարները, իսկ թուրքական մամուլն ու թուրք գործիչները հրապարակումներով հայատանանպաստ հասարակական կարծիք էին ձեւավորում երկրում:

Ավելին, թուրքական թերթերը բացահայտ գրում կամ ակնհայտ հասկացնում էին, որ Թուրքիան սխալ է գործում՝ պայմանավորելով Հայաստանի հետ հարաբերություններն Ադրբեջանի վերաբերմունքով, դա չի բխում թուրքական ազգային շահերից, եւ Հայաստանը հետքայլ չի կատարի ո՛չ Լեռնային Ղարաբաղի, ո՛չ էլ Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման հարցերում: Ուստի՝ պետք չէ զիջումներ ակնկալել Հայաստանից: Այդ ընթացքում արծարծվում էր Հայոց ցեղասպանության համար Հայաստանից պատասխանատու ներողություն խնդրելու հարցը:

Սակայն Նյու Յորքում Հայաստանի, Ադրբեջանի եւ Թուրքիայի արտգործնախարարների եռակողմ հանդիպմանը հաջորդող օրերին Թուրքիայի ղեկավարները սկսեցին վերստին հիշել «Հայաստանի օկուպացման տակ գտնվող ադրբեջանական տարածքների» մասին, հայ-թուրքական սահմանի բացումը նորից պայմանավորվեց Լեռնային Ղարաբաղի հարցում հայկական կողմի ընդառաջ քայլերով:

Թեեւ դեռեւս վաղ է ենթադրել, որ Հայաստանի նկատմամբ Թուրքիայի՝ 1991-ին որդեգրած դիրքորոշումը վերադարձել է ելման կետ, այնուամենայնիվ, ակնհայտ է հայ-թուրքական հարաբերությունների առնչությամբ Անկարայում ասիաճանաբար կատարվող հետքայլը: Դա, ինչ խոսք, արագաքայլ է գտնում մամուլում: Մինչ այդ, ցեղասպանության համար Հայաստանից պատասխանատու ներողություն խնդրելու հանգամանքն ընդգծող թուրքական թերթերն արդեն վիճարկում են դրա նպատակահարմարությունը, իսկ Եվրասիական ռազմավարական հետազոտությունների կենտրոնի Հայկական ուսումնասիրությունների ինստիտուտն ամենօրյա տեղեկագրում հրապարակում է միջազգային իրավունքի գծով փորձագետ Սադի Չայջքի «Հայկական հարց. մի՞թե Թուրքիան ներողություն պետք է խնդրի» վերնագրով հոդվածը:

Այս ամենը հիմք է տալիս ենթադրելու, որ Ադրբեջանի արտգործնախարարին ուղղորդում է Անկարան: Համենայն դեպս, Մամեդյարովն այլեւս զսպվածություն դրսեւորելու պարտավորվածություն չի զգում: Սա նշանակում է, որ վարչապետ Էրդողանի «Կովկասի կայունության եւ համագործակցության պլատֆորմ» ստեղծելու նախաձեռնությունը հեռանկարային չէ, Անկարան դրանում Հայաստանին ներգրավելու խնդիր այլեւս չունի, ուստի արդեն ավելորդ է վերջին շրջանում Երեւանի նկատմամբ ցուցաբերվող զսպվածությունը, կամ էլ Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման եւ Լեռնային Ղարաբաղի հիմնահարցերում ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի, ինչպես նաեւ արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանի հաստատակամությամբ ի չիք են դարձել թուրքական կողմի ակնկալիքները Հայաստանից: Նախագահ Սարգսյանի պարագայում խոսքը նրա՝ ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայում ունեցած ելույթի, իսկ արտգործնախարար Նալբանդյանի՝ Նյու Յորքի եռակողմ հանդիպմանը մասնակցության մասին է:

ԱՌԱՋԱԳԻՐՈՒՄ

Հինգ թեկնածու էջմիածնի քաղաքապետի պաշտոնի համար

Հոկտեմբերի 19-ին կայանալիք էջմիածնի քաղաքապետի ընտրությունների համար առաջադրվել է հինգ թեկնածու՝ էջմիածնի փոխքաղաքապետ, անկուսակցական Կարեն Գրիգորյանը, անկուսակցական Թամարա Թադեւոսյանը, բիզնեսմեն, ՀՀԿ կուսակցության անդամ Հակոբ Ռաֆիկի Հակոբյանը, Հակոբ Ղազարի Հակոբյանը եւ էջմիածնի հացի գործարանի տնօրեն Արսակ Պողոսյանը: Թիվ 19 ընտրաշրջանային ընտրական հանձնաժողովը, սակայն, գրանցել է չորս թեկնածուի:

«Հակոբ Ղազարի Հակոբյանին մերժել ենք հաշվառում չունենալու պատճառով: Հաշվառման փոխարեն ներկայացրեց մշտական բնակության արձանագրությունն, իսկ անձնագրային բաժնից տեղեկանք բերեց էջմիածնում մշտական բնակության մասին, սակայն օրենքում գրված է, որ վերջին երկու տարվա ընթացքում պետք է հաշվառված լինի տվյալ համայնքում: Այդ պատճառով էլ նրան մերժեցինք», **«Ազգի»** հետ զրույցում փաստեց թիվ 19 ընտրաշրջանային ընտրական հանձնաժողովի նախագահ Մովսես Քարտաշյանը:

Ընտրությունները կանցկացվեն 39 տեղամասերում՝ էջմիածնում եւ 12 գյուղերում:

Հ. Հ.

«Ոսկե ծիրանը» ծվարել է Թատերական գործիչների միության մեկ սենյակում

1-ին էջից

«Ոսկե ծիրանը» միայն կինոփառատոն չէ, այլ համակարգված մշակութային քաղաքականություն է՝ տարածաշրջանային ու միջազգային կարեւոր ծրագրերով: Հենց դրանով է փառատոնն արժանացել Եվրոխորհրդի ուշադրությանը, միջազգային կինոլրագրողների ու կինոքննադատների բարձր գնահատականին», ասում է կինոփառատոնի տնօրեն **Հարություն Խաչատրյանը**:

Մի քանի օր առաջ նա Գյումրիում էր, որտեղ մեկնարկեց «Ոսկե ծիրանը անիվների վրա» փառատոնը, որը մոտակա օրերին կշարունակվի Ղափանում, Վանաձորում, Շուշիում, Ջավախքում: Արդեն մշակվել են առաջիկա 3 տարիներին իրականացվելիք ծրագրերը, որոնց մեջ առանձնահատուկ տեղ են գրավում տարածաշրջանային կինոնախագծերը, միջազգային կինոփառատոնների մրցութային եւ արտամրցութային ծրագրերում հայկական ֆիլմեր ներկայացնելը, «Համահայկական կինոնախագիծը», Լոս Անջելեսում, Սան Պաուլոյում, Բուենոս Այրեսում «Հայկական կինոյի օրեր» անցկացնելը եւ այլն: Մշակվում է տարածաշրջանային նոր՝ բարձրագույն կինոդասընթացների ծրագիրը, որի համար հիմք են դարձել այս տարվա հուլիսին Ասոմ Էգոյանի անցկացրած կինովարպետության դասերը՝ ավելի քան 30 երիտասարդ կինոքննադատների մասնակցությամբ Թուրքիայից, Վրաստանից, Հայաստանից: Ծրագրով նախատեսված է յուրաքանչյուր 2-3 ամիսը մեկ կազմակերպել կինոդասընթացներ՝ երկամյա կամ եռամյա կինոդպրոց ստեղծելու հեռանկարով: Նոյեմբերին կինոդասընթացները կանցկացնի իրանցի հանրահայտ կինոքննադատ Աբաս Քյառոստամին, իսկ մարտին՝ հոլանդացի անվանի կինոքննադատ Յոս Սթելինգը: Սամբուլի «Անդոլու կուլտուր» թուրքական մշակութային ասոցիացիայի հետ աշխատելու Թուրքիայում սկիզբ առած կինոմենեջերությունները նոյեմբերին կշարունակվեն Հայաստանում: Կընդլայնվի նաեւ փառատոնի տեղեկատվական եւ հրատարակչական գործունեությունը՝ կսկսվեն «Հայկական կինո 1924-2008» կատալոգի վերատպման եւ կինոհանրագիտարանի ստեղծման աշխատանքները, տարվա ընթացքում լույս կտեսնի փառատոնային ամսաթերթը, եթե կհեռարձակվի «Ոսկե ծիրան» հեղինակային հաղորդաշարը եւ այլն:

«Բազմաթիվ մտահղացումներ ունենք, որոնց իրականացման համար նորմալ պայմաններ են հարկավոր: Բարձրագույն կինոդպրոցն անպայման բացվելու է ու տալու է շատ մեծ

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության ԺԵ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 375010 Հանրապետության 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
www.azg.am
Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՎԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221
Հաշվապահություն (գովազդ) / հեռ 582960
Լրագրողների սենյակ / հեռ 581E31
Համակարգչ. ծառայություն / հեռ 582483
Շուրջօրեայ լրահաւաք ծառայություն / հեռ 529353
Համակարգչային շարվածքը «Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով կամ ռադիոհեռուստատեսութեամբ առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում
Գ. տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:
"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

Հանդիպում

Գնահատականներ նախագահ Սարգսյանի ուղերձին

ՀՅԿ խմբակցության անդամն իր բանդայի հետ Երեւանի փողոցներում մարդ է հոշոտում, արդյոք ՀՅԿ-ն պատրաստվո՞ւմ է ճնշակել տվյալ պատգամավորի մանդատը վայր դնելու հարցը, հարցրինք երեկ ՀՅԿ խմբակցությունից Ազգային ժողովի ճեպազրույցների ներկայացած **Սամվել Նիկոյանին**. նկատի ունեինք «Ալրաղացի Լյով» մականունով պատգամավորի կազմակերպած ծեծուջարդը՝ մահվան ելքով:

«Ես այս պահին պատրաստ չեմ Ձեր կտրուկ հարցին շատ կտրուկ ձեւավորված պատասխան տալ, բայց գտնում եմ, որ երբ երկրի նախագահը շատ կտրուկ դիմում է ժողովրդին եւ ասում է, որ ինքը անհանդուրժող է լինելու, իր համար անհասկանալի է, որ մարդիկ կարողանում են նման արարքներ թույլ տալ, եւ խոստանում է, որ դրան անթույլատրելի է պատիժը, ես դրան ավելացնելու ոչինչ չունեմ», պատասխանեց նա:

Իսկ ընդհանրապես ճեպազրույցներից առանձնացրել ենք երկրի նախագահի ուղերձին՝ խմբակցությունները ներկայացնող պատգամավորների արձագանքները:

Ուղերձի երեւույթն ինքնին կարեւոր համարելով՝ «Ժառանգությունից» **Անահիտ Բախչյանն** այն անվանեց բարի ցանկությունների հրավարակ: Բայց ըստ նրա՝ ավելի վաղ ընդդիմության արտահայտած մտքերից եւս կային Ս. Սարգսյանի ելույթում, օրինակ՝ «հեռախոսային արդարադատության» անթույլատրելի համարելու դրույթը: Ա. Բախչյանը գտնում է, որ շատ խնդիրներ դուրս մնացին այդ ուղերձից: Իսկ ուղերձում նշված բացասական երեւույթների դեմ պայքարում «Ժառանգությունը» դիտորդի դեր չի ստանձնի եւ նախագահի հետ կաչխատի: Ըստ Բախչյանի՝ ժառանգականները սպասում էին, որ երկրի նախագահն անդրադարձ է անելու մարտի 1-ի դեպքերին, անգամ նախագահին մոտ շրջանակներից խոսակցություններ էին հասնում, թե համաներում գուցե լինի, բայց չեղավ՝ Բախչյանի համար անհասկանալի պատճառով. «Զոհերի ընտանիքները չեն արդարություն ուղերձում նշված մտքերով եւ ավելի չեն սիրելու այս երկիրը», ասաց: Իսկ **Լարիսա Ալավերդյանն** ավելացրեց, որ եթե ցայսօր չեն բացահայտված մարտի 1-ի 10 զոհերի մարդասպանները, ապա դրա շարունակությունը վերջին օրերին ծեծելով մարդ սպանելու դեպքն է, իսկ պետությունը չի պաշտպանում իր քաղաքացուն բիրտ ուժից:

Նախագահի ուղերձին դրական գնահատականներ տվեցին ՕԵԿ-ը ներկայացնող **Հովհաննես Մարգարյանն** ու **Հեղինե Բիշարյանը**. առաջինն առանձնացրեց ուղերձի իրեն դուր եկած հատվածները՝ ատոմակայանի, Իրան-Հայաստան երկաթուղու կառուցման, ԱԽ-ի դերի բարձրացման եւ այլ հարցերի վերաբերյալ: Իսկ Հ. Բիշարյանը հետագա ուղերձներից ավելի կոնկրետ թեմաներ ակնկալեց: Մարտի 1-ի դեպքերի գնահատականներն էլ, քանի որ ԱԺ ժամանակավոր հանձնաժողովն աշխատում է դեռ, Հ. Մարգարյանը վաղ համարեց. ենթադրվում է, որ երկրի նախագահն էլ է վաղ համարել: Այստեղ արժե անդրադառնալ նույն հարցին ԱԺ ժամանակավոր հանձնաժողովի նախագահ Ս. Նիկոյանի պատասխանին. վերջինս երկրի նախագահից այդպիսի անդրադարձ չի ակնկալել, քանի որ հանձնաժողովը իր ավարտական եզրակացության մեջ ԱԺ-ին առաջարկ է ներկայացնելու, անգամ խնդիր կա պետական հեղաշրջման՝ fr. or. 300 հոդվածի որոշ դրույթները որոշակիացնելու առումով, որը քրեական հոդված լինելով՝ քաղաքական ինչ-որ երանգ է պարունակում, դրանով են մեղադրվում ընդդիմության ներկայացուցիչների մի մասը: Եթե այդ առաջարկը ներկայացված լիներ, այդժամ գուցե ուղերձից այդպիսի սպասելիք լիներ, այդպիսի սպասելիք կարելի է ունենալ ապագայում: Իսկ ընդհանրապես՝ Նիկոյանը նախագահի ուղերձն անվանեց երկխոսություն հասարակության հետ. նա առանձնացրեց իր համար կարեւոր՝ Ղարաբաղի հարցի, տնտեսական, անպատժելիությունը վերացնելու դրույթները:

Ուղերձը նոր մտակույթ համարող ՀՅԿ-ական **Արամ Սաֆարյանը** առանձնացրեց այդ ուղերձի երկու պահ, որոնք, ի դեպ, իր կուսակցության ծրագրին են համահունչ՝ ատոմակայանի եւ Իրան-Հայաստան երկաթուղու կառուցում, փաստորեն, ըստ Սաֆարյանի, ԲՀԿ ծրագրի դրույթներն այդպիսով պետական քաղաքականության մաս են դառնում: Իսկ մարտի 1-ին անդրադարձի բացակայությունն, ըստ նույն կուսակցությունից **Նաիրա Զոհրաբյանի**՝ պարտադիր չէ, որ առաջին ուղերձում լինի, հետո, երբ այդ ուղերձները պարբերական դառնան, կոնկրետ խնդիրների անդրադարձներ լինեն, գուցե ուղերձներից մեկը հենց այդ թեմայով կլինի, մանավանդ որ ԵԽԽՎ բանաձեւի կատարման ժամկետը մինչեւ հունվար է:

ՀՅԴ-ն ներկայացնող ԱԺ փոխխոսնակ **Հրայր Կարապետյանը** հատկապես գնահատելի համարեց նախագահի ուղերձը՝ որպես քաղաքական մտակույթի ձեւավորում: Իսկ մարտի 1-ին անդրադարձ եւ հատկապես համաներում դեռ պետք չէր սպասել, քանի դեռ չեն ավարտվել դատավարությունները, չի կարելի առանց դատավարությունների խոսել նաեւ քաղբանտարկյալների մասին: Ըստ նրա՝ արդյոք ճի՞շտ է համաներման մասին խոսելը, երբ եղել են զանգվածային անկարգություններ, թալան, 10 զոհ, այդ համաներումը հասարակությունն էլ չի ընկալի: Լրագրողներից մեկը փորձեց հիշեցնել, որ բանտարկյալներից ոչ մեկի վրա սպանության մեղադրանք չկա, Հ. Կարապետյանը կրկին խորհուրդ տվեց սպասել դատավարությունների ավարտին:

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Երեւանում նշվում է Պերճ Զեյթունցյանի 70-ամյակը

Գ. Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնը հոկտեմբերի 5-ին նոր թատերաշրջանը կսկսի արձակագիր, դրամատուրգ Պերճ Զեյթունցյանի ծննդյան 70-ամյակին նվիրված բեմադրությամբ: Ներկայացվելու է գրողի «Արշակ թագավոր» պիեսը (ռեժիսոր՝ Վահե Շահվերդյան): Պիեսի մեկ այլ տարբերակ՝ «Ավերված քաղաքի առասպելը», տարիներ առաջ նույն թատրոնում բեմադրել է Հրաչյա Ղափլանյանը, որում գլխավոր հերոսի՝ Արշակ Երկրորդի դերը կատարել է Խորեն Աբրահամյանը: Պերճ Զեյթունցյանի հոբելյանը նշվել է նաեւ մտակուքային այլ կենտրոններում, օրինակ՝ Հայաստանի ազգային գրադարանում, Հ. Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոնում: Ի պատիվ հոբելյանի, ներկայացվել է նրա «Հիսուս Նազովրեցին եւ նրա երկրորդ աշակերտը» պիեսը: Հոբելյանական երեկոյին գրողին ողջունել են Հայաստանի գրողների, ժուռնալիստների միությունների նախագահներ Լեւոն Անանյանը, Աստղիկ Գեւորգյանը, ՀՀ մտակույթի փոխնախարար Դավիթ Մուրադյանը, Հայկական թատերական ընկերության նախագահ Հակոբ Ղազանչյանը, Ստանիսլավսկու անվան թատրոնի գլխավոր ռեժիսոր Ալեքսանդր Գրիգորյանը եւ ուրիշներ: Հրապարակվել է ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանի ուղերձը, հաղորդում է «Արմենպրեսը»:

Ռուսական գազի գինը Եվրոպայում, Ուկրաինայում եւ Հայաստանում

Եվրոպա առաքվող ռուսական գազի գինը հոկտեմբերին հասել է ռեկորդային մակարդակի՝ 1000 խմ-ի համար 500 դոլար: Այդ մասին նախօրեին տեղի ունեցած մամուլի ասուլիսի ժամանակ հայտարարել է «Գազպրոմ» ընկերության նախագահ Ալեքսեյ Միլլերը: Այդտեղեղեր, վերլուծաբաններ կարծում են, որ այդ գինը նավթի գների անկման պատճառով երկար չի պահպանվի: Ակնկալվում է, որ եկող տարվա երկրորդ եռամսյակում այդ գինը կիջնի 350 դոլարի 1000 խմ համար: «Գազպրոմի» վերլուծաբանների կարծիքով, 2009-ին այդ գինը կլինի 420-470 դոլարի սահմաններում:

Միեւնույն ժամանակ, Ռուսաստանի եւ Ուկրաինայի միջեւ պայմանավորվածություն է ձեռք բերվել՝ գազի մատակարարման տուկայական գնի անցնել երեք տարվա ընթացքում: Այդ մասին հայտնել է Ուկրաինայի վարչապետ Յուլիա Տիմոշենկոն՝ Ռուսաստանի իր գործընկեր Վլադիմիր Պուտինի հետ բանակցություններից հետո:

Ներկայումս Ուկրաինան Ռուսաստանից գազը ստանում է 179,5 դոլարով 1000 խմ համար: Կիեւում հուսով են, որ եկող տարի այդ գինը չի անցնի 300 դոլարից, մինչդեռ «Գազպրոմի» նախագահ Ալեքսեյ Միլլերը չի բացառել, որ Ուկրաինային մատակարարվող գազի գինը 2009-ին կարող է կազմել 400 դոլար:

Հայաստանը ներկայումս Ռուսաստանից գազը ստանում է 1000 խմ համար 110 դոլարով: Ըստ «Գազպրոմի» եւ «Հայռուսգազարդի» միջեւ վերջերս կնքված համաձայնագրի, եկող տարվա ապրիլի 1-ից այդ գինը կկազմի 154 դոլար, իսկ 2010-ի ապրիլի 1-ից՝ 200 դոլար: 2011-ից Հայաստանը եւս գազը կստանա տուկայական գներով, ինչպես եւ Ռուսաստանը տուկայական գնով գազը կվաճառի իր ներքին սպառողներին:

Ա. Մ.

Ամենամյա

Բացվեց Digitec 2008 ցուցահանդեսը

Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում աշխատուժի պակաս կա

«Էյ Փի Ջի օֆիս պարկում» երեկ բացվեց Digitec 2008 ամենամյա ցուցահանդեսը, որն արդեն 4-րդ անգամ էր անցկացվում: Միջոցառումն ավանդաբար անց է կացվում վարչապետի բարձր հովանու ներքո: Ցուցահանդեսի նպատակների մասին նախօրեին մանրամասն տեղեկություններ հաղորդեցին կազմակերպիչները, որին անդրադարձել ենք («Digitec-ը դարձնել տարածաշրջանային նշանակության միջոցառում», «Ազգ», 2 հոկտեմբերի, 2008):

Տեղեկատվական եւ բարձր տեխնոլոգիաները ներկայացնող ոլորտի մի քանի տասնյակ ընկերություններ ներկայացրել էին իրենց ծառայություններն ու արտադրանքը: Բացելով միջոցառումը, Հայաստանի վարչապետ **Տիգրան Սարգսյանը** կարեւոր համարեց, որ ցուցահանդեսը հասարակության ուշադրությունը բեւեռում է այս ճյուղի վրա: Ցուցահանդեսում շրջելուց եւ ընկերությունների տաղավարներին ծանոթանալուց հետո վարչապետն իր կարծիքը հայտնեց ներկայացվածի վերաբերյալ:

Տիգրան Սարգսյանը նշեց, որ էապես ավելացել են տեղեկատվական տեխնոլոգիաների ընկերությունների պատվերները ինչպես երկրի ներսում, այնպես էլ արտերկրից: Ավելացել է նաեւ ընկերությունների մատուցած ծառայությունների եւ արտադրանքի քանակը: Վարչապետը կարեւորեց կրթական համակարգի համար առաջարկվող նոր լուծումները, նշելով, որ եթե մեր կրթական հաստատությունները ձեռք բերեն այդ լուծումները, ապա կրթության որակը կբարձրանա: Բոլոր ընկերություններում Տիգրան Սարգսյանին ասել են, որ ունեն աշխատուժի պակաս: Ուստի նա կոչ արեց երիտասարդներին այս ոլորտում մասնագիտանալ եւ աշխատանք ձեռք բերել, տեղեկացնելով, որ աշխատավարձերը 3-4 անգամ գերազանցում են միջին հանրապետական աշխատավարձը:

Ա. Մ.

Շնորհավորանք

«Ազգի» խմբագրությունը շնորհավորում է իր նախկին աշխատակցուհի **Գոհար Գեւորգյանին** եւ **Արմեն Բաղալյանին** ամուսնության կապակցությամբ: Ցանկանում ենք երկար տարիների համատեղ, երջանիկ կյանք եւ շատ երեխաներ:

Օրակարգ

Այսօր

◆10.00-«Արմենիա-Մարիոթ» հյուրանոցի «Տիգրան Մեծ» սրահում իր աշխատանքները կսկսի «Արմթեք կոնգրես 2008»-ը:

◆11.00-«Ուրբաթ» ակումբի հյուրն է ԱԺ «Ժառանգություն» խմբակցության քարտուղար Ստեփան Սաֆարյանը:

◆13.00-«Golden palace» հյուրանոցի կոնֆերենց դահլիճում «Հայկական ջազ - 70» տարվա շրջանակներում տեղի կունենա անվանի կոմպոզիտոր եւ երաժիշտ Կոնստանտին Օրբելյանի մամլո ասուլիսը:

◆17.30-Կենդանիների պաշտպանության միջազգային օրվա առթիվ «Մոսկվա» կինոթատրոնի մոտից տեղի կունենա երթ կենդանիների դիմակներով:

Կիրակի՝ հոկտեմբերի 5

◆11.00-Կոտայքի թեմում կնշվի Վազգեն Ա Վեհափառ հայրապետի ծննդյան 100-ամյակը: Ջարենցավան քաղաքի Ս. Փրկիչ եկեղեցում կմատուցվի ս. պատարագ:

Երկուշաբթի՝ հոկտեմբերի 6

◆09.30-Վ. Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտում (Երեւան, Շտաբի 77) «Համատեղ աղեղ - 2008» զորավարժության եզրափակիչ օրվա կապակցությամբ կանցկացվի «Լրատվամիջոցների օր» միջոցառումը:

◆11.00-«Նովոստի» միջազգային մամուլի կենտրոնում կկայանա Գյումրու վեցերորդ միջազգային բիենալեին նվիրված մամուլի ասուլիս:

◆11.00- ԱԺ 330 սենյակում տեղի կունենա գիտության, կրթության, մշակույթի, երիտասարդության եւ սպորտի հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Արմեն Աշոտյանի ասուլիսը:

◆12.00-«Ուրբաթ» ակումբի հյուրերն են «Սերունդ» նախաձեռնող խմբի անդամներ պատմաբան Արտակ Մովսիսյանը, Հայկ Չոբանյանը, Արթուր Եղիազարյանը եւ Հայկ Մուրադյանը: Հյուրերը կխոսեն Զավախքի տագնապահարույց խնդիրների մասին:

◆12.00-ԵԱՀԿ երեւանյան գրասենյակում (Տերյան 89) կստորագրվի նույն գրասենյակի եւ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի միջեւ համագործակցության պայմանագիր:

◆14.00-Երեւանի «Նովոստի» մամուլի կենտրոնում կկայանա Երեւան-Թբիլիսի տեսակամուրջը՝ նախագահ Սերժ Սարգսյանի Վրաստան կատարած այցի արդյունքների վերաբերյալ:

◆15.00-Գրողների միությունում տեղի կունենա Վիլյամ Սարոյանի 100-ամյակին նվիրված ցերեկույթ:

Անշարժ գույքի գործարքների քանակն ու բնակարանների գները Երեւանում նվազել են

Ո՞րն է օգոստոսին արձանագրված այս երեւույթի պատճառը եւ ի՞նչ կարելի է ապասել ապագայում

Այս տարվա օգոստոսին Հայաստանի անշարժ գույքի շուկայում իրականացվել է շուրջ 13 հազար գործարք, ինչը 12,4 տոկոսով պակաս է հուլիսին կատարված գործարքների եւ 10,6 տոկոսով՝ անցած տարվա օգոստոսին կատարվածների համեմատ: Անշարժ գույքի շուկայում արձանագրված այս երեւույթի մասին տեղեկացնել անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի՝ շուկայի վերլուծության տվյալներից:

Օգոստոսին կատարվել են 4431 օտարման գործարքներ, որոնց մեջ առուվաճառքի գործարքները կազմել են 78,5 տոկոս, իսկ մնացածը նվիրատվություններն ու փոխանակություններն են: Օտարման գործարքների քանակը նախորդ ամսվա նկատմամբ նվազել է 15 տոկոսով, իսկ նախորդ տարվա օգոստոսի նկատմամբ՝ 21,9 տոկոսով:

Մայրաքաղաքում առուվաճառքի գործարքների 64,8 տոկոսն արձանագրվել է բազմաբնակարան շենքերի բնակարանների նկատմամբ: Օգոստոսին հուլիսի համեմատ բնակարանների առուվաճառքի գործարքների քանակը Երեւանում նվազել է 17,7 տոկոսով, իսկ նախորդ տարվա օգոստոսի համեմատ՝ 30,1 տոկոսով:

Բնակարանների շուկայական միջին գներն օգոստոսին հուլիսի համեմատ նվազել են 1,8 տոկոսով: Հիշեցնենք, որ վերջին 4-5 տարիներին բնակարանների գների նվազման ցուցանիշը արձանագրվել էր միայն մեկ անգամ՝ այս տարվա մարտի 1-ին հռհրված անկարգությունների հետեւանքով: Ըստ համայնքների, Երեւանում բնակարանների 1 քմ մակերեսի միջին շուկայական գները օգոստոսին այսպիսին են եղել. (աղ. 1)

Մարզերում, բացառությամբ Երեւանի, բնակարանների միջին գները օգոստոսին հուլիսի համեմատ աճել են 2,1 տոկոսով: Երեւանից հետո, ամենաթանկ բնակարաններն Աբովյանում են, որտեղ 1 քմ մակերեսի շուկայական գինը կազմել է ավելի քան 177 հազար դրամ, Վաղարշապատում (Էջմիածնում)՝ 171 հազար դրամ, այնուհետեւ Ծաղկաձորում՝ 164 հազար դրամ: Ապա գալիս են Աշտարակը, 1 քմ-ն՝ 140 հազար դրամ, Մասիսը եւ Նոր Հաճնը՝ 132 հազար դրամ, Ջերմուկը՝ 130 հազար դրամ:

Օգոստոսին մեր երկրում գրանցվել է անհատական տների առուվաճառքի 412 գործարք, որից 98-ը՝ Երեւանում: Մայրաքաղաքում անհատական տների առուվաճառքի գործարքների քանակը հուլիսի համեմատ նվազել է 13,3 տոկոսով, իսկ մարզերում՝ 22,8 տոկոսով: Միջին շուկայական գներն այստեղ օգոստոսին հուլիսի համեմատ, աճել են 1 տոկոսով: Միջինացված՝ 250 քմ շինության մակերես եւ 400 քմ տնամերձ ունեցող անհատական տների 1 քմ-ի միջին գներն, ըստ Երեւանի համայնքների, օգոստոսին կազմել են. (աղ. 2)

Համայնքներ	Միջին գները (դրամ) աղ. 1		
	օգոստոս 2007թ.	օգոստոս 2008թ.	հուլիս 2008թ.
Կենտրոն	471800	504700	501400
Արաբկիր	389800	436400	434900
Քանաքեռ-Զեյթուն	286200	320700	319100
Նորք Մարաշ	238900	298900	293900
Ավան	234900	284700	282600
Էրեբունի	240100	286900	285800
Շենգավիթ	256600	291000	290000
Դավթաշեն	263200	316000	308000
Աջափնյակ	250500	295400	291200
Մալաթիա-Սեբաստիա	235100	284400	278400
Նուբարաշեն	129800	161700	161700
Միջինը Երեւանում (բացի Նոր-Նորքից)	272400	316400	313400

Համայնքներ	Միջին գները (դրամ) աղ.2		
	օգոստոս 2007թ.	օգոստոս 2008թ.	հուլիս 2008թ.
Կենտրոն	454800	483600	494800
Արաբկիր	376600	412300	422300
Քանաքեռ-Զեյթուն	282200	308400	311000
Նոր Նորք	234300	278100	284500
Ավան	228200	271100	276000
Էրեբունի	237600	275000	281000
Շենգավիթ	251100	284500	286000
Դավթաշեն	259400	297700	300500
Աջափնյակ	247300	278000	282500
Մալաթիա-Սեբաստիա	231200	265400	271600
Նուբարաշեն	127400	155100	158000
Միջինը Երեւանում /բացի Նորք-Մարաշից/	266400	300800	306200

Մարզերում միջինացված են 200 քմ շինության եւ 1000 քմ տնամերձ մակերեսով անհատական տների գները: Այստեղ միջին գներն ավելացել են 2 տոկոսով: Ամենաթանկ անհատական տները Ծաղկաձորում են, 1 քմ-ն՝ 252 հազար դրամ, որտեղ պահպանվում է գների արագ աճի տեմպը: Երկրորդը Աբովյանն է, որտեղ 1 քմ-ն կազմել է 190 հազար դրամ: Երրորդը Վաղարշապատն է, 1 քմ-ն՝ 176 հազար դրամ, այնուհետեւ Աշտարակը՝ 144 հազար դրամ, Մասիսը եւ Նոր Հաճնը՝ գրեթե 139 հազար դրամ:

Ո՞րն է օգոստոսին Հայաստանի անշարժ գույքի շուկայում արձանագրված գործարքների քանակի եւ մայրաքաղաքում բնակարանների գների նվազման պատճառը: Որ անշարժ գույքի շուկան լրջորեն ցնցվեց այս տարվա մարտին, բազմիցս գրել ենք եւ անդրադարձել դրա հիմնական պատճառին՝ հետընթացական անկարգություններին եւ աղակայունացմանը: Սակայն մեկ-երկու ամիս անց շուկան սկսեց կայունանալ եւ գործարքների քանակը յուրաքանչյուր ամսին նախորդ ամսվա համեմատ աճ էր արձանագրում: Միաժամանակ, նախորդ տարվա նույն ամիսների համեմատ, այս տարվա վերջին երկու-երեք ամիսներին, գործարքների քանակն ընդհանրապես եւ մասնավորապես առուվաճառքի գործարքների քանակը շարունակում էր շուրջ 20-25 տոկոսով նվազ մնալ: Դա փաստում էին նաեւ անշարժ գույքի գործակալությունները:

Այսինքն, կարող ենք եզրակացնել, որ մարտյան ցնցումն, այնուամենայնիվ, ամբողջությամբ չհաղթահարվեց, ինչի հետեւանքն էլ ներկայիս լճացման երեւույթներն են: Այս ոլորտը խիստ զգայուն է, հատկապես օտարերկրյա ներդնողների եւ Հայաստանում անշարժ գույքի ձեռք բերելու ցանկություն ունեցողների համար: Սակայն տնտեսական շարունակվող աճը եւ գործարար միջավայրի բարելավման կառավարության նոր քաղաքականությունը հույսեր են ներշնչում, որ անշարժ գույքի շուկայում աշխուժությունը մոտ ապագայում կվերականգնվի: Բացի այդ, բնակարանների գների որոշակի անկումը կդրդի եւ կխրախուսի մինչ այժմ բնակարանների գների բարձրացման գործընթացի պատճառով սպասողական դիրք բռնած մարդկանց օգտվել առիթից եւ բնակարան գնել: Ինչն էլ իր հերթին լրացուցիչ խթան կլինի գործարքների ավելացման եւ շուկայի աշխուժացման համար:

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

«Բնորրանը» հայրենակցական գաղափարի կրող ու տարածող

1915-ից հետո պատմական հայրենիք կորցրած արեւմտահայության համար իր բնակավայրի պատկանելության աշխարհագրությունը խիստ ընդլայնվեց: Հետեղեռնյան շրջանի զուտ ֆիզիկական գոյատեւման փուլին հաջորդեց հայկական գաղութների կազմավորման շրջանը եւ առաջացավ հոգետր կյանքի անհրաժեշտություն: Հայատեւան երեք հիմնասյուների՝ դպրոցի, եկեղեցու հիմնադրման ու մշակույթի աշխուժացումը՝ բնորրանային հիշատակների ոգեկոչումով, սկսվեց ու շարունակվում է ցայսօր: Բնորրանի գաղափարն ու զգացողությունը այսպիսի պարագաներում ծննդավայրային պատկանելությունից զատ ուրիշ մի խորհուրդ ունեն, որ կարող է հայրենիքը ողբերգականորեն կորցնողը միայն զգալ:

«Բոլոր հայերը նույն ճակատագիրն ունեն», ասում էր մի կին՝ հոր արմատների մասին խոսելիս: Երբ երկու արեւմտահայ պատահաբար հանդիպում են, առաջին հարցը, որ տալիս են իրար՝ որտեղացի ես, ապա՝ հետաքրքրվում են ծնողների ու պապերի ծննդավայրով: Հետեղեռնյան հայ իրականության ամենատենդագին, ամենասուր իրողությունը հարազատների, ապա եւ հայրենակիցների փնտրտուքն է եղել: Աշխարհագրության լայն սփռումի ցավը սեղմելու համար ստեղծվեցին հայրենակցական միություններ՝ որպես կորսված եզերքի, բնորրանի, տեղի բնակչության սովորույթների, մշակույթի ու պատմության պահպանման ու շարունակության, թերեւ, եզակի հնարավորություն: Հայաստանի հայրենակցական միությունների խորհրդի «Բնորրան» հանդեսը կոչված է այս իրողությունների ու երեւույթների մասին համապարփակ եւ հանգամանալի տեղեկությունների հաղորդման՝ գերխնդիր ունենալով հայրենակցական գաղափարի տարածումը, դրա մշանորոգ պահելը: «Բնորրանի» միասնական՝ վերջին չորս համարը (17-20), որ լույս տեսավ վերջերս, ամփոփում է հայրենակցական միությունների առօրյան՝ 2004-2007-ի կտրվածքով («Մուսալեռ», «Եդեսիա», «Վասպուրական», «Հաճըն», «Արաբկիր», «Զեյթուն»), գիտական տարաբնույթ հոդվածներ՝ հայրենագիտական ամենատարբեր ասպարեզներին առնչվող,

պատմամշակութային անդրադարձներ, հոբելյանական տարեթվեր ու անուններ:

«Բնորրանի» շնորհավորական էջերը նվիրված են Հալեպի, Բեյրութի, Այնթապի հայրենակցական միությունների հիմնադիր ատենապետ, Լոս Անջելեսի Այնթապ հայրենակցական միության պատվո նախագահ, հայրենակցական շարժման նվիրյալ Երվանդ Պապայանի ծննդյան 90 եւ վաստակի 70-ամյակի առիթով Լոս Անջելեսում տեղի ունեցած մեծարանքի երեկոյին: Տպագրված են Գարեգին Բ կաթողիկոսի կոնդակը, հիմնական բանախոսի խոսքը, հայրենակցական միությունների ուղերձները:

Հայրենակցական կյանքը լուսաբանված է ամենատարբեր ասպեկտներով. «Հայրենի եզերներ» խորագրված բաժնի հրապարակումները վերհուշը կամրջում են ներկայիս իրողությունների հետ: Հուզական տպավորություններով Արեւմտյան Հայաստանի պատկերն է ուրվագծում Գրիգոր Զանիկյանը՝ «Նամակներ լուսահոգի մորս՝ Արեւմտահայաստանից» օրագրություն-հրապարակման մեջ:

Հանդեսի «Պատմության քառուղիներում» էջերն ընթերցողին առաջարկում են մեր պատմության սակավ հայտնի դրվագներ, մեկնաբանություններ, մոտեցումներ՝ միջազգային, միջքաղաքական հարթություններում՝ («Թուրքխորհրդային մերձեցման ակունքներում» (ըստ թուրքական աղբյուրների), «Հայերը եւ հայկական հարցը Ռուսաստանի քաղաքականության ենթատեքստում»:

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին հրետանային զորքերի հրամանատարներից կոմս Վոլցկիլցի օրագրային վկայությունները 1915-ին եղեսահայերի ինքնապաշտպանական իրադարձությունների մասին՝ քաղված գերմանական արխիվից, հանդեսին է տրամադրել գերմանաբնակ Ստեփան Թաշյանը: Գերմանացի հրամանատարի մանրամասն եւ նատուրալիստական նկարագրությունները եւս մեկ ապացույց են 1915-ի Հայոց ցեղասպանության եղելության եւ դրան Գերմանիայի հանցավոր մասնակցության մասին: «Գրավումից հետո ես ցերեկը շրջեցի քաղաքում, գրում է գերմանացի կոմսը: Քաղաքն ամենուրեք գորշ տեսք ուներ, ավերված, ամբողջովին այրված կամ դեռ վառվող տներ, իսկ տներում ու փողոցներում մասամբ կամ ամբողջովին ածխացած բազմաթիվ սպանվածներ: Հրդեհի հոտը խառնվում էր վառվող դիակների հոտին, առանց ծխախոտի այդտեղով անցնելն անհնար էր: Այս ֆանտաստիկ սեւամորուք այլանդակ դեմքերով կիսավայրենիները դեռեւս մահացած վիճակում ավելի սահմռկեցուցիչ տպավորություն էին թողնում, քան ճակատամարտում նահատակվածները»:

Ազգային ինքնության, լեզվի, կրոնի, եկեղեցու թեմաների անդրադարձների մասին կարդում ենք «Պետություն, եկեղեցի, ժողովուրդ» խորագրի ներքո: Ուշագրավ երկու երկխոսություններ է ծավալում «Բնորրանը» «Գաղութք գաղութ» բաժնում: Առաջինը ներկայացնում է գերմանական մամուլի արձագանքները Մեծ եղեռնի 90-ամյակի օրերին այս երկրում տեղադրված Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի երկու խաչքարերի առիթով: Հետաքրքրականն այն է, որ եթե մինչեւ այս իրողությունը հայերը գերմանական հրապարակումներում դիտվում էին որպես թուրքերի կողմից «անշարժ զոհված մարմին», ապա դրանից հետո՝ որպես գերմանական կյանքին ներգրավված գործող մասնակից: Ազգային տարբեր հիմնահարցերի՝ մշակութային ինքնության, ինքնաճանաչման, ինքնահաստատման մասին հետաքրքրական զրույց է ծավալվում Ժոզեֆ Ավետիսյանի եւ Գերմանիայի «Հայ մշակույթի հիմնադրամի» ատենապետուհի Էլիզ Պիզանց Կարթալի միջեւ: Հետաքրքրական է նաեւ հրեական Հոլոքոստի եւ Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի հուշարձանների տեղադրման պատմությունը: Հաջորդ հարցազրույցը երկու բրազիլահայերի՝ Օշին Մաշիշյանի եւ անանուն մի հայրենակցի հետ, անդրադարձ է գաղութի կյանքին, արմատներին վերադառնալու անհրաժեշտությանը, Հայաստանի նկատմամբ սփյուռքահայ նոր սերնդի մեջ հատկապես հետաքրքրություն առաջացնելուն, ծանոթացնելուն, սիրել տալուն, թերեւս «օր մը ուզենան» տեղափոխվել հայրենիք:

Գիտական, գրական, մշակութային, տեղեկատվական բազմաբնույթ հրապարակումներով «Բնորրանը» փորձել է ամբողջացնել հայ կյանքն իր բոլոր արտահայտություններով: Ամենաառանցքայինը հայրենակցական գաղափարի՝ գաղութից գաղութ տարածումն է, անցյալը ճանաչելով փոխել ներկա կյանքն ու վերաբերմունքը ազգային խնդիրներին, պատմությանն ու մշակույթին: Առանձին էջեր տրամադրված են պոլսահայ գրական կյանքին, ներկա են «Հայրենակցական գրադարան», «Հայրենակցական արխիվ-անդրադարձ» խորագրերը:

«Բնորրանի» հիմնադիր հրատարակիչ եւ ղեկավար խմբագիր Ժոզեֆ Ավետիսյանը նվիրյալ աշխատանք է կատարում, նախանձախնդիր՝ տեղեկությունների, մասնավորապես գիտական աղբյուրների ճշգրտությանը: Աշխատանքը խրախուսելի եւ նպատակն ազնիվ ու հայանպաստ է, մանավանդ որ ամենը արվում է սուղ պայմաններում ու սուղ միջոցներով:

ՄԵԼԻՆԵ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ՀԱՍԱՐԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՈՒՐԱՐՏԱԿԱՆ ԹԱԳԱՎՈՐՆԵՐԻ ԵՐԿՐԸ

Ուրարտուի բնակիչներն իրենց կոչում էին բիայնացիներ, Ուրարտու անունը նրանց երկրին տվել են ասորացիները, ասորական տեքստերում է հանդիպում: Բիայնա տերմինը Վանի թագավորության տերմին է եւ կա մ.թ.ա. 9-րդ դարից սկսած:

Այսօրվա երեւանցին ուրարտական Էրեբունի քաղաք-ամրոցի ժառանգորդն է, ուրարտացիների հետնորդը: Չգո՞նմ ենք արդյոք մեզ բաժին հասած պատմական հազարամյակների ժառանգորդը լինելու ծանր բեռն ու պարտավորվածությունը, գիտակցո՞ւմ ենք, թե ինչ ներկայանալի տեսք պետք է ունենա մեր քաղաքը՝ ամեն երեւանցի կենդանի վկայագիրը պետք է լինի այդպիսի անցյալի. չէ, հաստատ չենք գիտակցում, քանի որ այդպիսին լինելու համար Ե՛ւ մեր պատմությունը պետք է իմանանք, Ե՛ւ արժանի լինենք նրան:

Այս տարի լրանում են ուրարտական Էրեբունի ամրոց-քաղաքի հիմնադրման 2790 եւ «Էրեբունի» թանգարանի հիմնադրման 40-ամյակները: 1968-ի հոկտեմբերի 14-ին, երբ ժողովրդական տոնի երեւույթվ նշվեց ամրոցի հիմնադրման 2750-ամյակը, ժողովուրդը շատ սիրեց այդ տոնը, երեւանցիք ամեն տարի սկսեցին հոկտեմբերի 10-ից հետո որոշակի մի օր բարձրանալ Էրեբունի բլուրը, տոնախմբություններով նշել քաղաքի տոնը:

Մեր քաղաքին արժանի տոնին ընդառաջ՝ այցելեցինք Էրեբունի թանգարան եւ զրուցեցինք նրա տնօրեն **Ա.Ս. Փիլիպոսյանի հետ**. «Ես շատ կուզեի, որ վերականգնվեր Էրեբունի-Երեւան տոնը, որը սկսվում էր Էրեբունի ամրոցից. շեղ տոնահանդեսները հիմա տեղափոխվել են Հանրապետության հրապարակ»: Ա. Փիլիպոսյանը նախնական պայմանավորվածություն է ձեռք բերել Էրեբունի համայնքի քաղաքապետարանի հետ, ու մյուս տարի քաղաքապետարանն ու թանգարանը փորձելու են իրենց ուժերով այդ տոնը վերականգնել. «Սկզբի տարիներին լավ էր արվում, վերջին 5 տարին չի արվել: Իսկապես ուխտագնացություն էր այստեղ, ամբողջ Էրեբունի փողոցով մեկ շարված էին գինու տկեր, ճոխ տոնախմբություն էր, մարդիկ իրենց տների առջեւ խորոված էին պատրաստում, ուտելիք ու գինի հյուրասիրում, կարծես իրենց տան տոնն էր էս փողոցում. սկսվում էր Էրեբունի փողոցի ծայրից եւ ալիք-ալիք գալիս էր դեպի ամրոց, պետական այրեր էին գալիս, եւ խորհրդային, եւ հետխորհրդային մի քանի տարիներին, պարային խմբեր էին մասնակից լինում, թատերականացված ներկայացում էր ծավալվում բացօթյա՝ Արգիշտին էր գալիս մարտակառքով, այս ամբողջը անցյալի կենդանի շունչն էր ստեղծում: Հիշում եմ՝ մենք սիրված փակում էինք թանգարանի մուտքը, խումբ-խումբ էինք մարդկանց թողնում, որ կարողանային սպասարկել՝ թանգարանը նայեին եւ բարձրանային ամրոց. արդեն ժողովրդական տոն էր դարձել, բոլորը գիտեին, որ երկրի ղեկավարը պետք է լինի այստեղ, պիտի բացի տոնը, իսկ հիմա դա հրապարակում է արվում: 2790-ամյակ ենք տոնում՝ նշանակում է այստեղից պիտի տոնենք»:

Առիթը լավագույնն է՝ պարզելու թե ինչ է կատարվում «Էրեբունի» թանգարանում, ինչ գտածոներով արժանանավորվեցին այս տարի կատարված պեղումները Էրեբունի ամրոց-քաղաքի տարածքում:

Ա.Ս. Փիլիպոսյանի պատմելով՝ այս տարի համատեղ պեղումներ են կատարվել Երեբունի ամրոցի տարածքում. հայ հնագետների հետ աշխատել են ԱՄՆ-ի Բերկլի համալսարանի պրոֆեսոր Դեվիդ Ստրոնախը, ՌԴ Էրմիտաժի հնագիտական ջոկատը, հոկտեմբերին ֆրանսիացի հնագետները Լիոնից նույնպես աշխատելու են հայկական հնագիտական արշավախմբի կազմում. ֆրանսիացիները զբաղվում են ամենյան եւ անտիկ դարաշրջաններով, իսկ Էրեբունի ամրոցը զգալի դեր է ունեցել նաեւ հետուրարտական՝ ամենյան եւ անտիկ շրջանում:

Ա. Փիլիպոսյան.- Այս տարի Էրեբունի թանգարանը եւ թանգարանի արշավախումբը աշխատել են ամրոցի այն հատվածներում, որոնք մինչեւ այժմ պեղված չէին: Ի տարբերություն նախորդ տարիների՝ այս տարի թանգարանն իր ձեռքն է վերցրել բոլոր պեղումները եւ Բերկլիի համալսարանը, Էրմիտաժը եւ ֆրանսիական խումբն աշխատում են մեր արշավախմբի կազմում՝ որպես ջոկատ: Նրանք մեր հսկողության ներքո են աշխատում, մեր աշխատանքներին համահունչ, մեր առաջադրած ծրագրի սահմաններում՝ համատեղելով իրենց ծրագրերի հետ: Այս տարվա պեղումների արդյունքում Դ.Ստրոնախի հետ միասին եկանք այն եզրակացության, որ հավանաբար Վանի թագավորության անկումից հետո, Էրեբունի ամրոցի տարածքում, մինչեւ Աքեմենյան տիրապետության հաստատումը, վերակառուցումներ են կատարվել, եւ դրանք կարող են վերագրվել մ.թ.ա. 6-րդ դարի առաջին կեսին, այսինքն՝ Երվանդ Սակավակայցի ժամանակներին: Դա նշանակում է, որ Երվանդունիների իշխանության օրոք, մինչեւ Աքեմենյան գերիշխանության հաստատումը, այստեղ, ըստ ամենայնի, ինչ-որ վերակառուցումներ կատարվել են, եւ հավանաբար կապված խալդ աստծո տաճարի հետ: Այս նույն ժամանակահատվածին պիտի վերաբերեն այն կառույցները, որոնք բացվում են միջնաբերդից դուրս, բլրի արեւմտյան լանջին, դեպի Վարդաբեն տանող ճանապարհի հատվածում, դրանք ուրարտական եւ հետուրարտական ժամանակաշրջանների նյութեր են:

Թանգարանի նորությունները

Այս տարի թանգարանում բացվել է հնամարդաբանական լաբորատորիա, որտեղ մինչուրարտական, ուրարտական եւ հետուրարտական ժամանակահատվածներին վերաբերող 700-ից ավելի հնամարդաբանական նյութեր կան, Հայաստանի լավագույն մասնագետներից մեկը՝ պատմական գիտությունների թեկնածու Ռուզան Մկրտչյանը ուսումնասիրում է դրանք:

Թանգարանն ունի նաեւ վերականգնման լաբորատորիա, որտեղ մետաղի, խեցեղենի վերականգնման աշխատանքներ են կատարվում: Նախնական պայմանավորվածություն կա Էրմիտաժի հետ, 2009-ի մայիսին «Էրեբունի» թանգարանի երկու ռեստավրատորներ, որոնք պետք է զբաղվեն որմնանկարների վերականգնմամբ, մեկնելու են Սանկտ Պետերբուրգ՝ մեկ ամսով վերապատրաստվելու, որից հետո սկսելու են Էրեբունու որմնանկարների վերականգնման, ամրակայման եւ կրկնօրինակների ստեղծման աշխատանքները. «Այս տարի մենք սկսելու ենք ամրոցի վերականգնման աշխատանքները եւ շատ ուրախ եմ, որ այդ աշխատանքներն իր հսկողության տակ է պահում մշակույթի նախարարությունը եւ անձամբ նախարար Հասմիկ Պողոսյանը: Աշխատանքները որոշակի ծրագրով են սկսվել, առաջին հերթին պարիսպների հատվածներն են բարձրացվում, մուտքը դեպի ամրոց այնուհետեւ միայն կենտրոնական մուտքից կլինի եւ կվերահսկվի: Այս տարի թաղապետարանի հետ որոշել ենք մի քանի միջոցառումներ անցկացնել. նախ թաղապետարանը Էրեբունի ամրոցի արեւմտյան լանջին 4 մ երկարությամբ «2790» գրությամբ լուսատախտակ կտեղադրի, որը գիշերը Երեւանի բոլոր ծայրերից երեւալու է, երկրորդ, մենք տոնի օրը՝ հոկտեմբերի 12-ին, թանգարանի աստիճանների վրա եւ թանգարանին մերձ հրապարակում միջոցառումների ամբողջ շարք ենք կազմակերպելու: Բացի այդ՝ հոկտեմբերի 12-ին եւ 13-ին թանգարանում միջազգային գիտաժողով ենք կազմակերպելու, որին մասնակցելու են ԱՄՆ-ից, Ռուսաստանից, Վրաստանից ժամանած եւ մեր երկրի տարբեր գիտական կենտրոնների մասնագետներ: Գիտաժողովը նվիրված է լինելու թանգարանի 40-ամյակին եւ Բորիս Պիոտրովսկու 100-ամյա հոբելյանին»:

Վերադառնալով պեղումներին

Այս տարվա ընթացքում պեղումներ են կատարվել եւ միջնաբերդում, եւ քաղաքային թաղամասերում, եւ միջնաբերդի դիմացի բլրին՝ արեւելյան հատվածում: Մինչ պեղումներն սկսելը՝ երկրաֆիզիկական եւ էլեկտրամագնիսական հետազոտություններ էին կատարվել այդ հատվածում եւ հետաքրքրական տվյալներ կային: Պեղումների ընթացքում որոշակի նոր տվյալներ ստացվեցին. արձանագրություններում փաստված է, որ Արգիշտի Առաջինը եւ Ռուսա Երկրորդն այստեղ վերակառուցումներ են կատարել: Արշավախումբը փորձեց ճշտել, թե ինչպիսի՞ հնագիտական հորիզոնների հետ են դրանք առնչվում: Հատկապես պեղումներ կատարվեցին խալդ աստծո տաճարի դիմաց ընկած կարասային սենյակում, որտեղ վերջին պեղումները եղել էին 1968 թվականին. ինչո՞ւ հատկապես այստեղ, որովհետեւ այս մեծ տարածքի կենտրոնում 4 բազալտե հիմնասյուներ կան, որոնց վրա արձանագրված է. «Այս պալատը (կամ դահլիճը) Արգիշտին կառուցեց»: Դահլիճը հետաքրքիր է, բայց դահլիճում կարասային սենյակ չի լինում, նշանակում է Արգիշտիից հետո ինչ-որ մեկը վերակառուցումներ է արել այստեղ: Ովքե՞ր են դա արել՝ պարզելու համար մի քանի տեղ հնագետները երեք չորսի վրա փոսորակներ տեղադրեցին, իջան մինչեւ հատակը 1,5 մետր եւս, բացեցին պարսպաշարը, պատերի շարվածքը: Հայտնաբերվեցին որմնանկարների փոքրիկ բեկորներ, որոնք 1968 թվականից այդպես էլ մնացել էին այդ հատվածում եւ պեղված չէին: Հասնելով մինչեւ կարասների ստորին մասը՝ որոշ կարասների հատակում բացվեցին մանր եղջերավոր կենդանիների եւ ուրարտական թասերի բեկորներ. այդ մասը փաստորեն չէր պեղվել, եւ պարզվեց մի կարեւոր հանգամանք: Ներկայիս կարասային սենյակ կոչվածը մոտ մեկուկես մետր ավելի խորն է եղել, նրա պատերին (պատերի որոշ հատվածներում անցքեր կան գամերի համար) կախված են եղել կամ վահաններ, կամ գորգեր. տարածքն, իրոք, Արգիշտի Առաջինի օրոք եղել է դահլիճ, եւ դա այն հատվածն է, որտեղ կենտրոնացած են եղել որմնանկարների զգալի մասը, հատկապես տեսարաններ. այսինքն Արգիշտի Առաջինի կառույցը նրա իշխանությունից հետո որդու՝ Սարդուր Երկրորդի, թոռան՝ Ռուսա Առաջինի, ապա եւ Արգիշտի Երկրորդի եւ Ռուսա Երկրորդի օրոք մեծ փոփոխություններ է կրել, ամրոցում բազմաթիվ վերակառուցումներ են կատարվել:

Գտնված նյութերը մաքրման փուլում են, նյութերի մի մասը հանձնված է քիմիական փորձաքննության եւ վերականգնման աշխատանքներ են կատարվում, որոնց արդյունքում այդ բոլորը առավել առարկայական վերլուծության կենթարկվի. «Ընդամենն այս տարի աշխատել ենք մեկուկես ամիս, բայց այդ մեկուկես ամսվա արդյունքները կարեւոր ու լուրջ են եւ թույլ են տալիս խոսելու իսկապես մեծ քաղաքի մասին, որը կառուցվել է մ.թ.ա. 8-րդ դարի առաջին կեսին եւ պարբերաբար շարունակել է իր գոյությունը մինչեւ մեր օրերը», ասում է Ա. Փիլիպոսյանը:

Միասնական արշավախմբերի իմաստը

Դեվիդ Ստրոնախին հետաքրքրում է, թե հետուրարտական շրջանում ինչպիսի ճակատագիր են ունեցել ուրարտացիների կառուցած քաղաքները Վանի թագավորության շրջանում, որովհետեւ Կարմիր բլուրն ըստ էության քանդվել է եւ այլեւս չի վերակառուցվել, Ցոլուկ Թեփեն, Վանա լճի արեւելյան ափի Այանիսը քանդվել ու չեն վերակառուցվել, բայց Էրեբունին շարունակել է իր գոյությունը նաեւ Վանի թագավորության անկումից հետո, կարծիք կա, որ նաեւ եղել է Աքեմենյան 13-րդ սատրապության կենտրոն: Էրեբունիում հայտնաբերվել են հրաշալի արծաթե-եղջյուր գավաթներ. հիմա որքանո՞վ է ճիշտ սատրապության կենտրոն լինելը, եւ Վանի թագավորության անկումից հետո այդ 50-60-ամյա ժամանակահատվածը ի՞նչ փոփոխություններ է կատարել այս քաղաքում՝ Բերկլիի համալսարանի պրոֆեսորին սա հետաքրքրում է:

Ուրարտական թագավորության կենտրոնը Վանի ավազանում էր, բոլոր թվերը կարելի է այնտեղ ճշտել, իսկ մեզ մոտ կարելի է խոսել այն շինարարությունների եւ տարածքային միացումների հետ, որոնք կապված են Մենուայի եւ Արգիշտիի հետ եւ նրանցից հետո:

Կարմիր բլուրը եղել է մինչուրարտական բնակատեղի, որը հավանաբար մ.թ.ա 15-րդ դարից գոյություն ուներ, եւ որտեղ կյանքը շարունակվել է մինչեւ մեր թվականությունից առաջ 7-րդ դարը: Բնակավայրը դադարել է գոյություն ունենալուց, երբ Ռուսա Երկրորդը հենց այդ հատվածում, Հրազդանի ափին կառուցեց Թեյշեբաինի քաղաք-ամրոցը (Կարմիր բլուր): Որոշ հնագիտական իրեր, որոնք պատկանել են մինչուրարտական շրջանին, հայտնաբերվել են Կարմիր բլուրում, դա նշանակում է, որ քաղաքի կառուցումից հետո ինչ-որ արժեքներ մինչուրարտական քաղաքից կամ բնակավայրից տեղափոխվել են Կարմիր Բլուր:

Էրեբունին ամենակարեւոր քաղաքներից մեկն էր Վանի թագավորության հյուսիսային շրջանների մեջ՝ հավանաբար կառավարչի նստավայրն էր, եւ իր զբաղեցրած ծավալներով ու դիրքով, անկասկած, մարդաշատ քաղաքներից մեկն է եղել:

Քաղաքը շարունակվել է դեպի հարավ, թանգարանի բլրից դեպի Արեւի թաղերը, դեպի դիմացի բլուրը, որտեղից էլ գտնվել են վերը նշված արժեքներ եւ եղջերե գավաթները, որոնք աքեմենյան շրջանին են վերաբերում: Բայց թե ի՞նչ ուղղությամբ է ծավալվել քաղաքը՝ Ա. Փիլիպոսյանի կարծիքով դժվար է ասել, դամբարանադաշտի մի մասը գտնվել է այնտեղ, որտեղ հիմա Էրեբունի հրապարակն է. դեպի Վարդաբեն գնացող ճանապարհին անցած դարի 50-ականներին դարձյալ դամբարաններ են բացել՝ ուրարտական նյութով: Փիլիպոսյանը երկու դամբարան 1980-ական թվականներին պեղել է «Հատոցանորմալ» գործարանի տարածքում. «Հիմա շատ հետաքրքրական սենյակ ենք բացում, որը պետք է որ վերաբերի Վանի թագավորության շրջանին, եւ այդ սենյակը գտնվում է միջնաբերդի

Շարունակությունը՝ էջ 9

ԽԱՉԱՏՈՒՐ ԴԱՎԱՅԱՆ

ՌՈՒՍԱՍՏԱՆՅԱՆ ԱՐԴԻ ԲԻԶՆԵՍԻ ԼԵԼԵՎԱՎՈՐ ՀԱՅԵՐԸ

«ՄՈՆԱՐԽԸ» ԵՎ «ՄՈՆԱՐԽԻՍՏՆԵՐԸ»

Մատենադարանի նոր շենքը կառուցվում է Սերգեյ Համբարձումյանի ֆինանսավորմամբ

«Մոնարխ» բառը ռուսերենից թարգմանաբար նշանակում է միապետ, բայց սույն ակնարկը տիրակալի վերաբերյալ չէ, խոսքը շինարարական կոնցեռնի մասին է: Կազմակերպության անվանման ռուսերեն գրելաձևն է «Монолитная архитектура», ինչը հարավում է եւ նշանակում է «МонАрх»՝ «միաձույլ ճարտարապետություն»: Թեպետ ակնհայտ է, որ բարեհունչ լինելուց բացի, այդպիսի անվանմամբ ընկերությունների խումբը Ռուսաստանի շինարարական շուկայում առաջնության հավակնություն ունի: «МонАрх»-ն աչքի է ընկնում մի քանի առանձնահատկություններով՝ գործում է սեփական գիտական մշակումների հենքի վրա, պրոֆեսիոնալ է, երիտասարդ եւ Ռուսաստանի ամենահայկական շինարարական կազմակերպությունն է:

Կոնցեռնն իր ծնունդով պարտական է մեկ մարդու՝ Սերգեյ Ալեքսանդրի Համբարձումյանին: Մի մարդու, ում կյանքի պատմությունը, ճակատագիրը հայի համար սովորական է ու տիպական:

Կիրովաբադցի հայրը մանկուց սովորեց տակառագործություն, դարբնություն, ատաղձագործություն, հյուսնություն, 14 տարեկանից սկսեց ինքնուրույն աշխատել, տարիների ընթացքում լավ արհեստավորի համբավ ձեռք բերեց ու սեփական տուն կառուցեց: Ամուսնացավ քահանայի աղջիկ Բավականի հետ եւ ունեցավ երեք զավակ՝ Գետրգ, Եվգենիա, Էմմա: Երկրորդ համաշխարհային պատերազմը սկսվելուց պես 43-ամյա Ալեքսանդր Համբարձումյանը զորակոչվեց: 1942 թ. նրա բանակն ընկավ շրջապատման մեջ, ու երեք երեխաների հայրը հայտնվեց գերմանական համակենտրոնացման ճամբարներում: 1945թ. ազատագրեցին ամերիկացիները, որոնք առաջարկեցին մեկնել ԱՄՆ, բայց հրաժարվեց՝ ընտանիքը թողնել չցանկացավ: Սակայն տունդարձի ճամփան երկարեց. վերադառնալուն պես աքսորվեց Յարոսլավլի մարզի Բորիսոգլեբսկի շրջան, բայց բախտը բերեց՝ ինն ամիս անց ազատվեց ու հասավ տուն: Այստեղ ծնվեցին Զուլիետան եւ 1952-ին վերջին զավակը՝ Սերգեյը:

Երեխաներն առանձնակի հակում ունեին ուսման հանդեպ, եւ ի վերջո բոլոր հինգն էլ բարձրագույն կրթություն ստացան: Առաջինը Գետրգն էր, որն ավարտեց Երեւանի պետհամալսարանի երկրաբանական ֆակուլտետը եւ նշանակում ստացավ Ղափանում: Դա պատճառ դարձավ, որ ընտանիքը Կիրովաբադից տեղափոխվի լեռնարդյունաբերական այդ քաղաք: Այստեղ բազմանդամ ընտանիքը 8 տարի ապրեց երկսենյականոց բնակարանում:

Տեղի ռուսական դպրոցի շրջանավարտ Սերգեյն ընդունվեց եւ 1975-ին ավարտեց Երեւանի պոլիտեխնիկական ինստիտուտի շինարարական ֆակուլտետը: Երկու տարի աշխատեց «Հայտրանսշին» տրեստում որպես ինժեներ, ապա զորակոչվեց բանակ ու մասնակցեց Սմոլենսկի ատոմակայանի առաջին բլոկի կառուցմանը: Զորացրվելուց հետո ամուսնացավ ուկրաինուհի Լիդիայի հետ ու վերադարձավ հայրենիք: Սակայն ուսումը շարունակելու ձգտումը մեծ էր, եւ 1981-ին ընդունվեց Մոսկվայի ինժեներաշինարարական ինստիտուտի առկա ասպիրանտուրա, պաշտպանեց թեկնածուական ատենախոսություն եւ 1986-ին վերադարձավ Հայաստան: Որոշ ժամանակ աշխատեց որպես «Հայտրանսշին» տրեստի գլխավոր ինժեների տեղակալ, ապա զբաղեցրեց պոլիտեխնիկական ինստիտուտի դոցենտի թափուր պաշտոնը, իսկ երբ հիմնվեց ճարտարապետաշինարարական ինստիտուտը՝ նշանակվեց այդ նորաստեղծ բուհի պրոռեկտոր:

Թվում էր, ամեն ինչ ընթանում է բնականոն հունով, սակայն ԽՍՀՄ փլուզումը, ղարաբաղյան պատերազմը, շրջափակումը, Հայաստանի տնտեսական անկումը ի ցույց դրեցին, որ նորանկախ պետությունը շինարարի կարիք չունի: Դա պատճառ դարձավ, որ Ս. Համբարձումյանը 1994-ին ընտանյոք տեղափոխվի Մոսկվա՝ շատ լավ հասկանալով, որ ամեն ինչ սկսելու է զրոյից:

Նույն թվականին նա հիմնեց իր առաջին՝ «АСМИ» («Архитектура, строительство, менеджмент, искусство») մասնավոր շինարարական ֆիրման եւ հաջողությամբ վերակառուցեց Դմիտրովյան նրբանցքում գտնվող օֆիսային շենքը: Ի սկզբանե Ս.Համբարձումյանը նախանշեց ֆիրմայի մասնագիտացումը՝ միաձույլ տնաշինություն: Նա մշակեց երկաթբետոնե կառուցվածքների ինքնատիպ տեխնոլոգիա, ինչը հնարավորություն էր տալիս մեկ ամսում կառուցել 10 հարկ՝ բարձր որակով: Մոսկվայում շինարարության բուռն աճի տեմպերին հենց նման բան էր պետք, եւ հետեւեցին նորանոր պատվերներ: Աշխատանքի կազմակերպման առումով դա պահանջում էր նոր մտեցում, եւ Ս. Համբարձումյանը 1999-ին ստեղծեց եւս մեկ ընկերություն՝ «МонАрх и с» («Монолитная архитектура и строительство»), որի գլխավոր տնօրեն նշանակեց դափանցի իր դպրոցական ընկերոջը՝ նույնպես պոլիտեխնիկականը ավարտած եւ 1997-ից «АСМИ»-ի գլխավոր ճարտարագետ Արմեն Ղուկասյանին:

Շուտով Ս. Համբարձումյանին հրավիրում են Ռուսաստանի շինարարական հսկաներից մեկում՝ «Գլավմոսստրոյում» զբաղեցնելու առաջին փոխնախագահի պաշտոնը (ի դեպ, այդ ընկերության գլխավոր տնօրենը մեր մեկ այլ ազգակիցն է՝ Արթուր Մարգարյանը): Դրդապատճառն այն էր, որ կազմակերպությունը մտադիր էր շինարարության ծավալների 40-50%-ն իրականացնել միաձույլ եղանակով, իսկ դա համար պետք էր լավագույն մասնագետը: «Գլավմոսստրոյում» աշխատելը նշանակում էր մշտապես գտնվել մայրաքաղաքի ղեկավարության ուշադրության ծիրում, եւ պատահական չէ, որ 2003-ին Ս. Համբարձումյանը նշանակվեց Մոսկվայի քաղաքաշինական քաղաքականության, զարգացման ու վերակառուցման դեպարտամենտի ղեկավարի տեղակալ:

Սակայն հենց նույն 2003-ին Ս. Համբարձումյանը հիմնեց «МонАрх» կոնցեռնը, որի տնօրենների խորհրդի նախագահ նշանակեց իր ուսանողական ընկերոջը՝ ՀՀ քաղաքաշինության նախկին նախարար, Շիրակի նախկին մարզպետ Ֆելիքս Փիրումյանին: 2007-ին Ս. Համբարձումյանը թողեց պետական ծառայությունը, վերադարձավ «МонАрх», իսկ մեկ տարի անց Ֆ. Փիրումյանը տուն դարձավ ու նշանակվեց ՀՀ նախագահի խորհրդական:

Ինչ է իրենից ներկայացնում «МонАрх»-ը եւ ինչո՞ւ ենք մենք այն անվանում ամենահայկական շինարարական կազմակերպություն: Կոնցեռնը բաղկացած է 12 ընկերություններից, որոնցից 7-ի գլխավոր տնօրենները հայեր են: Դրանք են՝ «МонАрх и С» (գլխավոր տնօրեն՝ Արմեն Ղուկասյան), «МонАрх и О» («Монолитная архитектура и опалубка», գլխավոր տնօրեն՝ Աննա Մարտիրոսյան), «МонАрх и М» («Монолитная архитектура и механизация», գլխավոր տնօրեն՝ Սերգեյ Համբարձումյանի եղբորորդի Սամվել Համբարձումյան), «МонАрх и Б» («Монолитная архитектура и бетон», գլխավոր տնօրեն՝ Ասոն Հովհաննիսյան), «Недвижимость групп» (գլխավոր տնօրեն՝ Արմեն Իսրայելյան), «МонАрх Сервис» (գլխավոր տնօրեն՝ ՌԴ-ում ՀՀ նախկին դեսպան Սուրեն Սահակյան), «МонАрх и К» (գլխավոր տնօրեն՝ Մարինե Շահյան): Մյուս հինգը ղեկավարում են ռուսներ. «АСМИ» (գլխավոր տնօրեն՝ Է. Գորոդնիչի), «МонАрх и Р» («Монолитная архитектура и ремонт», գլխավոր տնօրեն՝ Մ. Բորիսով), «МонАрх ТТ» («Монолитная архитектура, техника и технология», գլխավոր տնօրեն՝ Ա. Մոնոսով), «ЭВСС» («Энерговысотспецстрой», գլխավոր տնօրեն՝ Վ.Բրտնի), «МонАрх АМЦ» («Монолитная архитектура-архитектурная мастерская Цыцина», գլխավոր տնօրեն՝ Ս. Ցիցին):

Մենք դիտավորյալ չենք խոսում կոնցեռնի տեխնիկատնտեսական ցուցանիշների, կառուցած օբյեկտների, ստացած պարգեւների ու մրցանակների մասին, որովհետեւ դրանք ընթերցողական լայն շրջանակներին դժվար թե որեւէ բան ասեն: Հիշենք միայն մեկ բան. 2004թ. տեղի ունեցավ Բեսլանի ողբերգությունը՝ դպրոցում իրականացված ահաբեկչության հետեւանքով զոհվեցին բազմաթիվ անմեղ մարդիկ: Ընդամենը 8 ամսվա ընթացքում «МонАрх и С» ընկերությունը հյուսիսսայական այդ քաղաքում կառուցեց երկու շենք-ամբարձիչ դպրոց:

Այսօր «МонАрх» կոնցեռնի տնօրենների խորհրդի նախագահ Սերգեյ Համբարձումյանը Ռուսաստանի ամենաանվանի շինարարներից է: Նա տեխնիկական գիտությունների դոկտոր է, ներդրումային ոլորտի ղեկավար աշխատողների ու մասնագետների պրոֆեսիոնալ վերապատրաստման եւ որակավորման բարձրացման պետական ակադեմիայի (ГАСИС) պրոֆեսոր, այդ բուհի «Միաձույլ տնաշինություն» ամբիոնի վարիչ: Արժանացել է «ՌԴ ընդհանուր կրթության պատվավոր աշխատող», «Մոսկվայի պատվավոր շինարար», «Հյուսիսային Օսիայի Հանրապետության՝ Ալանիայի արդյունաբերության վաստակավոր աշխատող» կոչումների, «Տարվա ռուսաստանցի-2004» ազգային մրցանակի դափնեկիր է:

Երբ այս տարվա հունիսին ՀՀ նախագահ Ս. Սարգսյանը արտասահմանում բնակվող հայ ձեռնարկատերերին կոչ հղեց միասնաբար շենացնելու Հայաստանը, առաջիններից մեկը Սերգեյ Համբարձումյանն արձագանքեց՝ պատրաստակամություն հայտնելով 10 մլն դոլարի ներդրում կատարել: Եվ արդեն սեպտեմբերին նրա ֆինանսավորմամբ սկսվեց Մատենադարանի նոր համալիրի շինարարությունը՝ Արթուր Մեսչյանի նախագծով:

Ի դեպ, Ս. Համբարձումյանը Մոսկվայում կառուցվող հայ եկեղեցական հոյակերտ համալիրի մեծասիրտ բարերարներից է. նա իր վրա է վերցրել Մայր տաճարի բետոնային աշխատանքների ողջ ծավալը:

Արդարամիտ ղեկավարի ու հայրենանվեր կապիտալիստի համագործակցությամբ կարող է Մատենադարան կառուցվել... ■

Բ էջից

պարիսպներից դուրս, Վարդաշեն գնացող ճանապարհի արեւմտյան լանջին, սա ցույց է տալիս, որ քաղաքը պարբերաբար մեծացել է, ավելացել են բնակելի թաղամասերի տարածքները: Հնարավոր է, որ մենք եւս մեկ պարսպի հանդիպենք, որը դարձյալ օղակում է այս բլուրը՝ բնակչության աճի հետ միասին փոխվել են միջնաբերդի, քաղաքային բնակչության չափերը, եւ այս բոլորը պեղումների ընթացքում կպարզվի. մեր ունեցած գումարները շատ չեն, այս տարի 1,5 մլն դրամի չափով ենք պեղումներ կատարել, եւ այդ դրամի չափով էլ եզրակացություններ են արվում:

Մենք շատ կարեւոր նպատակ ունենք՝ այն աշխատանքները, որ կատարվում են թանգարանում՝ հնագիտական, հնամարդաբանական նյութեր, վերականգնման աշխատանքների արդյունք՝ մի նպատակ ունեն, որ եկող կամ հաջորդ տարի թանգարանին կից ունենանք ուրարտագիտական կնտրոն: Սա այն նպատակն է, որի համար ես եկել եմ թանգարան», ասում է Ա. Փիլիպոսյանը:

ՈՒՐԱՐՏԱԿԱՆ ԹԱԳԱՎՈՐՆԵՐԻ ՇՈՒՆՉԸ

Այդպիսի կենտրոնի շենք կառուցելու համար, որի հիմքերն, ի դեպ, փորված են, 0,5-1 մլն դոլար գումար է պահանջվում, եթե դա լինի, 10 տարի հետո մեր ժողովրդի պատմության այս լավագույն շրջանը՝ Վանի թագավորության հասվածը կներկայացնենք նաեւ հայերս, ոչ թե միայն թուրքերը. վերջիններս շատ լուրջ աշխատում են այս ուղղությամբ, իրենց պետության արեւելյան հասվածն է, հրաշալի հնագիտական հուշարձանները պեղվում են, դրանցով հետաքրքրվում է Եվրոպան, եւ թուրքերն էլ 10-ից ավելի մասնագետներ ունեն, որոնք շատ լավ սեղմագիր են կարդում, զբաղվում են Ուրարտուի հնագիտությամբ. եթե մենք այս կենտրոնը չստեղծենք եւ մասնագետներին այստեղ չկենտրոնացնենք, մի 20-25 տարի հետո ուրարտագիտությունն իրենք կներկայացնեն:

Ա. Փիլիպոսյանը 2006 եւ 2007 թվականներին եղել է Արեւմտյան Հայաստանում, շրջել բոլոր հուշարձաններով, տեսել՝ ինչպե՞ս են պեղում, ինչպես են հրատարակում նյութը: Գրքերը ներկայացնում են բավական բարձր՝ եվրոպական մակարդակով, համագործակցում են եվրոպական մասնագետների հետ, արդյունքում՝ ստեղծում են ուրարտագիտության բազա:

Վերջին ուրարտացիները ե՞րբ են լքել Երեբունին

Ա. Փիլիպոսյան.- *«Չեմ կարող ասել, որովհետեւ ի տարբերություն մյուս ուրարտական հուշարձանների՝ Երեբունին չի կործանվել, մ.թ.ա. 6-րդ դարի սկզբներին կորցրել է իր դերը՝ ամբողջ հարստությունը Ռուսա երկրորդը տեղափոխել է Կարմիր բլուր, որ դարձրեց իր հենակետը, բայց Երեբունի քաղաքը մնաց: Կորցրեց իր դերը, նշանակությունը՝ մինչեւ Երվանդունիների ժամանակաշրջանը, երբ այստեղ նորից վերակառուցումներ արվեցին, դարձյալ հենակետեր դարձան Երեբունին, Արմավիրը եւ այլն: Բնակավայր այստեղ միշտ եղել է՝ ուշեմենյան շրջանում, անտիկ դարաշրջանում, նաեւ՝ միջնադարյան բնակավայրի հետքեր կան, որոնք խոսում են այն մասին, որ այստեղ ապրել են: Իսկ թե ե՞րբ է լքվել՝ դժվար է ասել. մ.թ.ա. 8-րդ դարից մինչեւ առաջին դար ապրել են, հռոմեական շրջանի դրամներ ունենք այստեղից գտնված: Թե ինչպե՞ս է բնակավայրը գոյատեւել մեր թվականության առաջին դարից մինչեւ վեցերորդ դարը, երբ Երեւանը առաջին անգամ հիշատակվում է տեքստերում, դժվար է ասել, բայց որ գոյատեւել է՝ դրանում կասկած չկա: 607 թվականի եկեղեցական ժողովներից մեկում հիշատակվում է Երեւանի վարդապետներից մեկը՝ որպես քաղաքի հոգեւոր ներկայացուցիչ»:* ■

Դիտարկումներ

Վրացական ազգայնականությունը վրաց-ռուսական հակամարտության համատեքստում

Այս տարվա օգոստոսի 8-ից 12-ն ընթացող վրաց-օսական պատերազմը նոր իրադրություն ստեղծեց ոչ միայն ափխազիում, տարածաշրջանում եւ մեր հանրապետությունում, այլեւ հայ համայնքներում, եւ մասնավորապես՝ թիֆլիսահայ համայնքում: Համայնքը փաստացի հայտնվեց պատերազմական թոհուբոհի թեժ կետերից մեկում՝ պատերազմող կողմերից մեկի մայրաքաղաքում: Մայրաքաղաքն այն սոցիո-մշակութային միջավայրն է, որտեղ ձեւավորվում է պետության քաղաքական վարքագիծը, ընդունվում են երկրի համար կարեւորագույն ճակատագրական որոշումները, իրականացվում է զանգվածների՝ էթնիկ կամ քաղաքացիական սկզբունքով մոբիլիզացումը: Այդ օրերին Վրաստանի մայրաքաղաքը դարձավ պետական ազգայնականության խմորման օջախ՝ յուրօրինակ եռացող կաթսա, որն ի վիճակի էր միախառնել եւ միաձուլել ներսում հայտնված իրարից տարբերվող բազմաթիվ ու բազմաբեւեռ տարրեր՝ վերածելով այն միաձույլ եւ ամբողջական զանգվածի:

Թեպետ այսօր բազմաթիվ վերլուծաբաններ խոսում են Վրաստանի՝ որպես պետական ամբողջական միավորի եթե ոչ վերացման, գոնե թուլացման մասին, այնուամենայնիվ, քաղաքական առավել տեսանելի ու պարզ գործընթացներին զուգահեռ ընթանում են բոլորովին հակառակ ուղղություն ու նշանակետ ունեցող էթնոհոգեբանական ուշագրավ զարգացումներ: Դրանք պետք է որ առաջին հերթին հետաքրքրեն մեզ՝ հայերիս, քանի որ Վրաստանը տարածաշրջանի կարեւորագույն պետություններից է, մեր անմիջական եւ միակ հրիսոնյա հարեւանը, երկիր, որտեղ ապրում են մեր հայրենակիցները՝ իրենց բազմաթիվ եւ բազմաբնույթ չլուծված խնդիրներով:

Նշված էթնոհոգեբանական գործընթացներն առավել տեսանելի են հենց մայրաքաղաք Թբիլիսիում, որտեղ ավանդաբար, ինչպես անցյալում, այնպես էլ հիմա, խմորվում ու նոր լիցքերով հարստանում է վրացական ազգայնականությունը, խթանելով պետական-ազգային շինարարության եւ էթնոգենեզի մշակական գործընթացները:

Այսպիսով, չնայած այս պատերազմում ունեցած ռազմական պարտությանը, զգալի մարդկային ու նյութական կորուստներին, նաեւ փաստացի տարածքային կորուստներին, Վրաստանն ու վրաց ժողովուրդը ստացան ազգային համախմբման մի հզոր ազդակ, որն իր արտահայտումն է գտնում օր-օրի ակտիվացող հակառուսականությամբ: Ինչպես նշում է Հ. Մարությանը՝ «Հետազոտությունները ցույց են տալիս, թե որքան մեծ նշանակություն կարող է ունենալ «թշնամու» կերպարն ազգային ինքնագիտակցության ձեւավորման գործընթացներում: Հակամարտությունը եւ «թշնամու»՝ իրական կամ մտացածին առկայությունը դառնում են ազգային համախմբման խթանիչ»: Իրավամբ, այսօր Թբիլիսիի փողոցներում կարելի է տեսնել պատերին փակցված, նաեւ մայթեզրերին տեղադրված մեծ գովազդային հոլովակների տեսքով բազմաթիվ գունավոր պաստառներ՝ հակառուսական ուղղվածությամբ, որտեղ ռուսները ներկայացված են ագրեսորի անմարդկային կերպարանքներով, իսկ վրացիները՝ անմեղ զոհերի: Դրանք պատրաստված են վրացիներին յուրահատուկ ստեղծագործական բարձր արվեստով եւ բավական ազդեցիկ ու տպավորիչ են:

Երբ տարիներ առաջ իմ վրացի զուգակիցը վրդովված ինձ հարցրեց. «Ինչո՞ւ դուք՝ հայերդ կարող եք թուրքերին այդքան չսիրել, իսկ մենք՝ վրացիներս չենք կարող չսիրել ռուսներին», ես անկեղծ զարմացա, քանի որ պատմությունից գոնե ինձ հայտնի չէր ռուսների իրականացրած վրացիների ցեղասպանության մասին որեւէ պատմական հիշատակում: Կարծես թե անհամեմատելի էին գոնե ինձ՝ հայազգի հետազոտողիս համար, այս երկու միջէթնիկ հակակրանքները:

Բայց հետագայում այս խնդիրների շուրջ առավել մասնագիտանալով, եկա այն եզրակացության, որ ազգակերտման անհրաժեշտ գործոններից մեկը՝ «թշնամու» կերպարը, որպես կանոն, պայմանավորված է ոչ միայն պատմական անցյալով ու միջէթնիկ հարաբերություններում տեղ գտած ողբերգական էջերով, այլեւ առավելապես այդ պատմական անցյալի մասին հասարակության մեջ կոլեկտիվ հիշողության կոնստրուկցիայի մակարդակով:

Եթե համեմատենք հայկական ազգայնականության ավանդական հակաթուրքականությունը այս փուլում ներկայումս օր-օրի ակտիվացող վրացական ազգայնականության հակառուսականության հետ, արդա, անկասկած, առաջինը զիջում է երկրորդին թե՛ իր խորությամբ, թե՛ ակտիվությամբ, թե՛ դրսեւորման եղանակներով, թե՛ էթնոմոբիլիզացիոն ներուժով: Եվ դա այն դեպքում, երբ պատմական անցյալում ռուսների կողմից վրացիների զանգվածային տեղահանություն իրենց պատմական հայրենիքից կամ ցեղասպանություն չի իրականացվել, այլ փոխարենը՝ սկսած 1801թ.-ից ռուսական կայսրությունը նպաստել է Թիֆլիսի ու շրջակա տարածքների զարգացմանն ու բարեկարգմանը՝ որպես նվաճված Կովկասի մայրաքաղաք, իսկ 1844-ից՝ արդեն որպես փոխարքայության նստավայր, Կովկասի փոխարքաների (հատկապես՝ Մ.Վորոնցովի) վրացամետ քաղաքականությունը նպաստել է վրաց իշխանների դիրքերի ամրապնդմանը՝ որպես ցարիզմի սոցիալական հենարան, ընդ որում՝ ի վնաս նոր ձեւավորվող հայ բուրժուազիայի դիրքերի: Այնուհետեւ սոցիալիստական հեղափոխությունից հետո խորհրդային Ռուսաստանը աջակցել է Վրաստանի սոցիալիստական հանրապետության տարածքային ձեռքբերումներին՝ նաեւ ի հաշիվ հայերի պատմական հայրենիքի տարածքների:

Ընդհանրապես խորհրդային տարիներին Մոսկվյան քաղաքականությունը զգալի ծառայություններ է մատուցել վրացական ազգայնական նախագծերին. այսպես, չնայած 1921թ. գարնանը Աբխազիան հռչակվել էր անկախ խորհրդային հանրապետություն, որտեղ պետական լեզուն ռուսերենն էր, իսկ Վրաստանի հետ հաստատվել էին պայմանագրային հարաբերություններ, այնուամենայնիվ, 1931թ. փետրվարին Ի.Ստալինի միջամտության արդյունքում Աբխազիայի ինքնիշխանությունը վերացավ, եւ այն դարձավ ինքնավար հանրապետություն Վրաստանի կազմում: Աբխազիայի կարգավիճակը իջեցվեց, այնուհետեւ 1937 թ., կորցնելով իր պետական խորհրդանիշերը՝ դրոշն ու զինանշանը, ստիպված եղավ կիսառել Վրացական ԽՍՀ-ի խորհրդանիշերը: Նմանատիպ զարգացումներ եղան Հարավային Օսիայի դեպքում, որը 1922 թ. հռչակվեց ինքնավար մարզ՝ նորից Վրաստանի կազմում, այսպիսով ձեռք բերելով էլ ավելի ցածր կարգավիճակ, քան հետագայում ունեցավ Աբխազիան:

Խորհրդային տարիներին Կրեմլի իշխանության կողմից վրացական ազգայնականությանը մատուցած ծառայությունները չսահմանափակվեցին միայն տարածքային ձեռքբերումներով, այլ տարածվեցին նաեւ պատմագիտական էխպանսիոն ծրագրերի վրա: Դրանց վառ արտացոլումներն են վրաց պատմության դասագրքերը. վրացական պատմագիտական թեզերը առաջ հավանության էին արժանանում կենտրոնի կողմից, ինչը չի կարելի ասել մյուս ազգերի նկատմամբ կենտրոնի որդեգրած քաղաքականության մասին: Ժամանակակից հայտնի հետազոտող Վ.Շնիրելմանը, մանրամասն նկարագրելով վրացական պատմագիտական մտքի կոնստրուկտիվիստական դեգերումները, նշում է. «Այն, ինչ այդ տարիներին (իմա՝ Ստալինյան) թույլ էր տրվում վրաց եւ ռուս պատմաբաններին, ոչ մի այլ ազգ իրեն նման բան թույլ տալ չէր կարող»: Բանն այն է, որ պատմության դասագրքերն այդ տարիներին խիստ գաղափարության էին ենթարկվում համապատասխան մարմինների կողմից, եւ այս կամ այն ազգի պատմական վաղ անցյալի մասին պատմաբանների հիպոթեզները թեմ է համապատասխանեին պետական քաղաքականությանը: 2-րդ համաշխարհային պատերազմից հետո Ի.Ստալինը, որպես կարծրային ձեռքբերումներ ունենալով արեւմուտքում, նպատակ դրեց նաեւ տարածքներ ձեռք բերել հարավում՝ Թուրքիայից, մասնավորապես՝ Տրապիզոնից մինչեւ Էրզրում ընկած հատվածը: Այդ տարիներին նշված տարածքը հռչակվեց «Հարավային Վրաստան» եւ «վրաց մշակույթի բնօրան»: ԽՍՀՄ տարածքային նկրտումներն արդարացնելու նպատակով լայնածավալ հրապարակումներ եղան մամուլում, որոնք կոչված էին ապացուցել այդ տարածքների իբր վրացական պատկանելությունը: Բայց խորհրդային Միությանը չհաջողվեց ի հաշիվ Թուրքիայի եւ հօգուտ Վրաստանի լայնացնել իր հարավային սահմանը:

Այնպես որ տարբեր ժամանակներում ռուսական քաղաքականության շնորհիվ վրացական ազգայնականությունը որպես կիսակիսորեն բավարարել է իր տարածքային նկրտումները Կովկասում եւ հարստացրել վրացական ազգայնականության կայսերական բաղադրիչը:

ԹԱՄԱՐԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ
Պատմական գիտությունների թեկնածու

ԹԻՖԼԻՍԱՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԸ ՎՐԱՇԱԿԱՆ ԱԶԳԱՅՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՏԻՎԱՑՄԱՆ ՓՈՒԼՈՒՄ

Օբյեկտիվության համար անհրաժեշտ է նշել, որ ռուսական քաղաքական էլիտան, տարբեր ժամանակներում իրականացնելով վրացամետ էթնոքաղաքական ծրագրեր, անշուշտ հետաքրքրել է իր քաղաքական շահերը: Անհրաժեշտ էր նվաճված տարածքներում ունենալ լոյալ եւ հնարավորին չափով հակաթուրքական տրամադրված բնակչություն:

Բայց այսօր վրացական ազգայնական էլիտայի կողմից թուրքական վտանգի գիտակցությունը թերեւս վերացել կամ գոնե տեսանելի մակարդակում չի գործում: Այն ներկայումս իսպառ բացակայում է Վրաստանի վարած տարածաշրջանային քաղաքականությունում: Ինչպես նշում է վրաց փորձագետ Իրակլի Մանագաձեն, «Վրաստանը, մերձենալով Անկարայի հետ, երես թեքեց Մոսկվայից՝ Թուրքիայի պատմական թշնամուց: Սա պատմական անհեթեթություն ( ) է, որն անհանգստացնում եւ ջղաձգում է Մոսկվային: 18-րդ դ. Հերակլ 2-րդը Օսմանյան Թուրքիայից պաշտպանվելու համար օգնություն խնդրեց Ռուսաստանից: Բայց հետագայում վրացիները հասկացան, որ Ռուսաստանը ոչ թե օգնեց իրենց, այլ նվաճեց իրենց երկիրը: 200 տարի անց պատմության անիվը շրջվեց»:

Անշուշտ, վրացական ազգայնականության հակառուսականությունն ունի իր իրավացի փաստարկներն ու գաղափարական հիմքերը նաեւ: Այն նույնպես սնվում է պատմական անցյալից, մասնավորապես, վրացական թագավորության երբեմնի հզորության ու անկախության մասին պատմական հիշողությունից: Իսկ այդ հզորության վերականգնման մասին ազգային իղձերն այսօր էլ առկա են ազգայնական նախագծերում, ուղղակի դրանք մի փոքր վերափոխված են՝ համեմված քաղաքակիրթ աշխարհին հարիր տերմիններով ու արժեքների մասին ժամանակակից պատկերացումներով: Այսպես, օրինակ, նույն քաղաքացիական հասարակության ստեղծման մասին նախագծերն ու հռչակված քաղաքական ծրագրերը հեշտությամբ կարելի է գործնականում ծառայեցնել եւ տրանսֆորմացնել մի նախագծի, որտեղ կարելի է բավարարել պատմական անցյալից ժառանգած կայսերական նկրտումները:

Եթե հիշենք Զ. Գամսախուրդիայի կողմից ակտիվ գործարկվող վրացական ազգայնականության մոդելը՝ «Վրաստանը՝ վրացիների համար», այն ուղղակի երկում ապրող այլազգիներիների վտարման կոչ էր: Եվ պատահական չէ, որ այդ տարիներին բազմաթիվ հայեր (նաեւ հույներ, հրեաներ, ադրբեջանցիներ, ռուսներ եւ այլն) արտագաղթեցին երկրից: Սա մի ժամանակաշրջան էր, երբ երկրում ընթանում էր կարիտալի նախնական կուտակման գործընթացը, եւ նաեւ այդ արտագաղթի պատճառով էր, որ Վրաստանում այդպես էլ չձեւավորվեց հայկական կարիտալ. հայազգի կարող ուժերը լքեցին երկիրը եւ դուրս մնացին այդ գործընթացներից:

Ներկայումս Մ. Սահակաշվիլու կողմից գործարկվող ազգային նախագիծը, դեկլարատիվ տեսքով՝ ինտեգրացիոն ազգայնականություն է: Նա բացահայտ չի հայտարարում, որ այլազգիները պետք է հեռանան երկրից, այլ ընդհակառակը՝ ակտիվ գործարկվող վրացական ազգայնականության մոդելը՝ «Վրաստանը՝ վրացիների համար», այն ուղղակի երկում ապրող այլազգիներիների վտարման կոչ էր: Եվ պատահական չէ, որ այդ տարիներին բազմաթիվ հայեր (նաեւ հույներ, հրեաներ, ադրբեջանցիներ, ռուսներ եւ այլն) արտագաղթեցին երկրից: Սա մի ժամանակաշրջան էր, երբ երկրում ընթանում էր կարիտալի նախնական կուտակման գործընթացը, եւ նաեւ այդ արտագաղթի պատճառով էր, որ Վրաստանում այդպես էլ չձեւավորվեց հայկական կարիտալ. հայազգի կարող ուժերը լքեցին երկիրը եւ դուրս մնացին այդ գործընթացներից:

Ներկայումս Մ. Սահակաշվիլու կողմից գործարկվող ազգային նախագիծը, դեկլարատիվ տեսքով՝ ինտեգրացիոն ազգայնականություն է: Նա բացահայտ չի հայտարարում, որ այլազգիները պետք է հեռանան երկրից, այլ ընդհակառակը՝ ակտիվ գործարկվող վրացական ազգայնականության մոդելը՝ «Վրաստանը՝ վրացիների համար», այն ուղղակի երկում ապրող այլազգիներիների վտարման կոչ էր: Եվ պատահական չէ, որ այդ տարիներին բազմաթիվ հայեր (նաեւ հույներ, հրեաներ, ադրբեջանցիներ, ռուսներ եւ այլն) արտագաղթեցին երկրից: Սա մի ժամանակաշրջան էր, երբ երկրում ընթանում էր կարիտալի նախնական կուտակման գործընթացը, եւ նաեւ այդ արտագաղթի պատճառով էր, որ Վրաստանում այդպես էլ չձեւավորվեց հայկական կարիտալ. հայազգի կարող ուժերը լքեցին երկիրը եւ դուրս մնացին այդ գործընթացներից:

Եթե հիշենք Զ. Գամսախուրդիայի կողմից ակտիվ գործարկվող վրացական ազգայնականության մոդելը՝ «Վրաստանը՝ վրացիների համար», այն ուղղակի երկում ապրող այլազգիներիների վտարման կոչ էր: Եվ պատահական չէ, որ այդ տարիներին բազմաթիվ հայեր (նաեւ հույներ, հրեաներ, ադրբեջանցիներ, ռուսներ եւ այլն) արտագաղթեցին երկրից: Սա մի ժամանակաշրջան էր, երբ երկրում ընթանում էր կարիտալի նախնական կուտակման գործընթացը, եւ նաեւ այդ արտագաղթի պատճառով էր, որ Վրաստանում այդպես էլ չձեւավորվեց հայկական կարիտալ. հայազգի կարող ուժերը լքեցին երկիրը եւ դուրս մնացին այդ գործընթացներից:

Ներկայումս Մ. Սահակաշվիլու կողմից գործարկվող ազգային նախագիծը, դեկլարատիվ տեսքով՝ ինտեգրացիոն ազգայնականություն է: Նա բացահայտ չի հայտարարում, որ այլազգիները պետք է հեռանան երկրից, այլ ընդհակառակը՝ ակտիվ գործարկվող վրացական ազգայնականության մոդելը՝ «Վրաստանը՝ վրացիների համար», այն ուղղակի երկում ապրող այլազգիներիների վտարման կոչ էր: Եվ պատահական չէ, որ այդ տարիներին բազմաթիվ հայեր (նաեւ հույներ, հրեաներ, ադրբեջանցիներ, ռուսներ եւ այլն) արտագաղթեցին երկրից: Սա մի ժամանակաշրջան էր, երբ երկրում ընթանում էր կարիտալի նախնական կուտակման գործընթացը, եւ նաեւ այդ արտագաղթի պատճառով էր, որ Վրաստանում այդպես էլ չձեւավորվեց հայկական կարիտալ. հայազգի կարող ուժերը լքեցին երկիրը եւ դուրս մնացին այդ գործընթացներից:

Ներկայումս Մ. Սահակաշվիլու կողմից գործարկվող ազգային նախագիծը, դեկլարատիվ տեսքով՝ ինտեգրացիոն ազգայնականություն է: Նա բացահայտ չի հայտարարում, որ այլազգիները պետք է հեռանան երկրից, այլ ընդհակառակը՝ ակտիվ գործարկվող վրացական ազգայնականության մոդելը՝ «Վրաստանը՝ վրացիների համար», այն ուղղակի երկում ապրող այլազգիներիների վտարման կոչ էր: Եվ պատահական չէ, որ այդ տարիներին բազմաթիվ հայեր (նաեւ հույներ, հրեաներ, ադրբեջանցիներ, ռուսներ եւ այլն) արտագաղթեցին երկրից: Սա մի ժամանակաշրջան էր, երբ երկրում ընթանում էր կարիտալի նախնական կուտակման գործընթացը, եւ նաեւ այդ արտագաղթի պատճառով էր, որ Վրաստանում այդպես էլ չձեւավորվեց հայկական կարիտալ. հայազգի կարող ուժերը լքեցին երկիրը եւ դուրս մնացին այդ գործընթացներից:

Ներկայումս Մ. Սահակաշվիլու կողմից գործարկվող ազգային նախագիծը, դեկլարատիվ տեսքով՝ ինտեգրացիոն ազգայնականություն է: Նա բացահայտ չի հայտարարում, որ այլազգիները պետք է հեռանան երկրից, այլ ընդհակառակը՝

Շարունակությունը՝ էջ 9

Նոր հրատարակություն

Հայոց ցեղասպանության առաջին վկայություններից մեկը՝ հայերեն

Վանաձորցի Կուրղինյան ընտանիքը մենակ անում է այնպիսի գործեր, որոնք պետք է կատարեն գիտական համապատասխան մարմինները: Կուրղինյանների նախաձեռնությունները, առնվազն, պետական հոգածության առարկա պետք է դառնան: Խոսքը վերաբերում է Հայոց ցեղասպանությանն առնչված դանիական վկայությունների հայերեն թարգմանությանն ու սեփական միջոցներով հրատարակությանը:

1990-ականների առաջին կեսին Դանիայում կայք հաստատած Հասմիկ Կուրղինյանը շատ շնորհակալ աշխատանք է տանում բնագրի լեզվից հայերենի թարգմանելով Հայոց ցեղասպանության դանիական վկայությունները, իսկ նրա հայրը՝ Վանաձորում ապրող Գառնիկ Կուրղինյանը խմբագրում է դրանք: Հրատարակչական աշխատանքներում ընդգրկված են ընտանիքի մյուս անդամները եւ: Այնուհետեւ ընտանիքը դրանք Հայաստանում հրատարակում է Դանիայում Հասմիկի խնայած միջոցներով: Առաջինը 2000 թվականի առաջին կեսին լույս տեսած՝ Սվենդ Սեդենգրին Բեթի «Մի աներկիր ժողովրդի մոտ» գրքույկն էր հայացած դանիուհի, «Մայրիկ» գերագույն պատվանվանն արժանացած ու Հալեթի հայոց ազգային գերեզմանատանը թաղված Քարեն Եփփեի մասին (ներկայացրել ենք «Ազգի» 2000-ի մայիսի 13-ի համարում): Եվ ահա, այս տարեսկզբին, նույն ստեղծագործական խումբը Վանաձորի «ՍԻՄ» տպագրատնից լույս է ընծայել Ինգա Նալբանդյանի (օրիորդական անունով՝ Հենրիետտե Լուսինդե Քոլին) «Մեծ ցավը»՝ Ա-5 չափի, 164 էջ ծավալով վիպակը՝ ընդամենը 120 օրինակ տպաքանակով (նախորդի տպաքանակը 100 օրինակ էր. պետպատվերով հրատարակված բազմաթիվ գրքերը երեւի շատ ավելի կարետոր են)...

Ինգա Նալբանդյանը Շվեյցարիայում ֆրանսերեն ուսանելիս հանդիպում է հայ մտավորական, դասախոս Պաոլ Նալբանդյանին: Նրանք ամուսնանում են 1904 թվականին: Հավատալով երիտթուրքական «հեղափոխության» սնամեջ խոստումներին, Նալբանդյանները 1909-ին հաստատվում են Պոլսում: Պաոլը ստանձնում է հայկական մի գիմնազիայի տնօրենության պաշտոնը, իսկ Ինգան ծառայում է հայոց Ս. Փրկիչ հիվանդանոցում: Շատ չանցած՝ Պաոլը ծանր հիվանդանում է (որի համար նրան ախտորելու տաղտուկը թուրքերն իրենք իրենց խնայում են) եւ մահանում 1916-ին: Նույն տարվա սեպտեմբերին Ինգան վերադառնում է Դանիա, ուր 1916-1918 թթ. հեղինակում է «Մեծ ցավը», «Քվածները» եւ «Սպիտակ դաշտը» պատմվածքների եռագրությունը՝ նվիրված հայոց մեծագույն ողբերգության:

«Մեծ ցավը» առաջին անգամ լույս է տեսել 1917 թվականին: Այս տեսակետից, «Մեծ ցավը» Հայոց ցեղասպանության թեմայով գրված ու հրատարակված առաջին գեղարվեստական երկն է մեր իմացածով, իսկ հաստատապես՝ առաջիններից մեկը հրատարակված բազմահազար անուն հրատարակությունների շարքում: Վիպակն ունեցել է դանիերեն երեք վերահրատարակություն, նախորդ ինն տասնամյակներին թարգմանվել եւ լույս տեսել բազմաթիվ լեզուներով՝ բացի ... հայերենից: Ահա այս բացն էլ լրացնում են Կուրղինյանները՝ իրենց համեստ հնարավորություններով եւ վճռական նպատակասլացությամբ:

«Մեծ ցավը» գրքի նախաբանում, Ինգա Նալբանդյանը գրում է գրքի հեղինակման հանգամանքների մասին եւ հայտնում. «Իմ դերը սահմանափակվում է նրանով, որ ես պատմում եմ այն, ինչ տեսել եմ ու լսել սեփական աչքերով ու ականջներով: Եվ ինչ ապրումներ եմ ունեցել: Ընդամենը կատարվածի մի չնչին մաս»:

Վիպակը բաղկացած է 11 պատմվածքներից, որոնք թեեւ առանձին հերոսներ ունեն, սակայն միաժամանակ, ունեն ընդհանրություններ՝ սյուժեն (հայոց նկատմամբ թուրքական վայրենաբարո խստականությունն ու հայոց տարագությունը) եւ գործողությունների վայրը (հիմնականում՝ Ս. Փրկիչ հիվանդանոցը, մասամբ նաեւ՝ մայրաքաղաք Պոլիսը, Տրապիզոնը եւ Պարսիզակը): Հերոսները թեեւ ունեն պայմանական անուններ, սակայն իրականում գոյություն ունեցած մարդկանց գրական կերպավորումներն են: Այսպես օրինակ, պոլսեցի բժիշկ եւ գեռմանացի գեներալ ֆոն դեր Գոլցի փեսա Հայկ Հովսեփյանը, որ բուժում է մի թուրք մեծավորի աղջկան, իսլամն ընդունելով փրկվելու նրա առաջարկը մերժում եւ նահատակվում է, իրականում Ռուբեն Սեւակն է (նույն թեմային անդրադարձել է նաեւ Անդրանիկ Ծառուկյանն իր «Սերը եղեռնին մեջ» գրքում, ինչպես նաեւ Ալեքսանդր Թոփչյանը «Եվ անգամ մահից հետո» վեպում: Մյուս հերոսները եւ ունեն իրենց իրական նախատիպարները. Բալկանյան պատերազմում ամուսնուն, իսկ 1915-ին Մուշում իր չորս որդիներին կորցրած, հիվանդանոցի հավաքարար Մարիամը, մոր զոհվելուն ականատես եղած եւ հոգեկան հիվանդ դարձած Քար Հովսեփը, Տրապիզոնի ջարդից մազապուրծ պատանի Հմայակը, հոգեկան մեկ ուրիշ հիվանդ՝ պարսիզակցի Հովսեփը, հիվանդանոցի կառավարիչ Գարեգին էֆենդին ու նրան իրապես օգնել ցանկացող, բայց չնչին բան հաջողացնել կարողացող, ներքին գործերի նախարարության բարձրաստիճան պաշտոնյա Հասան բեյը, Պոլսի անվտանգության ոստիկանության պետ, արյունարբու Բեդրի բեյը, դահճապետ Թալեաթ բորենին եւ ուրիշներ: Չափազանց ուշագրավ է Պարսիզակի նկարագրությունը մինչեւ տարագրությունը եւ դրանից հետո, այն էլ ԱՄՆ-ի հյուպատոսի տեղակալ Ջեյմս Լ. Ջեքսոնի՝ Գարեգին էֆենդուն ուղղած նամակի տեսքով:

Ինգա Նալբանդյանը սրտի դառն կսկիծով է գրում այս տխուր իրադարձությունների մասին: Լինելով էությամբ հումանիստ, նա խորապես ապրում է հայոց ողբերգությունը, դատապարտում մարդու նկատմամբ մարդակերպ գազանների վայրագությունները, կարեկցում անարդարության անմեղ զոհերին, վառ կերպով արտահայտում իր համակրանքը նրանց նկատմամբ եւ հավատը՝ չարի պարտության անխուսափելիության վերաբերյալ: Հեղինակի համար՝ թուրքը որպես տեսակ մեղավոր չէ, կան նաեւ «լավ» թուրքեր, որոնց մասին նա ուզեցել է նույնիսկ մի գիրք գրել, բայց չի հաջողել: Ինչպես նշում է գրքի խմբագիր Գ. Կուրղինյանը՝ գրքի ավարտի իր «Գրողն ու մարդը» խոհագրության մեջ, «իհարկե այդ ապարդյուն ծիգ էր, լոկ փորձ՝ անհնարին» եւ մեջբերում է Ավետիք Իսահակյանի խոսքը. «Երբ Հիսուս ասաց՝ «սիրիր թշնամուդ», այնժամ թուրքը չկար աշխարհում»:

Համաձայն ենք պրն Կուրղինյանի ավարտական նախադասությանը. «Իսկ մենք՝ հայ ընթերցողներս պիտի խոնարհվենք այս օտարազգի կնոջ հիշատակի առջեւ, որ այն դժնդակ օրերին նա կարողացավ այդպես խորը տեսնել, զգալ, հասկանալ մեզ, ողբալ մեզ հետ հարազատի պես ու խոսել աշխարհին հայոց ՄԵԾ ՑԱՎԸ», հատկանիշներ, որոնք հատուկ են միայն իսկական մարդ արարածին: Մեր կողմից էլ ավելացնենք, որ անչափ շնորհակալ ենք Կուրղինյաններին, որոնք իրենց այս թարգմանական-հրատարակչական աշխուժությամբ, հարուստացնում են մեր գիտելիքներն ու ներաշխարհը հայության դանիացի իսկական բարեկամների թանկագին վկայություններով:

ԳԵՎՈՐԳ ՅԱՇՔԱՆՅԱՆ

Դ էջից

ԹԻՖԼԻՍԱՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԸ ...

ադրբեջանական համայնքի ակտիվիստները շատացել են իրենց դրսեւորով մասնակցելու երեկոյան ցույցին (այդ օրը տեղի է ունեցել երկու ցույց՝ առավոտյան եւ երեկոյան ժամերին) եւ նույնպես հայտնելու իրենց համերաշխությունը վրացական իշխանությունների վարած քաղաքականությանն ու վրաց ժողովրդին:

Այնուհետեւ Թբիլիսիի Պ. Աղամյանի անվան հայկական պետական թատրոնի կոլեկտիվի ջանքերով իրականացվել է երկու միջոցառում. առաջինը թատրոնի շենքում, որին մասնակցել է մոտ 400 մարդ եւ փոքրաթիվ ակցիա՝ հայկական դրոշներով, Գորի քաղաքի մատույցներում: Այս միջոցառումների նպատակը նույնպես Վրաստանի իշխանություններին ու վրացիներին սատարելն էր, ընդ որում՝ դրանք համեմված էին հակառուսական կոչերով եւ ելույթներով:

Նշենք, որ հատկապես այս վերջին երկու միջոցառումները համայնքում մեծ արձագանք չեն գտել: Համայնքի անդամների մեծ մասն այն չի ողջունել: Նման վերաբերմունքն առավելապես պայմանավորված է նրանով, որ հայկական թատրոնի ղեկավարությունը համարվում է վրացամետ, իսկ ավելի ճիշտ՝ իշխանամետ: Բանն այն է, որ թատրոնի տնօրեն՝ Արմեն Բայանդուրյանը 2008 թ. մայիսի 21-ին տեղի ունեցած խորհրդարանական ընտրությունների արդյունքում ընտրվեց Վրաստանի ԱԺ պատգամավոր, հետեւաբար համայնքում այս քաղաքական դիրքորոշումն ու անցկացված միջոցառումներն ընկալվեցին որպես վրացական իշխանություններին հաճոյանալուն ուղղված քայլ:

Քաղաքացիական պարտքի զգացումից զատ թիֆլիսահայության վարքագծի վրա ազդող երկրորդ գործոնը՝ ազգային պատկանելության գործոնն է, որն իր տեղը դեռեւս ամբողջությամբ չի զիջել քաղաքացիականին, երբեմն հայտնվելով որոշակի հակասության մեջ վերջինիս հետ: Այսպես, չնայած որոշակի ակտիվության դրսեւորումներին, այնուամենայնիվ, թիֆլիսահայության մեծ մասը չեզոքություն է պահպանել: Հիմնականում պատճառը նաեւ այն է, որ թիֆլիսահայությունը մեծամասամբ աղաղակական հանույթ է: Հայ համայնքի անդամները հազվադեպ են արձագանքում երկրում ընթացող քաղաքական գործընթացներին, առավել եւ՝ հայտնում որեւէ քաղաքական դիրքորոշում: Այս դեպքում էլ հայերի մեծ մասը նախընտրում էր տեսանելի ակտիվություն չցուցաբերել, ինչի հետեւանքով արժանանում էր իրենց հարեւան կամ ծանոթ վրացիների հանդիմանանքին: Վրաց ազգայնականների մեծ մասը, որպես կանոն, հայերին մեղադրում են ռուսամետության մեջ եւ հայերի մեծ մասի չեզոքությունը բացատրում վերջիններիս ռուսական կողմնորոշումներով:

Հաճախ վրացիների կողմից հնչող մեղադրանքները ուշագրավ երանգներ եւ ձեւակերպումներ են ստացել: Ինչպես պատմեց իմ հայազգի զուգակիցներից մեկը, իր վրացի ընկերը, որն իր ընտանիքով պատրաստվել է լքել քաղաքն այդ տագնապի օրերին, իրեն ասել է. «Դուք՝ հայերդ, չեք փախչում քաղաքից, քանի որ համոզված եք, որ ռուսները ձեզ չեն սպանի»: Ինչին հայը պատասխանել է, որ հայերը Թիֆլիսում այնքան վաս են ապրում, որ փախչելու հնարավորություն չունեն: Հայտնի է, որ նման իրավիճակներում, որպես կանոն, առաջինը փախչում է քաղաքի բնակչության ունետոր հատվածը:

Չնայած նրան, որ Մ. Սահակաշվիլու կողմից փայլուն օգտագործվել են PR տեխնոլոգիաները, օրինակ, այդ օրերին անընդհատ գործել է մշտական հեռուստատեսային կապ հանրության հետ, ինչն իր ազդեցությունն է ունեցել՝ նպաստելով վերոնշված ազգային մոբիլիզացիոն գործընթացներին, այնուամենայնիվ, հայերի մի որոշակի հատված, որն ընդդիմադիր քաղաքական դիրքորոշում ունի Մ. Սահակաշվիլու որդեգրած քաղաքականության հանդեպ, ունեցել է հետեւյալ դիրքորոշումը. վերջնականապես գահընկեց արվի Մ. Սահակաշվիլին: Հայության մի հատվածի այս դիրքորոշման հիմքում ընկած է ոչ այնքան հայերի՝ այսպես կոչված ռուսամետությունը, որքան Սահակաշվիլու քաղաքականության հանդեպ որդեգրած ընդդիմադիր կեցվածքը: Հայերի այս հատվածը գտնում է, որ Մ. Սահակաշվիլու ծայրահեղ հակառուսականությունը մեծ վնաս է հասցնում Վրաստանին:

Ջավախահայության գործոնը նույնպես ազդում է թիֆլիսահայության վարքաբանության վրա՝ հիմնականում լրացուցիչ տագնապ հաղորդելով համայնքին: Ջավախահայությունը հայտնի է իր առավել քաղաքականացված եւ խիզախ կեցվածքով, ինչն այս անգամ, օրինակ, արտահայտվեց Ջավախքի ՀԿ-ների հայտարարությամբ՝ Վրաստանը ֆեդերատիվ պետություն հռչակելու անհրաժեշտության մասին, որպես ստեղծված ճգնաժամից դուրս գալու լավագույն միջոց: Թիֆլիսահայերի զգալի մասը ջավախահայ հասարակական շրջանակների այս դիրքորոշումը ընկալել է մեծ զգուշավորությամբ եւ տագնապի զգացումով:

Վերջին երկու գործոնները, այն է՝ ԼՂՀ գործոնը եւ ՀՀ պատշգամական դիրքորոշումը, որոշակիորեն փոխկապակցված են հանդես գալիս թիֆլիսահայության ընկալումներում: Մեր դիտարկումները ցույց տվեցին, որ մայրաքաղաքում ապրող հայերը ուշի ուշով հետեւում են Հայաստանից ստացվող լուրերին ու արձագանքներին եւ անթաքույց մտավախություն էին արտահայտում առ այն, որ ՀՀ-ն պատշգամական կճանաչի Հարավային Օսիայի ու Աբխազիայի անկախությունը: Իրենց կարծիքով՝ այս դեպքում իրենց անվտանգությունը խոցելի է, իսկ բացահայտ սադրանքներն ու բախումները Թբիլիսիում հայերի ու վրացիների միջեւ կդառնան անխուսափելի: Այստեղ նշենք, որ այն ապատեղեկատվության տարածման հետեւանքով, ըստ որի իբր թե Գյումրիից տեղի է ունեցել ռուսական ինքնաթիռների թռիչք դեպի Վրաստան, Հավլաբարում տեղի են ունեցել խմորումներ: Իրավիճակը կբարդանար, եթե ՀՀ-ից պատշգամական հերքումը փոքր-ինչ ուշանար, քանի որ ներքինիկ բախումների հնարավորությունն այս դեպքում անխուսափելի էր դառնում:

Ինչպես նշում էին տեղացի հայերը, վրացական իշխանությունները խանդավառությամբ են ընդունել այս ապատեղեկատվությունը եւ մեծ պատրաստակամությամբ, առանց ստուգելու դրա ճշմարտացիությունը, տարածել այն: Նման իրավիճակ է ձեւավորվել, երբ տարածվել էր ապատեղեկատվություն առ այն, իբր հայերը զորք են կուտակում Ջավախքի սահմանին, որպեսզի հնարավորության դեպքում հարձակվեն Վրաստանի վրա՝ Ջավախքը ազատագրելու նպատակով:

Հետպատերազմական իրողություններ. նոր մարտահրավերներ եւ նոր հնարավորություններ

Այժմ, երբ վրացական ազգայնականությունն իր դրսեւորման ակտիվ փուլում է, վտանգ կա, որ հակահայկականությունը քաղաքական հռետորականության մեջ եւ մամուլում հետզհետէ կարող է նոր թափ ստանալ: Ներկայումս վրացական մամուլը հեղեղված է հակառուսական նյութերով, որտեղ կարելի է նշմարել նաեւ որոշ հակահայ արտահայտություններ: Օրինակ, այս պատերազմից հետո տրված հոդվածներից մեկում գրված է, որ աշխարհը տեսավ այդ եռյակի ագրեսիվ ակտիվությունը՝ նկատի ունենալով Մեդվեդեւ-Պուտին-Լավրով: Հոդվածի հեղինակը առաջին երկու պետական գործիչներին անվանում է թզուկ-այլմոլորակայիններ, իսկ Լավրովի պարագայում հիշատակում է, որ նա թիֆլիսահայ է եւ իր հայկական ծագումը թաքցնում է ռուսական ազգանվան տակ:

Պատերազմի օրերին Վրաստանի պառլամենտի պատգամավորներից մեկն ասել է, որ ժամանակն է մեր հարեւան երկու պետությունները՝ Հայաստանն ու Ադրբեջանը սատարեն մեզ, եթե ոչ՝ ապա իրենց հայրենակիցները թող հեռանան մեր երկրից:

Բնական է, որ ստեղծված ճգնաժամային իրադրության մեջ վրացական իշխանական վերնախավը, իր մեղքերը թաքցնելու նպատակով, կձգտի փնտրել «խավդության նոխազներ»: Հետեւաբար, մտավախություն կա, որ երկրի էթնիկ փոքրամասնությունները կկանգնեն նոր մարտահրավերների առջեւ:

Հայաստանը եւ հայությունը պետք է պատրաստ լինեն նման զարգացումներին՝ ձգտելով հայ-վրացական միջպետական հարաբերություններում հնարավորինս չեզոքացնել երրորդ ուժերի ազդեցությունը, միջնորդավորված ձեռաչափերը եւ ուղիղ աշխատել անհատական-փորձագիտական եւ գերատեսչական մակարդակներով: Այսօր Հայաստանն, առավել քան երբեւէ, անհրաժեշտ է Վրաստանին եւ վրաց ժողովրդին, ինչը հնարավորություններ նոր պատուհան է մի կողմից երկկողմանի հարաբերությունների բարելավման, մյուս կողմից՝ կնճռոտ խնդիրները հայանպաստ լուծելու համար: ■

Մասնակցություն

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆԸ ՏԵՂԵԿԱՑՆՈՒՄ Է

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՃԱՆՈՒՑՈՒՄ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ «ԱՃՈՒՐԴԻ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ՀՐԱՎԻՐՈՒՄ Է ԱՃՈՒՐԴԻ, ՈՐԸ ՏԵՂԻ ԿՈՒՆԵՆԱ 2008Թ. ՆՈՅԵՄԲԵՐԻ 4 -ԻՆ ԵՎ 19-ԻՆ, ԺԱՄԸ 11:00-ԻՆ «ԱՃՈՒՐԴԻ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՈՒՄ (ՀԱՍՑԵՆ՝ Ք. ԵՐԵՎԱՆ, Դ.ԱՆՀԱՂԹԻ 23, 4-ՐԴ ՀԱՐԿ)

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է

ՀՀ կառավարության14.07.052. N 987Ա որոշմամբ լուծարվող «Ամասիայի ԲԿՏ» ՊՓԲԸ-ի (հասցեն՝ Շիրակի մարզ, գ. Ամասիա) հաշվեկշռում գտնվող գույքը՝

N	Գույքի անվանումը	Քանակը (հատ)	Շահագործման տ/թ.	Գնահատված տուկա-յական արժեքը ներառյալ ԱԱՀ (դրամ)	Զբաղեցրած հողա-տարածքի կադաստ-րային արժեքը (դրամ)	Մեկնարկային գինը (դրամ)
1	Վարչական շենք (113,32 մ/մ)	-	-	598410*	24048	598410
2	Հատուկ ասենիզացիայի սարքավորում, ավտոմեքենա «ԱԱՄ-53», «ԳԱԶ 53» մ/հ՝ ԱՂՕ 70-25, շարժիչը՝N82935, ամրաջրանակը N672889	1	1982թ.	120000	-	120000
3	Ջուր բարձող մեքենա	1	1989թ.	80000	-	80000
4	Վառելանյութի տարա	2	1992թ.	240000	-	240000
5	Կալկուլյատոր	2	1991թ.	300	-	300
6	Հեռուստացույց	1	1978թ.	500	-	500

*Հիմք՝ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից տրամադրված Ամասիայի Տ/Ս-ի վարչական շենքի կադաստրային նոր գնահատված արժեքի մասին տեղեկանք:

** Համաձայն «Ամասիայի ԲԿՏ» ՊՓԲԸ-ի լուծարային հանձնաժողովի 18.06.08թ. որոշման՝ գնորդը պարտավոր է աճուրդի արձանագրությունը ստանալուց հետո օրենսդրությամբ սահմանված կարգով համապատասխան հաշվին վճարել անշարժ գույքի զբաղեցրած հողամասի կադաստրային արժեքը («Ամասիայի ԲԿՏ» ՊՓԲԸ-ի անշարժ գույքի զբաղեցրած հողատարածքի 1 մ/մ կադաստրային արժեքը կազմում է 144 դրամ):

Աճուրդը կանցկացվի դասական (գնի ավելացման) եղանակով: Աճուրդին կարող են մասնակցել ֆիզիկական եւ իրավաբանական անձիք, ինչպես նաեւ համայնքները, որոնք մինչեւ յուրաքանչյուր աճուրդի նախորդ աշխատանքային օրը, ժամը17:00 աճուրդային հանձնաժողովին են ներկայացրել.

-աճուրդի նախավճարի մուծման անդորրագիրը, որի չափն է 150 դրամ, մուտքագրման հաշիվն է «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ի թիվ 160006651014 դրամային հաշիվը.

-անձնագիրը, իսկ իրավաբանական անձիք հիմնադիր փաստաթղթերի պատճենները եւ լիազորությունները հաստատող փաստաթղթերը:

Աճուրդին չեն կարող մասնակցել այն անձիք, որոնք վաճառվող լոտի նկատմամբ չեն կարող ունենալ սեփականության իրավունք:

Վերը նշված փաստաթղթերի առկայության դեպքում աճուրդային հանձնաժողովը մասնակցին տրամադրում է մասնակցի վկայական:

Աճուրդին կարող են ներկա գտնվել դիտորդներ՝ աճուրդի մասնակից չհամարվող այն անձիք, ովքեր վճարել են մուտքի վճար՝ 3000 դրամ:

Աճուրդի մասնակցի վկայականները տրամադրվում են «Աճուրդի կենտրոն» պետական ոչ առեւտրային կազմակերպությունում (հասցեն՝ ք.Երեւան Դ.Անհաղթի 23/4-դ հարկ) մինչեւ յուրաքանչյուր աճուրդի նախորդ աշխատանքային օրը, ժամը 17:00, իսկ դիտորդի տոմսերը վաճառվում են մինչեւ աճուրդի սկսվելը:

Աճուրդին մասնակցել ցանկացողները վաճառվող լոտին (գույքին) կարող են ծանոթանալ սույն ծանուցման հրապարակման պահից մինչեւ աճուրդի բացմանը նախորդող օրն ընկած ժամանակահատվածը՝ յուրաքանչյուր երկուշաբթի, չորեքշաբթի եւ ուրբաթ օրերին, ժամը 9:00-ից մինչեւ 17:00 (բացառությամբ ժամը 13:00-ից մինչեւ 14:00):

Գույքի պահպանումը իրականացվում է ընկերության հանձնակատարի կողմից:

Նախքան աճուրդի սկսվելը աճուրդային հանձնաժողովը գրանցում է մասնակիցներին եւ յուրաքանչյուր մասնակցին, ներկայացված մասնակցի վկայականի համարին համապատասխան, տրամադրում է քարտ:

Աճուրդը վարում է աճուրդավար: Աճուրդավարը մասնակիցներին առաջարկում է մեկնարկային գնով գնել լոտը: Ցանկացած մասնակից իրավունք ունի, նախքան աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածը, ներկայացնել նոր գնային հայտ, որը պետք է գերազանցի մասնակիցների կատարած նախորդ գնային հայտը՝ նվազագույնը հավելման (քայլի) չափով: Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդի հաղթած մասնակից: Եթե մի քանի մասնակից միաժամանակ գնային հայտ են ներկայացրել հավասար չափով, որից հետո ավելի բարձր գնային հայտ չի ներկայացվել, ապա աճուրդի հաղթած մասնակից է համարվում վիճակահանության արդյունքներով ընտրված մասնակիցը: Աճուրդավարի կողմից աճուրդի հաղթող համարված մասնակիցը պարտավոր է՝ հանձնարարագիր ստանալուց 30 րոպեի ընթացքում, վճարել իր առաջարկած գնի առնվազն 3 տոկոսի չափով գումար, որը սահմանված ժամկետում (10 օրվա ընթացքում) հետագա վճարումները կատարելու դեպքում նախավճարի հետ միասին հաշվարկվում է վճարման ենթակա գումարի մեջ, իսկ վճարումներից խուսափելու դեպքում չի վերադարձվում եւ տվյալ մասնակիցը զրկվում է աճուրդին մասնակցելու իրավունքից: Եթե աճուրդում հաղթող համարված մասնակիցը սահմանված ժամկետում (հանձնարարագիր ստանալուց 30 րոպեի ընթացքում) վճարում է իր առաջարկած գնի առնվազն 3 տոկոսի չափով գումար, ապա նա ճանաչվում է աճուրդի հաղթող եւ ստորագրում է աճուրդի արդյունքների մասին արձանագրությունը: Աճուրդում վաճառված յուրաքանչյուր լոտի գոյացած գինը նվազագույն աշխատավարձի հինգհազարապատիկի չափը չգերազանցելու դեպքում հաղթող մասնակիցը աճուրդի արդյունքների մասին արձանագրության ստորագրման օրը վճարում է լոտի ամբողջ գումարը: Աճուրդում չհաղթած մասնակիցներին, գրավոր դիմումի առկայության դեպքում, մուծված նախավճարը վերադարձվում է աճուրդի ավարտից մեկ աշխատանքային օրվա ընթացքում:

Վաճառվող լոտին (գույքին) ծանոթանալու համար զանգահարել՝ 52-65-57 հեռախոսահամարով:

Աճուրդի կանոնակարգին ծանոթանալու (որը տրամադրվում է դիմումի առկայության դեպքում, մեկ օրվա ընթացքում, պատճենահանման ծախսերը վճարելու պայմանով) եւ լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել ք.Երեւան, Դ.Անհաղթի 23 հասցեով կամ զանգահարել աճուրդային հանձնաժողովին՝ հեռախոս՝ 23-73-00, ինտերնետ՝ URL: //www.privatization.am:

ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՃԱՆՈՒՑՈՒՄ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ «ԱՃՈՒՐԴԻ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ՀՐԱՎԻՐՈՒՄ Է ԱՃՈՒՐԴԻ, ՈՐԸ ՏԵՂԻ ԿՈՒՆԵՆԱ Ք.ԵՐԵՎԱՆ, Դ.ԱՆՀԱՂԹԻ 23 /4-ՐԴ ՀԱՐԿ/ ՀԱՍՑԵՈՒՄ

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է

Համաձայն ՀՀ կառավարության 2008թ. հուլիսի 31-ի թիվ 815-Ա որոշման, «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկին ամրացված օտարման ենթակա տրանսպորտային միջոցը

Հ/Հ	Գույքի անվանումը	Թողարկման տարեթիվը	Գնահատված արժեքը 28.03.08թ. դրությամբ /դրամ/	06.10.08թ. աճուրդի		21.10.08թ. աճուրդի		05.11.08թ. աճուրդի		20.11.08թ. աճուրդի	
				մեկնար-կային գին /դրամ/	նախա-վճար /դրամ/	մեկնար-կային գին /դրամ/	նախա-վճար /դրամ/	մեկնար-կային գին /դրամ/	նախա-վճար /դրամ/	մեկնար-կային գին /դրամ/	նախա-վճար /դրամ/
1	Ավտոմեքենա «ՎԱԶ-21213» (մ/հ 201 LS 03), շարժիչը՝ 5944868, թափքը՝ N XTA 21213 OY 1499582	2000թ.	204000	204000	10200	163200	8160	130560	6528	104448	5223

Հ/Հ	Գույքի անվանումը	05.12.08թ. աճուրդի		22.12.08թ. աճուրդի		07.01.09թ. աճուրդի		22.01.09թ. աճուրդի	
		մեկնար-կային գին /դրամ/	նախա-վճար /դրամ/	մեկնար-կային գին /դրամ/	նախա-վճար /դրամ/	մեկնար-կային գին /դրամ/	նախա-վճար /դրամ/	մեկնար կային գին /դրամ/	նախա-վճար /դրամ/
1	Ավտոմեքենա «ՎԱԶ-21213» (մ/հ 201 LS 03), շարժիչը՝ 5944868, թափքը՝ N XTA 21213 OY 1499582	83559	4178	66848	3343	53479	2674	42784	2140

Համաձայն ՀՀ կառավարության 2008թ. հուլիսի 31-ի թիվ 815-Ա որոշման՝

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության պետը աճուրդի հաղթողի կողմից առաջարկված գնի վճարումից հետո աճուրդի հաղթողի հետ մեկամսյա ժամկետում կնքում է առուվաճառքի պայմանագիր, դրանում նախատեսելով, որ գնորդը պարտավորվում է իր միջոցների հաշվին վճարել գույքի արժեքի որոշման հետ կապված վճարը՝ 18000 դրամ (ներառյալ ավելացված արժեքի հարկը), ինչպես նաեւ գույքային իրավունքների պետական գրանցման հետ կապված՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված վճարները ու տուրքերը:

Աճուրդը կանցկացվի դասական (գնի ավելացման) եղանակով:

Բոլոր աճուրդները սկսվում են ժամը 14:30-ին:

Աճուրդով չվաճառված գույքի մեկնարկային գինը յուրաքանչյուր հաջորդ աճուրդի ժամանակ նվազեցվում է վերջին աճուրդի գույքի մեկնարկային գնի 20 տոկոսի չափով: Աճուրդը կայանալու դեպքում հաջորդ աճուրդը (աճուրդները) չի (չեն) անցկացվում:

Աճուրդին կարող են մասնակցել ֆիզիկական եւ իրավաբանական անձիք, ինչպես նաեւ համայնքները, որոնք յուրաքանչյուր աճուրդի համար աճուրդի նախորդող աշխատանքային օրը, ժամը 17:00 աճուրդային հանձնաժողովին են (հասցեն՝ ք.Երեւան, Դ.Անհաղթի 23 /4-դ հարկ) ներկայացրել.

-աճուրդի նախավճարի մուծման անդորրագիրը, որի չափն է՝ յուրաքանչյուր աճուրդի համար յուրաքանչյուր գույքի մեկնարկային գնի 5 տոկոսը, մուտքագրման հաշիվն է «ՎՏԲ-Հայաստան Բանկ»-ի թիվ 160006651014 դրամային հաշիվը.

-աճուրդի մասնակցության վճարի անդորրագիրը, որի չափն է 10000 դրամ (վճարվում է «Աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ-ի դրամարկղ), գույքի գնի մեջ չի ներառվում եւ անկախ աճուրդի արդյունքներից չի վերադարձվում.

-անձնագիրը, իսկ իրավաբանական անձիք հիմնադիր փաստաթղթերի պատճենները եւ լիազորությունները հաստատող փաստաթղթերը:

Աճուրդին չեն կարող մասնակցել այն անձիք, որոնք վաճառվող լոտի նկատմամբ չեն կարող ունենալ սեփականության իրավունք:

Աճուրդի մասնակիցների անձնագրի առկայությունը պարտադիր է:

Աճուրդին կարող են ներկա գտնվել դիտորդներ՝ աճուրդի մասնակից չհամարվող այն անձիք, ովքեր վճարել են մուտքի վճար՝ 3000 դրամ:

Դիտորդի տոմսերը վաճառվում են մինչեւ աճուրդի սկսվելը:

Աճուրդի մասնակիցները վաճառվող լոտին կարող են ծանոթանալ սույն ծանուցման հրապարակման պահից մինչեւ աճուրդի բացմանը նախորդող օրն ընկած ժամանակահատվածում՝ յուրաքանչյուր երկուշաբթի, չորեքշաբթի եւ ուրբաթ օրերին, ժամը 9:00-ից մինչեւ 17:00 (բացառությամբ ժամը 13:00-ից մինչեւ 14:00): Ավտոմեքենան գտնվում է՝ ՀՀ Սյունիքի մարզ, ք. Կապան, Գարեգին Նժդեհի 1, մարզպետարան:

Նախքան աճուրդի սկսվելը աճուրդային հանձնաժողովը գրանցում է մասնակիցներին եւ յուրաքանչյուր մասնակցին, տրամադրում է քարտ:

Աճուրդը վարում է աճուրդավար: Աճուրդավարը մասնակիցներին առաջարկում է մեկնարկային գնով գնել լոտը: Ցանկացած մասնակից իրավունք ունի, նախքան աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածը, ներկայացնել նոր գնային հայտ, որը պետք է գերազանցի մասնակիցների կատարած նախորդ գնային հայտը՝ նվազագույնը հավելման (քայլի) չափով:

Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդի հաղթած մասնակից:

Աճուրդավարի կողմից աճուրդի հաղթող համարված մասնակիցը պարտավոր է՝ հանձնարարագիր ստանալուց 30 րոպեի ընթացքում, վճարել իր առաջարկած գնի առնվազն 3 տոկոսի չափով գումար, որը սահմանված ժամկետում (10 օրվա ընթացքում) հետագա վճարումները կատարելու դեպքում նախավճարի հետ միասին հաշվարկվում է վճարման ենթակա գումարի մեջ, իսկ վճարումներից խուսափելու դեպքում չի վերադարձվում եւ տվյալ մասնակիցը զրկվում է աճուրդին մասնակցելու իրավունքից: Եթե աճուրդում հաղթող համարված մասնակիցը սահմանված ժամկետում (հանձնարարագիր ստանալուց 30 րոպեի ընթացքում) վճարում է իր առաջարկած գնի առնվազն 3 տոկոսի չափով գումար, ապա նա ճանաչվում է աճուրդի հաղթող եւ ստորագրում է աճուրդի արդյունքների մասին արձանագրությունը: Աճուրդում վաճառված յուրաքանչյուր լոտի գոյացած գինը նվազագույն աշխատավարձի հինգհազարապատիկի չափը չգերազանցելու դեպքում հաղթող մասնակիցը աճուրդի արդյունքների մասին արձանագրության ստորագրման օրը վճարում է լոտի ամբողջ գումարը:

Աճուրդում չհաղթող մասնակցին, մուծված նախավճարը վերադարձվում է վերջինիս դիմելուց հետո եռօրյա ժամկետում:

Վաճառվող լոտին ծանոթանալու համար զանգահարել՝ 28-78-30 հեռախոսահամարով:

Աճուրդի կանոնակարգին ծանոթանալու (որը տրամադրվում է դիմումի առկայության դեպքում, մեկ օրվա ընթացքում, պատճենահանման ծախսերը վճարելու պայմանով) եւ լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել (հասցեն՝ ք. Երեւան, Դ.Անհաղթի 23 /4-դ հարկ) հասցեով կամ զանգահարել աճուրդային հանձնաժողովին՝ հեռախոս՝ 23-73-00, ինտերնետ՝ URL: //www.privatization.am:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն

Մամուլ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆԸ ՏԵՂԵԿԱՑՆՈՒՄ Է

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՃԱՆՈՒՑՈՒՄ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ «ԱՃՈՒՐԴԻ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ՀՐԱՎԻՐՈՒՄ Է ԱՃՈՒՐԴԻ, ՈՐԸ ՏԵՂԻ ԿՈՒՆԵՆԱ Ք.ԵՐԵՎԱՆ, Դ.ԱՆՀԱՂԹԻ 23 /4-ՐԴ ՀԱՐԿ/ ՀԱՍՑԵՈՒՄ

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է

Համաձայն ՀՀ կառավարության 2008թ. հուլիսի 24-ի թիվ 774-Ա որոշման, «Սոչասարկում» պետական ոչ առեւտրային կազմակերպությանն ամրացված օտարման ենթակա գույքը

Հ/Հ	Գույքի անվանումը	Քանակը	Թողարկման տարեթիվը	Գույքի արժեքի որոշման հետ կապված վճարները (ներառյալ ԱԱՀ) /դրամ/	Գնահատման տարեթիվը	06.10.08թ. աճուրդի		21.10.08թ. աճուրդի		05.11.08թ. աճուրդի	
						մեկնարկային գին /դրամ/	նախավճար /դրամ/	մեկնարկային գին /դրամ/	նախավճար /դրամ/	մեկնարկային գին /դրամ/	նախավճար /դրամ/
1	Սոչասարկման գիծ	1	2005թ.		18.06.2008թ.	53138	2657	42511	2126	34009	1701
2	էլեկտրական տիտան	1	2005թ.		18.06.2008թ.	4360	218	3488	175	2791	140
3	Ճարմաջեռոց	1	2005թ.		18.06.2008թ.	4360	218	3488	175	2791	140
4	էլեկտրական վառարան	1	2005թ.		18.06.2008թ.	8120	406	6496	325	5197	260
5	Ցուցափեղկ	1	2005թ.		18.06.2008թ.	8120	406	6496	325	5197	260
6	Վերելակ՝ ադրանքի	1	2005թ.		18.06.2008թ.	40600	2030	32480	1624	25984	1300
7	Խոհանոցային սեղան	9	2005թ.		18.06.2008թ.	7308	366	5847	293	4678	234
8	Մսաղաց	1	2005թ.		18.06.2008թ.	19075	954	15260	763	12208	611
9	Կշեռք՝ սլաքով	3	2005թ.		18.06.2008թ.	3270	164	2616	131	2093	105
10	Գրասեղան՝ 2 տումբ.	1	2005թ.		18.06.2008թ.	1635	82	1308	66	1047	53
11	Օվալաձեւ սեղան	1	2005թ.		18.06.2008թ.	5450	273	4360	218	3488	175
12	Դոմարկղի աղյուս	1	2005թ.		18.06.2008թ.	38150	1908	30520	1526	24416	1221
13	էլեկտրական վառարան	2	2005թ.		18.06.2008թ.	12263	614	9811	491	7849	393
14	Սառնարան«ШХ-80»	8	2005թ.		18.06.2008թ.	64960	3248	51968	2599	41575	2079
15	Հարիչ	1	2005թ.		18.06.2008թ.	16240	812	12992	650	10394	520
16	Կարտոֆիլամրիչ	1	2005թ.		18.06.2008թ.	8120	406	6496	325	5197	260
17	էլեկտրական կաթսա «КЕ-100»	1	2005թ.		18.06.2008թ.	8120	406	6496	325	5197	260
	ԸՆԴԱՄԵՆԸ			42000							

Հ/Հ	Գույքի անվանումը	20.11.08թ. աճուրդի		05.12.08թ. աճուրդի		22.12.08թ. աճուրդի		07.01.09.թ. աճուրդի		22.01.09թ. աճուրդի	
		մեկնարկային գին /դրամ/	նախավճար /դրամ/	մեկնարկային գին /դրամ/	նախավճար /դրամ/	մեկնարկային գին /դրամ/	նախավճար /դրամ/	մեկնարկային գին /դրամ/	նախավճար /դրամ/	մեկնարկային գին /դրամ/	նախավճար /դրամ/
1	Սոչասարկման գիծ	27208	1361	21767	1089	17414	871	13932	697	11146	558
2	էլեկտրական տիտան	2233	112	1787	90	1430	72	1144	58	916	46
3	Ճարմաջեռոց	2233	112	1787	90	1430	72	1144	58	916	46
4	էլեկտրական վառարան	4158	208	3327	167	2662	134	2130	107	1704	86
5	Ցուցափեղկ	4158	208	3327	167	2662	134	2130	107	1704	86
6	Վերելակ՝ ադրանքի	20788	1040	16631	832	13305	666	10644	533	8516	426
7	Խոհանոցային սեղան	3743	188	2995	150	2396	120	1917	96	1534	77
8	Մսաղաց	9767	489	7814	391	6252	313	5002	251	4002	201
9	Կշեռք՝ սլաքով	1675	84	1340	67	1072	54	858	43	687	35
10	Գրասեղան՝ 2 տումբ.	838	42	671	34	537	27	430	22	344	18
11	Օվալաձեւ սեղան	2791	140	2233	112	1787	90	1430	72	1144	58
12	Դոմարկղի աղյուս	19533	977	15627	782	12502	626	10002	501	8002	401
13	էլեկտրական վառարան	6280	314	5024	252	4020	201	3216	161	2573	129
14	Սառնարան«ШХ-80»	33260	1663	26608	1331	21287	1065	17030	852	13624	682
15	Հարիչ	8316	416	6653	333	5323	267	4259	213	3408	171
16	Կարտոֆիլամրիչ	4158	208	3327	167	2662	134	2130	107	1704	86
17	էլեկտրական կաթսա «КЕ-100»	4158	208	3327	167	2662	134	2130	107	1704	86

*Համաձայն ՀՀ կառավարության 2008թ. հուլիսի 24-ի թիվ 774-Ա որոշման՝

-ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության պետը աճուրդի անցկացման օրվանից մեկամսյա ժամկետում աճուրդի հաղթողի հետ կնքում է առուվաճառքի պայմանագիր՝ դրանում նախատեսելով, որ գնորդը պարտավորվում է իր միջոցների հաշվին վճարել գույքի որոշման հետ կապված վճարը (ներառյալ ավելացված արժեքի հարկը):

Աճուրդի հաղթողը պարտավոր է՝

-աճուրդի արձանագրության ստորագրման օրվանից 10 օրվա ընթացքում վճարումները կատարել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով, Հայաստանի Հանրապետության արժույթով՝ դրանք ուղղելով «Պետական սեփականություն հանդիսացող հիմնական միջոցների (ֆոնդերի) օտարումից մուտքեր» գանձապետական հաշվին:

Աճուրդը կանցկացվի դասական (գնի ավելացման) եղանակով:

Բոլոր աճուրդները սկսվում են ժամը 11:30-ին:

Աճուրդով չվաճառված գույքի մեկնարկային գինը յուրաքանչյուր հաջորդ աճուրդի ժամանակ նվազեցվում է վերջին աճուրդի գույքի մեկնարկային գնի 20 տոկոսի չափով: Աճուրդը կայանալու դեպքում հաջորդ աճուրդը (աճուրդները) չի (չեն) անցկացվում:

Աճուրդին կարող են մասնակցել ֆիզիկական եւ իրավաբանական անձինք, ինչպես նաեւ համայնքները, որոնք յուրաքանչյուր աճուրդի համար աճուրդի նախորդող աշխատանքային օրը, ժամը 17:00 աճուրդային հանձնաժողովին են (հասցեն՝ ք. Երեւան, Դ.Անհաղթի 23 /4-րդ հարկ/) ներկայացրել.

-աճուրդի նախավճարի մուծման անդորրագիրը, որի չափն է՝ յուրաքանչյուր աճուրդի համար յուրաքանչյուր գույքի մեկնարկային գնի 5 տոկոսը, մուտքագրման հաշիվն է «ՎՏԲ Հայաստան Բանկի» թիվ 160006651014 դրամային հաշիվը.

-աճուրդի մասնակցության վճարի անդորրագիրը, որի չափն է 10000 դրամ (վճարվում է «Աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ-ի դրամարկղ), գույքի գնի մեջ չի ներառվում եւ անկախ աճուրդի արդյունքներից չի վերադարձվում.

-անձնագիրը, իսկ իրավաբանական անձինք հիմնադիր փաստաթղթերի պատճենները եւ լիազորությունները հաստատող փաստաթղթերը:

Աճուրդին չեն կարող մասնակցել այն անձինք, որոնք վաճառվող լոտի նկատմամբ չեն կարող ունենալ սեփականության իրավունք:

Աճուրդի մասնակիցների անձնագրի առկայությունը պարտադիր է:

Աճուրդին կարող են ներկա գտնվել դիտորդներ՝ աճուրդի մասնակից չհամարվող այն անձինք, ովքեր վճարել են մուտքի վճար՝ 3000 դրամ:

Դիտորդի տոմսերը վաճառվում են մինչեւ աճուրդի սկսվելը:

Աճուրդի մասնակիցները վաճառվող լոտերին կարող են ծանոթանալ սույն ծանուցման հրապարակման պահից մինչեւ աճուրդի բացմանը նախորդող օրն ընկած ժամանակահատվածում՝ յուրաքանչյուր երկուշաբթի, չորեքշաբթի եւ ուրբաթ օրերին, ժամը 9:00-ից մինչեւ 17:00 (բացառությամբ ժամը 13:00-ից մինչեւ 14:00):

Նախնական աճուրդի սկսվելը աճուրդային հանձնաժողովը գրանցում է մասնակիցներին եւ յուրաքանչյուր մասնակցին, տրամադրում է քարտ:

Աճուրդը վարում է աճուրդավարը:

Աճուրդավարը մասնակիցներին առաջարկում է մեկնարկային գնով գնել լոտը: Ցանկացած մասնակից իրավունք ունի, նախնական աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածը, ներկայացնել նոր գնային հայտ, որը պետք է գերազանցի մասնակիցների կատարած նախորդ գնային հայտը՝ նվազագույնը հավելման (քայլի) չափով:

Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդի հաղթած մասնակից:

Աճուրդավարի կողմից աճուրդի հաղթող համարված մասնակիցը պարտավոր է՝ հանձնարարագիր ստանալուց 30 րոպեի ընթացքում, վճարել իր առաջարկած գնի առնվազն 3 տոկոսի չափով գումար, որը սահմանված ժամկետում (10 օրվա ընթացքում) հետագա վճարումները կատարելու դեպքում նախավճարի հետ միասին հաշվարկվում է վճարման ենթակա գումարի մեջ, իսկ վճարումներից խուսափելու դեպքում չի վերադարձվում եւ տվյալ մասնակիցը զրկվում է աճուրդի մասնակցելու իրավունքից: Եթե աճուրդում հաղթող համարված մասնակիցը սահմանված ժամկետում (հանձնարարագիր ստանալուց 30 րոպեի ընթացքում) վճարում է իր առաջարկած գնի առնվազն 5 տոկոսի չափով գումար, ապա նա ճանաչվում է աճուրդի հաղթող եւ ստորագրում է աճուրդի արդյունքների մասին արձանագրությունը: Աճուրդում վաճառված յուրաքանչյուր լոտի գոյացած գինը նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափը չգերազանցելու դեպքում հաղթող մասնակիցը աճուրդի արդյունքների մասին արձանագրության ստորագրման օրը վճարում է լոտի ամբողջ գումարը:

Աճուրդում չհաղթող մասնակցին, մուծված նախավճարը վերադարձվում է վերջինիս դիմելուց հետո եռօրյա ժամկետում:

Գույքը գտնվում է ք.Երեւան, Կառավարական թիվ 1 մասնաշենքի բակում: Վաճառվող լոտերին ծանոթանալու համար զանգահարել 52-63-36 հեռախոսահամարով:

Աճուրդի կանոնակարգին ծանոթանալու (որը տրամադրվում է դիմումի առկայության դեպքում, մեկ օրվա ընթացքում, պատճենահանման ծախսերը վճարելու պայմանով) եւ լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել ք.Երեւան, Դ.Անհաղթ 23 /4-րդ հարկ/ հասցեով կամ զանգահարել աճուրդային հանձնաժողովին՝ հեռախոս՝ 23-73-00, ինտերնետ՝ URL: //www.privatization.am:

Հնարավոր փոփոխություններն ու լրացումները կհրապարակվեն այն ձեւով, ինչպես կատարվել է աճուրդի մասին սույն հրապարակային ծանուցումը:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության կողմից մասնավորեցման կամ օտարման ներկայացվող պետական գույքը գնահատելու համար գնահատող կազմակերպության (անկախ գնահատողի) ընտրության նպատակով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչությունը հայտարարում է մրցույթ:

Մրցույթին կարող են մասնակցել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով գնահատման գործունեություն իրականացնելու լիցենզիա (թույլտվություն) ունեցող առեւտրային կազմակերպությունները, որոնք բավարարում են հետեւյալ պահանջները.

- կազմակերպությունն ունի գնահատման գործունեություն իրականացնելու լիցենզիա (թույլտվություն) ունեցող առնվազն 1 (մեկ) աշխատակից,
- ունի գնահատման բնագավառում իրականացված գործառույթների առնվազն 2 (երկու) տարվա փորձ:

Մրցույթի մասնակիցները պետք է մինչեւ սույն թվականի հոկտեմբերի 14-ը, մինչեւ ժամը 13-00-ն ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն (4-րդ հարկ, 438 սենյակ) ներկայացնեն վերոնշյալ պայմանները հավաստող համապատասխան փաստաթղթերը, ինչպես նաեւ

- իրենց կողմից մատուցվող ծառայությունների սակագները՝ անշարժ գույքի, հողատարածքի, շարժական գույքի, ընկերության բաժնետոմսերի գնահատման սակագները ներկայացնելով առանձին-առանձին,
- տեղեկանք գնահատման ընթացքում իրենց կողմից օգտագործվող մեթոդների, դրանց ընտրության վերաբերյալ,
- տեղեկանք իրենց կողմից կատարված աշխատանքների վերաբերյալ՝ նշելով դրանցից առավել ծավալունների եւ հաջողվածների մասին:

Մրցույթի հաղթողի կատարած աշխատանք(ներ)ի դիմաց վճարումները կիրականացվեն տվյալ պետական գույքի մասնավորեցման կամ օտարման գործարքը կնքելուց հետո:

Մրցույթը կայանալու է 2008 թվականի հոկտեմբերի 17-ին, ժամը 16-00-ին ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության շենքում (հասցեն՝ ք.Երեւան, Տիգրան Մեծի 4, 3-րդ հարկ, 321 սենյակ):

Մատուցվող ծառայությունների ծավալների, մեկնարկային սակագների եւ այլ տեղեկությունների համար զանգահարել 527635 հեռախոսահամարով:

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն

Գրախոսություն

Գիրքին խորագիրն ունի երկու լրացում՝ «Մեկնաբանութիւններ, վերլուծումներ, ճնարկումներ, խորհրդածութիւններ» եւ «Ա. հատոր»: Սա կը նշանակէ, թէ նախատեսուած է հրատարակել ժողովածուի ուրիշ հատորներ եւս:

Ժողովածուն հրատարակութեան պատրաստած է Մերձաւոր Արեւելքի Հայ աւետարանական եկեղեցիներու միութեան հրատարակչական գրասենեակը, իսկ խմբագիրն է նոյն միութեան պարբերաթերթերու խմբագիր դոկտ. **Երուանդ Քասունին**: Հեղինակը հատորը նուիրած է իր հօրը՝ «բազմավաստակ ազգային-հասարակական գործիչ, հրատարակագիր, երգիծագիր, գրող ու թարգմանիչ» Յովհաննէս Աղպաշեանին եւ «բարեհամբոյր, հոգատար եւ առատինի» մօրը՝ Մարի Աղպաշեանին: Հատորը լոյս տեսած է ԱՄՆ-ն տէր եւ տիկին **Բաբգէն** եւ **Անահիտ Մկրտչեաններու** մեկենասութեամբ:

Պարոյր Աղպաշեանն ունի աւելի քան երեքուկէս տասնամեակի հրատարակագրական ու խմբագրական վաստակ, որոնց վերջին 17 տարիները՝ իբրեւ ՌԱԿ-ի «Զարթօնք» օրաթերթի խմբագիր (2008-ի գարնանը վերայայտնուած «Զարթօնք»-ի հրատարակիչները «Վարչական ազդ»-ով մը թերթի վերահրատարակուած առաջին թիւին մէջ կուրանային այս վաստակը... առանց դոյզն ամօթի):

ԳԵՎՈՐԳ ԵԱՂԲԾՅԱՆ
Ազգ լրագրող, պատմական գիտութիւններու թեկնածու

Պարոյր Աղպաշեան. «Ապրուած հրապարակագրութիւն՝ յետադարձ հայեացքով»

տպ. «Փաուլ Ֆոթոկրաֆիւր», Պէյրութ, 2008, 272 էջ (17 24 սմ)

Հատորը կը սկսի հեղինակին ստորագրած «Այս հրատարակութեան առիթով» պարզաբանումով, ուր ան կը յայտնէ, թէ երբ փափաքած է մէկ հատորով լոյս ընծայել իր հրապարակագրութեան ընտրանին, համոզուեր է, որ այդ դժուար պիտի ըլլայ: Ուստի, որոշեր է առաջին հատորով վերատպել «գէթ անժամանակավրէպայինները»: Աղպաշեան կը յայտնէ, թէ այս ժողովածուին բոլոր նիւթերը ժամանակին լոյս տեսած են «Զարթօնք»-ի մէջ, «ուր իմ հրապարակագրութիւնս ծնունդ առաւ ու պատասխանատու խմբագրի առաքելութիւնս շարունակուեցաւ, իբրեւ հարազատ օրագիր»: Այս առթիւ տեղին է նշել, որ 2006-ի վերջին նոյն հեղինակէն լոյս տեսած էին նոյն օրաթերթի յոգիս-օգոստոսեան թիւերուն մէջ լոյս տեսած խմբագրականները իսրայելեան հերթական անարգ ներխուժման դատապարտումով՝ «Ներխուժած Լիբանանի աննկուն կամքը» պայմանական խորագրով: Նոյն տարուան թուականով լոյս տեսած է նաեւ «Արեւմտահայ գրողներու լեզուամտածողութիւնն ու բառապաշարային շերտաւորումները» լեզուագիտական-բանասիրական մենագրութիւնը: Դոկտ. Ե. Քասունի «Փոխան Յառաջաբանի» գրութեան մէջ կը կատարէ գնահատումը Պ. Աղպաշեանի հրապարակագրութեան: Ան իրաւամբ դիտել կուտայ, թէ այդ էջերն ունին «Ժամանակագրութեան մը բնոյթ», որով «վաղուան պատմագիտութեան համար սկզբնաղբիւր գործածուելու բոլոր տուեալներով հարուստ են»): Ան կը նշդնէ նաեւ «կարեւոր իրողութիւն մը»՝ «հրապարակագիր Պարոյր Աղպաշեանի հայրենաճանաչումը» (կ՚աւելցնէինք՝ «նաեւ որոշակի սփիւռքաճանաչումը»,- Գ. Ե.): Քասունի իր խօսքը կատարէ՝ գրելով «Հատորի մը մէջ մէկտեղուած հրապարակագրական իր այս էջերով, Պարոյր Աղպաշեան՝ շուրջ մէկ տասնամեակի (1990-1999 թթ.) հայ ժողովուրդի պատմութիւնն է որ կը դնէ ընթերցողի սեղանին»):

Պ. Աղպաշեան ժողովածուի գրութիւնները պայմանականօրէն դասակարգած է չորս մասերու մէջ՝ «Սփիւռք», «Հայաստան», «Արցախ» եւ «Եկեղեցի» խորագիրներու տակ : Այս առթիւ ունինք լուրջ ճնարտութիւն մը: Երկրորդ եւ երրորդ վերնագիրները կամ անոնցմէ գոնէ մէկը կարիք ունէր փոփոխութեան ենթարկման, քանի որ Արցախն իսկապէս Հայաստանի (այն ալ՝ հայոց ամբողջական հայրենիքի իմաստով) անբաժան մասն է:

«Սփիւռք» մասը կը մէկտեղէ 29 հրապարակում: Ասոնց մէջ լայնօրէն կը ճնարկուին ոչ միայն Սփիւռք-Սփիւռք, այլեւ՝ հայրենիք-սփիւռք յարաբերութիւնները, կ՚ըլլան ճնարտութիւններ, յաճախ անհասցէ, երբեմն ակնարկելով ՀՅԴ-ի մենաշնորհական նկրտումներուն: Օրինակ, «Մոլորանքներ, հարցադրումներ ու մատնանշումներ» գրութեան մէջ կը կարդանք. «...տարիներ միայն իրար բզքտեցինք ու զիրար ճնարտեցինք, եւ, ամենէն կարեւորը, տարիներ ամէն ինչ շրջուած ներկայացուցինք ու ծոտ հայելիով դիտեցինք»: Իսկ յաջորդ՝ «Խոշորացոյց կամ մանրադիտակ հո՞ն ուր պէտք է» գրութեան ամենէն սկիզբը Պ. Աղպաշեան մատը կը դնէ հայկական իրականութեան ամենացատս վէրքերէն մէկուն վրայ. «Գնահատանքի մեր արժէքափը, դժբախտաբար, միշտ չէ որ հիմնուած է անկեղծութեան, առարկայականութեան եւ արժանապատուութեան վրայ»: Աղպաշեան խօսքէն կը դատարկէ հայրենական պետութեան իշխանաւորներու (կ՚աւելցնէինք՝ նաեւ ժողովուրդի) մեծամասնութեան մօտ Սփիւռքի նկատմամբ բացասական կարծրատիպերը, Սփիւռքը միայն «կթու կով» դիտարկելու վերաբերմունքը: «Իրատնքները չեն կրնար մենաշնորհեալ ըլլալ» հրապարակման մէջ ան կը բողոքէ. «Բայց արդեօք կարելի՞ է համակերպիլ այն մտայնութեան, որ Հայաստանէն դուրս ապրող հայեր իրատնք չունին իրենց մասնակցութիւնը բերելու հայրենակերտումին... Ինչո՞ւ այս ախտագին, այլապէս ալ արտառոց հոգեբանութիւնը, որ ո՛չ մէկ հիմք ունի, եւ ո՛չ մէջ արդարացում»: Գրութեան աւարտին ան իրաւամբ կը հարցնէ. «Հայրենի հողը կը պատկանի համայն հայ ժողովուրդին, իւրաքանչիւր հայուն, ան հոն ապրի թէ ոչ, քանի անիկա վախճանական հանգրուանն է բոլորին»: Մենք կը ճշդէինք. «Հայրենի հողը (իմա՝ հայոց հայրենիքը, Հայաստանը) հայոց նախկին, ներկայ եւ ապագայ բոլոր սերունդներու հաւասարական սեփականութիւնն է:

Որեւէ համագործակցութեան սկիզբը փոխադարձ ճանաչողութիւնն է, որմէ կրնայ սկիզբ առնել փոխադարձ վստահութիւնը: Այս կանոնէն չի՛ կրնար շեղիլ Հայրենիք-Սփիւռք համագործակցութիւնը, զոր տեղի-անտեղի կը շեփորուի Հայրենիքի թէ Սփիւռքի մէջ: Այս տեսակէտէն շա՛տ տեղին են Աղպաշեանի վերլուծումները իր «Սփիւռքը ճանչնալու անտեղի յաւակնութիւններ» հրապարակման մէջ, ուր ան, ի միջի այլոց, կը գրէ. «Լաւ է որ կարգ մը «հասկցող» մարդիկ պարկեշտութիւնը կ՚ունենան Սփիւռքը նկատելու «մեծ անծանօթ» մը, եւ կը խուսափին բանգիտութենէ, ինչ որ բարենիշ է իրենց համար, եւ ոչ երբեմ՝ նուաստացում: .

Եւ անբնական ոչինչ կայ այս իրողութեան մէջ, որովհետեւ Սփիւռքը Սփիւռքին... չի ճանչնար տակաւին, ալ ո՞ր մնաց հայրենաբնակը՝ Սփիւռքին: Աւելին՝ դժբախտաբար, նոյն գաղութին մէջ գոյութիւն ունեցող ու գործող կազմակերպութիւններ՝ իրարու անծանօթներ են»: 14 յունիս 1991-ին գրուած այս տողերէն աւելի քան 17 տարի ետ, այս ուղղութեամբ լուրջ քայլ մըն իսկ չէ կատարած՝ չհաշուած Հայրենիք-Սփիւռք ֆոլքլորային խորհրդաժողովները, համահայկական խաղերը, «Մէկ ազգ, մէկ մշակոյթ» խամաճիկահանդէսները եւ նման միմոսութիւնները...

«Սփիւռք» մասի որոշ հրապարակումներ ալ ուշադրաւած են անբովանդակ, երբեմ իրականութիւն չդարձող, դրամի համ տուած «ազգային միասնականութեանը» սփիւռքահայ գաղթօճախներուն մէջ, ինչպէս նաեւ Մեծ եղեռնի միջազգայնօրէն ճանաչման հոլովոյթին մէջ այդ անգոյ միասնականութեան անչափ կարեւորութեան հարցերուն:

«Հայաստան» մասը կը մէկտեղէ 38 հրապարակում, ուր կը ներկայացուին ու կը վերլուծուին խորհրդային Հայաստանի եւ անոր յաջորդած Հայաստանի Հանրապետութեան յարաբերութեան վերիվայրումները պատմականօրէն չափազանց փոքրկուն 1990ական թուականներուն: Պարոյր Աղպաշեանը կողմ է անկախութեան, սակայն կտրականօրէն դէմ՝ հակառակականութեան ու նամանաւանդ՝ թուրքերուն հետ սիրաբանելու՝ Երեւանի նոր իշխանաւորներէն ոմանց վտանգաւոր խաղակականութեան: Ան խստօրէն կը դատապարտէ նաեւ Հ. 3. Դաշնակցութիւնը՝ առանց զայն անուանելու՝ հայրենական խաղակականութեան մէջ իր վարած արկածախնդրական գործունէութեան համար: Աղպաշեան կոչ կ՚ուղղէ համախմբուիլ նոր իշխանութեան շուրջ» (19 սեպտեմբեր 1990-ի հրապարակման վերնագիրն է), թէեւ չի զլանար ի հարկին ճնարտելու վերջինիս՝ իր կարծիքով՝ սխալ քայլերը: Աղպաշեան այդ իշխանութենէն կը պահանջէ անյապաղ վերջ տալ զինեալ խմբաւորումներուն եւ կազմել ազգային մէ՛կ բանակ: Կարգ մը հրապարակումներ ալ նուիրուած են ամբողջաստիրութենէ ժողովրդավարութիւն անցումի՝ բարդ, ցատս գործընթացին, «սեփականաշնորհում» պիտակի տակ պետական-հանրային ունեցուածքի կողոպուտին կամ փոշիացման, «այլասերիչ կապկումներու, ընդօրինակութիւններու ու հեռեւողութիւնների յանկարծական հոսք»ին եւ հայրենաբնակ հայութեան ազգային դիմագծի խեղաթիւրման փորձերուն, մասնաւորաբար՝ ազգաքանդ աղանդներու ներխուժումին ու անարգել գործունէութեան եւ այլ բազմապիսի հարցերու, որոնք կը յուզէին ու այսօր ալ կը յուզեն հայը՝ հայրենաբնակ թէ սփիւռքահայ: Աղպաշեան կը դատապարտէ ՀՅ նախագահ Ռոբերթ Քոչարեանի այցը Իսրայէլ, նկատի ունենալով ոչ միայն հայկական մեծաթիւ գաղութներու առկայութիւնը Մերձաւոր ու Միջին Արեւելքի երկիրներուն մէջ, այլեւ՝ Իսրայէլի ցեղասպանական քաղաքականութիւնը պաղեստինցի արաբներուն նկատմամբ եւ ռազմաքաղաքական դաշինքը Հայաստանի Հանրապետութիւնը շրջափակած Թուրքիոյ հետ:

Ուշագրաւ են յատկապէս Համահայկական առաջին խորհրդաժողովի (սեպտ. 1999) նախօրեակին, ընթացքին ու անկէ ետ Պարոյր Աղպաշեանի հրապարակումները. «Խօսեցնող խորհրդաժողովը կամ քիչ մը բաներ» հրապարակման սկիզբը Պ. Աղպաշեան իր վրդովմունքը կը յայտնէ այն տխուր փաստի առթիւ, որ օրակարգի վրայ չէր խորհրդաժողովին «գլխաւոր հարցը՝ արտագաղթը: Ան տեղին հարց կուտայ. «...ի՞նչ իմաստ ունի որեւէ խորհրդաժողով, որեւէ համագումար, երբ հայրենիքը կը տուայտի մահոգիչ արտահոսքէ մը»: Ան, իբրեւ «ահատոր պատկեր» կը մէջբերէ խորհրդաժողովի ներկաներէն ակադեմիկոս Վլատիմիր Խոճամէկեանի խօսքը. «Երիտասարդութիւնը փախչում է, գնում է, իսկ Հայաստանը ծերանում է»: Աղպաշեան դժգոհութիւն կը յայտնէ խորհրդաժողովի ելոյթներու զգալի մասի «բաբլոն»ային ըլլալու իրողութեան առթիւ, պահանջելով նման հաւաքներու սուղ ժամանակը յատկացնել գործնական արդիւնքներ առաջնորդող ելոյթներու եւ ճնարկումներու: «Խորհրդաժողովէն սպասելի կամ յաջորդ մարտահրաւէրը» ամփոփիչ հրապարակման մէջ (գրուած 26 հոկտեմբեր 199-ին), Աղպաշեան կ՚ընդգծէ իր եզրակացութիւնը Հայաստան-Սփիւռք առաջին խորհրդաժողովէն. «Կարեւոր իրադարձութիւն մըն էր, նոյնիսկ՝ անկիւնադարձային, բայց իր գործընթացով եւ արդիւնքով, այժմ՝ կրատական»:

Ի հարկէ, անհնար էր չգրել 27 հոկտեմբեր 1999-ի ահատոր ոճրագործութեան մասին, որուն Պ. Աղպաշեան անդրադարձած է բազմաթիւ հրապարակումներով, որոնցմէ ընդամէնը մէկ հատ ան ընդգրկած է այս ժողովածուին մէջ: Աղպաշեան չի հաւատար, թէ հինգ մարդասպանները ինքնագլուխ գործած են: Ան կը գրէ. «Միգուցէ, բայց յստակ է, որ այս «անհաւատարակիրները» կամ «վրէժխնդիրները» ունէին քողարկեալ հովանաւորներ, կը գործադրէին հրահանգ մը կամ կը հետեւէին ցուցմունքի մը», համոզում մը, որ տիրական է համայն հայութեան մէջ: Աղպաշեան խստօրէն կը ճնարտէ հայրենի ղեկավարներու գործելակերպը ժողովածուի այս մասին վերջին՝ «Ծանծաղուտ ու ճահճախուտ վիճակը Հայրենիքին» հրապարակման մէջ, որու աւարտին կը կարդանք. «Ցըլլալիք բաներ կը պատահին, եւ ո՞վ զարմանք, ընդհանրապէս հեռացուողներ կը մնան ի պատուի, «նախկին» պաշտօնէն անցնելով աւելի «պատասխանատու»-ին, պաշտելիներ կը մնան անպարտ, դատավարութիւններ՝ անաւարտ, ոճիրներու հեղինակներ՝ անյայտ»: Մեր կարծիքով, Լեւոն Տէր-Պետրոսեանի նախագահութեան օրով ծնունդ առած եւ Ռոբերթ Քոչարեանի 10-ամեայ նախագահութեան օրէ ահռելի չափերու հասած այս երեւոյթը անխուսափելիօրէն առաջնորդելու է պետականութեան կորուստին, եթէ վիճակն անյապաղ չբարեշրջի... Այլանդակութիւններն այնքան բազմացան, որ «ստեղծեցին այնպիսի հակոտնեայ մթնոլորտ մը, որ ժողովուրդը նոյնիսկ «անիծեց» անկախութիւնն ու անոր կերտիչները:

Հայոց պատմութեան մէջ անհնար է 1990-ական թուականները, մանաւանդ անոնց առաջին կէսը պատկերացնել առանց Արցախեան շարժման ու Արցախեան ազատամարտին: Պարոյր Աղպաշեան անոնց վերաբերեալ իր բազմատասնեակ հրապարակումներէն 21-ը հաւաքած է այս ժողովածուի «Արցախ» խորագրուած մասին մէջ: Իրաքանչիւր իսկական հայի նման, հեղինակը կը մտահոգուի ու կը տխրի հայկական բնակավայրերու պարպումով եւ ռազմաճակատներուն վրայ արձանագրուող անյաջողութիւններով եւ կը հպարտանայ ու կ՚ոգեւորուի հայ ազատամարտիկներու յաղթանակներով: Ան կը զգուշացնէ «Արցախը քաղաքական խաղաթուղթի վերածող կողմեր»-ու խարդաւանքներէն: Որոշ հրապարակումներու մէջ հեղինակը խստօրէն կը դատապարտէ Արցախեան հակամարտութեանը կրօնական բնոյթ հաղորդելու թուրք-ատրպէյճանական փորձերը՝ կոչ ուղղելով Սփիւռքի, մասնաւորաբար Մերձաւոր Արեւելքի հայութեան՝ արժանի հակահարուած տալ այդ նկրտումներուն: Աղպաշեան կոչ կ՚ուղղէ միշտ ըլլալու «նախապատրաստ՝ հաւանական անակնկալներու առջեւ, որոնք կրնան թանկ արժել մեր ժողովուրդին»: Հրապարակագիրը իր վրդովմունքը կ՚արտայայտէ «Արցախի մարտիրոսական պայքարը» «կուսակցականացնելու» ոմանց փորձերուն առթիւ՝ յայտնապէս նկատի ունենալով Հ. 3. Դաշնակցութիւնը: «Խաղաղ լուծում»ի միակ ճամբան կամ Արցախի պատկենալիութիւնը» հրապարակումը կ՚աւարտի աներեր համոզումով մը. «Խաղաղ լուծում»ը ՄԷԿ ԵՒ ԱՆՎԵՐԱԴԱՐՁ ՃԱՄԲԱՅ ՈՒՆԻ. ԱՐՑԱԽԸ ԿԸ ՊԱՏԿԱՆԻ ԻՐ՝ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ»: Հասկնալի է, որ Արցախի հարցի միջազգային քաղաքական ու դիւանագիտական ճնարկումներու ժամանակ յաճախ հնչող «տարածքային ամբողջականութեան սկզբունք»ը մերժելի է հեղինակին համար՝ ընդունելի եւ «անհրաժեշտ» ըլլալով «ազգերու ազատ ինքնորոշման իրաւունք»ը, առաջինի հիման վրայ առաջարկները յայտարարելով սրկացման տանող եւ մերժելի: «...Ղարաբաղցիք են անոր (Լեռնային Ղարաբաղի,- Գ. Ե.) ԻՐԱՒԱԿԱՆ ԵՒ ԻՐԱԿԱՆ տէրը»,- կը յայտարարէ Աղպաշեան: Ան, ի հարկէ, կը դատապարտէ Արեւմուտքի (լռելեայն՝ նաեւ Ռուսիոյ) մեծապետական քաղաքականութիւնը, որը նաւթը կը նախընտրէ ժողովուրդներու արդար իրաւունքներէն. «Քարիւղի սին քաղաքականութիւնը չծառայեցնել Արցախի հաւուոյն»,- կը պահանջէ Աղպաշեան, թէեւ ո՞վ է զայն ու անոր

Շարունակությունը՝ էջ 2

Տարբերություններ

Դժվար է մուսուլման հայ լինելը...

ՊԱՐՈՒՅՐ ԳՈՒՅՈՒՄՋՅԱՆ

Մեր հայրենակից Պարույր Գույումջյանը «ԱԿՕՍ» շաբաթաթերթի էջերում հիշյալ վերնագրով մի հոդված է գրել՝ անդրադառնալով հրատապ դարձած այս հարցին: Խոսքը Եղեռնի ժամանակ հարկադրաբար մուսուլմանություն ընդունած հայերի մանակ հարկադրաբար մուսուլմանություն ընդունած հայերի ներկա վիճակի մասին է, որոնց կյանքն իրականում վեր է ածվել դժոխքի: 80-ական թվականներից հետո այս կարգի հայերի խնդիրը սկսեց քննարկվել մամուլում: Բնաջնջվելուց խույս տալու նպատակով 1915-1922 թվականներին հաս ու կենս հայեր ստիպված են եղել ընդունել մահմեդականություն: Այսօր այդ հաս ու կենս թուրքացած հայերը եւ նրանց սերունդներն աճել են որպես թուրք, բայց պարզվում է, որ նրանք «իսկական» թուրք չեն, այլ ցածր կարգի արարածներ, որոնք հալածվում են ու արհամարհվում «իսկական» թուրքերի կողմից: Այդ իսկական թուրքերը մոռանում են, որ իրենցից շատերի ծագումը նույնպես թուրքական չէ, այլ հույնի, սլավոնի, հայի եւ ալբանացու, հունգարի ու չեխի է: Այս մուսուլման դարձած հայերի մեծ մասը ժամանակին ծնվել է թուրքի հետ բռնի ամուսնացած հայ աղջիկներից կամ որպես ծառա, ձրի աշխատող՝ վերցված է եղել թուրք ընտանիքներում մուսուլմանացրած երեխաներից, որոնց հիմա «շուտ տված հայեր» են անվանում:

Նրանց հաճախած մզկիթները (ջամիները) թուրքերն անվանում են «գյավուրի մզկիթներ» եւ խույս են տալիս նույն մզկիթները մտնելուց, արհամարհում են, վիրավորում ամեն առիթով:

Հայ հեղինակն անձամբ Սամբուլից ուղեւորվել է Ադիյաման, ապա Գերմանիա, հանդիպել եւ զրուցել այդ կարգի անորոշ ճակատագիր ունեցողների՝ այսպես հայ-թուրքերի հետ, որոնց թիվը ներկայումս բավական մեծ է:

Նրանց մի մասը ցանկանում է քրիստոնյա դառնալ, մյուս մասը մնում է որպես մուսուլման (թուրք), սակայն արհամարհված վիճակում:

Մի թուրք կին գիտնական սեւծովյան եզերքների բնակչությունից արյան հետազոտմամբ որոշել է, որ «շուտ եկած» հայերն, իրոք, եղել են հայկական ծագմամբ եւ ներկայումս նրանց թիվը բավական շատ է եւ անցնում է 700 հազարից, թերեւս կազմում է 1 միլիոն:

Իհարկե, նման բացահայտումները ավելի են սրում հարաբերությունները «շուտ տված» հայերի եւ «իսկական թուրքերի» միջեւ՝ ոչնչով չօգնելով ստեղծված վիճակին: Նման մարդիկ ուզում են ասել, որ ներկայումս Թուրքիա կոչված իրենց հայրենիքը Հայաստանն է եղել, իրենք են երկրի իսկական տերերը... Բայց...

Նաբանական) հետազոտություն կատարեց եւ հրապարակեց. «Սեւ ծովի շրջանի ժողովրդի հարյուրից վաթսունի ծագումը հայ կազմություն է դրսեւորում»: Նման կարծիքի պնդումը, ես մտածում եմ, որ մեծ սխալ է: Այս խնդրով միլիոններին բացատրություն կամ պարզաբանում տալու միտքը յուրաքանչյուրի հետ նաեւ ինձ է սարսափեցնում: Ահա այստեղ պետք է նշվի Հրանտ Դինքի կարեւոր տեսակետներից վերցված հետեւյալ միտքը. «Մեռածների մասին խոսելը մեզ ճշմարիտ ոչինչ, մի ճար չի տալիս: Խոսենք մի փիչ մնացածների մասին. գուցե եւ բարեկամ ենք ելնում: Մնացածների ով լինելը ի հայտ կգա. մարդիկ միմյանց այդքան հետաքրքիր չեն ասի՝ «հայի բիճ», «հայի ճյուղ»՝ նվաստացնելով: Գուցե յուրաքանչյուրի մեջ բարեկամ չենք գտնի, սակայն մարդկանց հեռացնելու փոխարեն՝ կմոտեցնենք իրար:

Գերմանիայում Քեմալ Յալչընի հետ տեսակցության առիթ գտա «Քեզ հետ սիրտս կխոսդա», «Շեկ հարսը» (Սարի գյալին) հայտնի գրքերով: «Բակում մնացածները» հայտնի գրքով ներկայանալս արդարացրեց՝ ժողովուրդը սիրել է այդ գրքերը, դրանք տարածում են գտել:

1915-ին փրկված «Քեզ հետ սիրտս կխոսդա» գիրքը տարածվեց Անատոլիայում, քանզի փրկվածների ապրումներն են այնտեղ գտնվում:

2004 թ. տարածված «Շեկ հարսը» գրքի միջոցով իմացա «թաքնված հայերի» գոյության մասին առաջին անգամ Սամբուլում: Իսկ գնալով Ադիյաման՝ նրանց պատմությունը հենց իրենցից իմացա: 2004-ին Թուրքիայում ապրողների խնդիրներին հենց տեղում ծանոթացա, եղա վկա: Այնտեղի հայերը երկու խումբ են: Մի մասը հետքրքրության է շրջվել, Ադիյամանում գտնվող սիրիացիների եկեղեցիներում է ծիսակատարություններն անում, մի խոշոր մասն էլ գերադասում է մոռացման լինելը:

«Հաճախ այս վիճակը նույն համայնքի ներսում ընդհարումների տեղիք է տալիս: Ուստի «Շեկ հարսը» գրքում այս պատմություններն են

Շարունակությունը՝ էջ 5

Ե էջից

Պարույր Աղպաշեան. «Ապրուած ...

նմանները լսողը... Նաւթով հարբածները հայերէն չեն գիտեր, իսկ Պաքուի նաւթը ատրպէյճաներէ՛ն կը բուրէ... 20 Յունիս 1998-ին տպագրուած «Լ. Ղ. Հ.-ը «լեմոն» չէ, որն դեսպան Լեմընն» բառախաղային վերնագրով հրապարակման մէջ, Պ. Աղպաշեան ուշագրաւ դիտարկում մը կ'ընէ. «Եթէ պիտի կարծուի, թէ Հայաստանի «պուրսա»-ն չէ նուազած յաչս Արեւմուտքին կամ Ա. Մ. Նահանգներու, թէկուզ՝ Ռուսիոյ, ապա պիտի ընդունիլ նաեւ որ Ազրպէյճանի «պուրսա»-ն բարձրացած է»: Այսօր, 10 տարիետ, երբ նաւթի տակառին գինը 20 դոլարէն բարձրանալով արդէն նուազած է 130 դոլարի սահմանը, Ազրպէյճանի «պուրսա»-ն անհամեմատ բարձրացած է ի վնաս... Ժողովուրդներու արդար իրաւունքներուն: Սա՛ է դժբախտ ու անարդար իրողութիւնը. բարոյականութիւնը չի՛ համատեղուիր քաղաքականութեան հետ...

Ժողովածուի «Արցախ» մասի վերջին՝ «Ընդհանուր պետութիւնը կառուցողակա՞ն է, թէ՞ քանդողական» հոդեորական հարցադրումով վերնագիր ունեցող հրապարակման մէջ Պարոյր Աղպաշեան կը քննարկէ ու կը վերլուծէ Արցախ-Ազրպէյճան «ընդհանուր պետութիւն» գաղափարը, զոր առաջ քաշած էր «միջնորդ» Մինսքի խումբը: Ան կը խուսափի վճռական պատասխան տալէ իր իսկ առաջ դրած հարցումին, մինչդեռ ան պէտք է յստակորէն մերժէ՛ր այս «լուծում»ը, քանի որ ինչպէս հայրենի հողը, այնպէս ալ հայրենի տարածքներուն բացառապէս հայկական գերիշխանութիւնը զիջելու տարբերակները քննարկման առարկայ դարձնելն իսկ անընդունելի է, մեր կարծիքով՝ դաւաճանութեան համազօր: Ինչպէս նշած ենք գրախօսութեան մէջ, Հայրենիքը հայոց (եւ միմիա՛յն հայոց) սեփականութիւնն է, իսկ սեփականութեանը տիրութի՛ւն կ'ընեն...

Ժողովածուին վերջին մասը իր հրապարակումներու թէ քանակով (9 հատ) եւ թէ՛ էջաքանակով (էջ 233-263) թեւեր կը զիջի նախորդ երեք մասերուն, այդուհանդերձ, «Եկեղեցի» խորագրուած այս մասին նիւթերը իրենց ցատութեամբ, հրատապութեամբ եւ այժմէականութեամբ ոչ միայն չեն զիջիր նախորդներուն, այլեւ, մեր կարծիքով, ա՛լ աւելի ծանրակշիռ տարողութիւն ունին: Խօսքը կը վերաբերի Հայ եկեղեցւոյ պառակտման, որու անփառունակ յիսնամեակը անշշուկ անցաւ երկու տարի առաջ՝ կարծէք պառակտումն անցած ըլլար պատմութեան՝ վերջնականապէս: Հիւանդ ըլլալով հանդերձ այդ փաստը չընդունելը ոչ միայն չի բուժեր հիւանդը, այլեւ հիւանդութիւնը կը խորացնէ, երբեմն նոյնիսկ անբուժելի կը դարձնէ զայն:

Եկեղեցական տագնապին առնչութեամբ, Պարոյր Աղպաշեանի համոզումները չափազանց յստակ են՝ Հայ եկեղեցւոյ կեդրոնը մէկն է ու միակը՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածինը, որուն կ'ենթարկուին միւս Աթոռները ի հոգեւորս, պահպանելով իրենց վարչական ինքնուրոյնութիւնը: Այս համոզումը կը հակադրուի Անթիլիասի ու անոր ետին կանգնած քաղաքական ոյժի՝ Դաշնակցութեան (որու անունը չի՛ տար Պ. Աղպաշեան) դիրքորոշումներուն, որոնք Մեծի տանն Կիլիկիոյ կաթողիկոսութիւնը Մայր աթոռին իրաւահաւասար եւ անկէ անկախ կը յայտարարեն: Այս ելակէտէն, հրապարակագիրը խստագոյնս կը դատապարտէ Սփիւռքի թեմերուն մէջ պառակտումներ յառաջացնելու կամ եղած ճեղքերը խորացնելու Անթիլիասի որոշակի նախաձեռնութիւնները: Աղպաշեան շատ ճիշդ է, երբ Հայ եկեղեցւոյ պառակտումը կը յայտարարէ հայութեան կեանքին մէջ գլխաւոր դրսեւորումներէն մէկը «պաղ պատերազմ»ին, այն ալ՝ «գործադրութեամբ ոչ օտարներու (թուրքերու, հրեաներու) այլ նոյնիսկ՝ հայանուններու»: Տեղին է ուրեմն հարց տալ. երբ «Պաղ պատերազմ»-ը շուրջ երկու տասնամեակէ ի վեր աւարտած է, ինչո՞ւ կը շարունակուի այս պառակտումը...

Վազգէն Ա. Ամենայն հայոց կաթողիկոսի վախճանումէնետ, նոր կաթողիկոսի ընտրութեան նախընտրական շրջանին գրուած (21 մարտ, 1995) «Հայ եկեղեցին կուսակցականացնելէետ, քաղաքականացնելու վտանգաւոր փորձը» հրապարակման մէջ, Հայ եկեղեցւոյ միութեան հարցին մէջ Պ. Աղպաշեան հաւասարապէս կը քննադատէ թէ՛ ՀՅ նախագահ Լեւոն Տեր-Պետրոսեանի եւ թէ՛ անոր արգիլած ՀՅԴ-ի քաղաքականութիւնը: Ան կը գրէ. «Զարմանալին այն է, որ ոմանք այն միամտութիւնը ունին, թէ Գարեգին Բ.-ի Ամենայն Հայոց (կաթողիկոս,- Գ. Ե.) ըլլալով, եկեղեցական տագնապը պիտի լուծուի եւ ամէն ինչ իր տեղը պիտի գտնէ:

Բայց արդեօ՞ք այդպէս է. ան այդ հեղինակութիւնն ու ոյժը պիտի ունենա՞յ, Մեծի տանն Կիլիկիոյ կաթողիկոսութիւնը պիտի փոխէ՞ իր աւանդական քաղաքականութիւնը, բայց մանաւանդ արդեօ՞ք նոր կաթողիկոս մը պիտի չբազմի այդ գահին, եւ ըլլայ... «պարզն աւելի պարզական»: 13 տարի ետ, այս հարցումներուն պատասխանները աւելի քան յստակ են. վկայ Կանադայի թեմին մէջ Անթիլիասի յարուցած պառակտումը, վկա՛յ Դամասկոսի՝ Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան թեմին էջմիածնական իտացումը... սոսկ-փոսկ վկա՛յ երկու կաթողիկոսներու Տէր Զօր ուխտագնացութեան ոտնկոխած խայտառակութիւնը... Մի՞ մէկը թուենք: Եթէ «շաքար» բառն արտասանելով մարդու բերանը չի քաղցրանար, այնպէս ալ «Հայ եկեղեցին մէկ է, միասնական է» պոռոռալով Հայ եկեղեցին չի՛ վերամիաւորուիր, ո՛վ ալ ըլլայ այդ պոռացողը՝ կաթողիկո՞ս, թէ՞... փոլիքիոս:

«Երբ տակաւին կը խօսուի անհրաժեշտութեան եւ «վճռորոշութեան» լեզուով» հրապարակագրի երկու հրապարակումներուն մէջ Պ. Աղպաշեան խստագոյնս կը դատապարտէ Մեծի տանն Կիլիկիոյ կաթողիկոսական ընտրութեան տեղեկատուական մարմնի ինքնազրոյցը՝ լոյս տեսած « Ա՞» շաբաթաթերթի 18 Մայիսի եւ 1 Յունիսի 1995-ի յաջորդական թիւերուն մէջ՝ այդ դրոյթները յայտարարելով «թխուածք», «անհեթեթութիւններ» եւ «դատարկախօսութիւն»: Այս հրապարակման առթիւ Պ. Աղպաշեան կ'ընէ յոյժ իրապաշտական եւ գերյոյժ ցաւալի հաստատում մը. «...Ստիպուած ենք ըսելու թէ այս (իմա՝ հատուածական,- Գ. Ե.) տրամաբանութեամբ ոչի՛նչ կրնայ փոխուիլ տխուր եղելոյթէն, այնքան ատեն, որ Եկեղեցին (իմա՝ Անթիլիասը) կուսակցականացած պահելու մարմաջը ի գործ է»: Մեր կարծիքով, այս նախադասութեան «կուսակցականացած» բառը ճիշդ կ'ըլլար փոխարինել «հատուածական» բառով, քանի որ Արամ Ա. կաթողիկոս յաջողած է անթիլիասական անընդունելի դրոյթներու եւ թեզերու կառին լծել նաեւ ոչ-դաշնակցականներ: Օ՜ ժամանակներ, օ՜ բարքեր...

1997-ի օգոստոսի առաջին կէսին Ս. Էջմիածնի մէջ զոյգ Աթոռներու հանդիպման առիթով գրած «Տեղին սպասումներ եւ Արդա՛ր ակնկալութիւններ» հրապարակման մէջ, ընդհանրապէս հաւասարակիր Պ. Աղպաշեանը դուրս կու գայ ափերէն ու առանց բառերը ծամծմելու, կը պոռթկայ. «Ասկէ առաջ բարձրաստիճան հանգամանատրներէ շա՜տ լսեցինք ու տակաւին կը լսենք յայտարարութիւններ, թէ՝ եկեղեցական տագնապ չկայ, իսկ եթէ կայ, այն ալ չնչին մաս մըն է, որ շուտով կամ ժամանակի ընթացքին չքանալու է:

Ասիկա ինքնախաբկանք է, հաւկոտութիւն է, աւելի ճիշդ՝ մեր Ազգային Եկեղեցւոյ ճակատին շրջուած անարգանք»:

Վերոնշեալ հանդիպման առթիւ լոյս տեսած «Միասնական հաղորդագրութեան»-ն անդրադառնալով իր «Քառասուն տարուան» անհարթութիւնն ու «Ինը տարուան տրամաբանութիւնը» հրապարակման մէջ, Պ. Աղպաշեան կը գրէ. «Եթէ կ'ըսուի՝ «Լեռը մուկ մը ծնաւ», այդ ալ չի համապատասխաներ իրականութեան, որովհետեւ համարեա ոչինչ ծնաւ անկէ (իմա՝ հանդիպումէն,- Գ. Ե.) (Ան կը յայտնէ, թէ նման հաղորդագրութիւններու մէջ մշտաներկայ «եղբայրական» ու «սիրալիր» բառերը «լսելէն ու կարդալէն գերյագեցաւ մեր ժողովուրդը»: Այսօր եւս, աւելի քան տասնամեակ մը ետ, կը շարունակուին այդ «եղբայրական սիրալիր»ութիւնները՝ երեք ամսուան ընթացքին կատարուող երկու միտնօրհնէքներով եւ մասամբ նոցին...

Գրախօսուող ժողովածուն Կ'ապարտի անոր բովանդակութեան արաբերէն ու անգլերէն ամփոփ ծանոթագրութեամբ ու բովանդակութեան ցանկով:

Իր ազգի, հայրենիքի, եկեղեցւոյ, ազգային հաստատութեանց եւ հայ մշակոյթի ներկայով ու ապագայով տառապող մտատրականն է Պարոյր Աղպաշեան: Անոր ոճը պարզ է, բայց հատու, թէեւ ընդհանրապէս հեռու անձնատրումներէ՝ մեծ մասամբ երեւոյթներո՛ւ, քան անձերու մասին դիտարկումներով ու վերլուծումներով:

... Ժողովածուն ընթերցելէ ետ. խմբագիրի՝ դոկտ. Երուանդ Քասունիի արժեւորումներուն կուզենք աւելցնել եւս մէկը՝ գրեթէ բոլոր հրապարակումներուն այժմեականութիւնը: Եթէ յատկանիշը կը վկայէ Պարոյր Աղպաշեանի հրապարակագրութեան բարձր որակի մասին, միա կողմէ, սակայն, խոր ցաւ կը պատճառէ, քանի որ 10-18 տարիէ ի վեր շատ փիչ բան, գրեթէ ոչինչ փոխուած է հայ իրականութեան մէջ, այն ալ՝ գլխաւորապէս արագացումով ընթացող համաշխարհային հոլովոյթի պայմաններուն մէջ...

Ժողովածուին հրապարակումները ընտրուած են բծախնդրութեամբ: Ակնբախ է նաեւ բծախնդիր խմբագրումը: Այդուհանդերձ,ժողովածուին մէջ կը հանդիպին փոքրաքանակ սխալներ, որոնք սակայն չեն նսեմացներ ժողովածուին դաստիարակչական եւ պատմական արժէքը:

Պարոյր Աղպաշեանի «Ապրուած հրապարակագրութիւն՝ յեսադարձ հայեացքով» ժողովածուի Ա. հատորը յոյս կը ներշնչէ, թէ ոչ շատ հեռու ապագային ընթերցողի դատաստանին կը յանձնուին) յաջորդները, որով աւելի՛ կը հարստանայ մեր հոգեւոր ու մտաւոր աշխարհը:

Վարձդ կատար, սիրելի՛ Պարոյր Աղպաշեան:

■

Գրչամրցություն

ՄԵԼԱՆՅԱ ԲԱԳԱԼՅԱՆ

Հմռված դռներն ու արխիվները մի օր, ի վերջո, բացվում են, եւ պատմության փակ էջերը ի հայտ են գալիս: Եվ որքան շուտ, այնքան լավ՝ տվյալ ժողովրդի համար: Պատմությունը անցյալի փորձ է, եւ այդ փորձի յուրացումն ինքնանպատակ չէ, այլ ուսանելի դաս՝ ներկա ժամանակների համար: Երբ խոսքը անցյալի մեր մշակույթի, գիտության առաջադեմ երեւույթների մասին է, մենք՝ որպես ժառանգորդներ, հետ նայելու անհրաժեշտությունը գիտակցում ու ամեն կերպ փորձում ենք չխզել այդ կապը եւ չմոռանալ դա: Նույն տրամաբանությամբ չպետք է անտեսել կամ հարեւանցի նայել անցյալի մեր սխալներին ու սայթաքումներին: Պատմության, ժողովրդի անցյալի դասի իմաստը սովորել-սովորեցնելն է: Հաջորդ սերունդների համար որպես հիմք՝ պատմական սկզբնաղբյուրներն են, վավերագիր-արձանագրությունները, փաստաթղթային արխիվները եւ դրանց արտացոլումը գրականության մեջ եւ արվեստում: Իսկ արվեստը, գրականությունը ստեղծագործողի անհատական մոտեցման ու մեկնաբանության արդյունք-արգասիքն է, իրականության ու երեւակայության ստեղծագործական խառնուրդ: Եվ որքան անկրկնելի ու ինքնատիպ՝ այնքան բարձր է արվեստի արժեքը:

Փաստավավերագրության (նաեւ ֆիլմերի) պարագայում գլխավորը փաստագրությունը ստուգաթես ներկայացնելն է, մեկնաբանություններն արվում են յուրովի, ինչն անում է ոչ միայն արվեստագետը, այլեւ հենց ինքը՝ պատմաբանը՝ պատմությունը դիտարկել, մեկնաբանելով ըստ նախասիրությունների (կուսակցական կամ այլ) եւ կամ քաղաքական նպատակահարմարության: (Դրա վառ վկայությունը սովետական պատմագրությունն է. ժամանակին մեզ անգիր հանձնարարվող ՍՄԿԿ պատմության կամ հենց հայ ժողովրդի պատմության դասագրքերը, որոնցից առաջինը դուրս շպրտվեց, երկրորդում խոշոր սրբագրումներ են արվում):

Կինոռեժիսոր **Տիգրան Խզմալյանը** երեք խաղարկային եւ տասներեք վավերագրական ֆիլմերի հեղինակ է, միջազգային մի շարք փառատոնների մրցանակակիր: Ֆիլմերից մեկը («Արամ Խաչատրյանի դարը») հռչակվեց 2005-ի լավագույն մշակութային նախագիծ մուլտիմեդիայի համաշխարհային մրցույթում: Մասնագիտությամբ բանասեր է, գիտությունների թեկնածու, տարբեր տարիներ աշխատել է Երեւանի պետական համալսարանում, դասավանդել ռուս գրականություն, գրականության պատմություն եւ տեսություն առարկաներ: Վերջին շրջանում ժուռնալիստիկայի ֆակուլտետում վարել է վավերագրական կինոյի դասընթացներ: Կատարել է նաեւ թարգմանական աշխատանքներ, հայերեն ներկայացնելով մ.թ.ա. 5-րդ դարի չին մտածող Լաո Ցզիի «Բնական հունի ուսմունքը» գիրքը:

Վերջին շրջանում մամուլն ակտիվորեն անդրադառնում է «Մոսկվա» կինոթատրոնի ցուցադրությունից (սեպտեմբերի 26-27-ին) հանված Տիգրան Խզմալյանի **«Սարդարապատ déjà vu»** ֆիլմի եւ դրան թեմատիկ առումով առնչվող նրա նախորդ՝ մշակույթի նախարարության պատվերով նկարահանած **«Սարդարապատ»** ֆիլմի շուրջ կատարվող իրադարձություններին: Այս երկու ֆիլմերի մասին գրվում եւ խոսվում է բավականին առատորեն, իսկ ֆիլմերը հանրության դատին չեն հանձնվում: Պարադոքս է: Փորձեցինք զուգել. կինոռեժիսորների հետ՝ մտովի պատկերացնելով ֆիլմը՝ եղած խոսակցություններից: Ռեժիսորը իրավացիորեն նկատում է. *«Ես պահանջում եմ ֆիլմի հետ վարվել այնպես, ինչպես ընդունված է, ցուցադրել, հետո գրաքննել, վերուծել, քննադատել: Ես համարում եմ, որ այդպես վարվելու որեւէ փորձ՝ իմ կամ մեկ ուրիշի ֆիլմի հետ, ոտղակի կամ անուղղակի գրաքննություն է: Խորհրդային ժամանակներում կային հատուկ մարդիկ, որոնք կարդում եւ դիտում էին այնպիսի գրքեր կամ ֆիլմեր, որոնք արգելվում եւ չէին ցուցադրվում, հետո հրաշառակով իրենց կարծիքն էին հայտնում, բայց մենք գոնե այդ սվերներով փորձում էինք վերականգնել այն, ինչ մեզ հասանելի չէր»:*

«Սարդարապատը» 1916-20-ականների իրադարձությունների մասին 39 րոպեանոց կինոնկար է, որի սցենարը Տ. Խզմալյանը գրել է մարտին, ֆիլմը հանձնվել է մայիսի կեսերին («Հայկ» կինոստուդիայի տնօրեն, Հայաստանի կինոգործիչների միության նախագահ Ռուբեն Գետոյանցի հավանությանն է արժանացել, մշակույթի նախարարը դեռ չէր հասցրել դիտել), ներկայացվելու էր 28-ին, ինչը չի կայացել: Ֆիլմը փաստավավերագրություն է՝ սկզբնաղբյուրային, արխիվային նյութերին համապատասխան հղումներով: Ֆիլմի մասին առաջին առարկությունը պատասխանական նամակի տեսքով «Հայկ» ստուդիայի տնօրեն Ռ. Գետոյանցից ստացվել է 4 ամիս անց, սեպտեմբերի 22-ին՝ երեք պատմաբանների՝ բավական իրարամերժ կարծիքներով: Մասնավորապես, Ցեղասպանության թանգարանի տնօրեն Հայկ Դեմոյանը առկա խմբագրմամբ ֆիլմի մասսայական տարածումը համարել է աննպատակահարմար, որպիսեսի իր կարծիքով, ֆիլմում անհաջող փորձ է արվել դարասկզբի պատմությունը դիտել այսօրվա իրողության տրիզմայով: Պրոֆ. Մհեր Կարապետյանը նշել է, որ չնայած առկա որոշ վրիպումներին, դրանք չեն կարող խոչընդոտել ֆիլմի ցուցադրմանը: Կինոռեժիսորը այսպես է մտածում. *«Ոչ ոք չպետք է պատմության մենաշնորհ ունենա: Ինձ տարօրինակ է թվում, երբ սկսում են քննարկել, թե ներկան կարելի՞ է դիտել պատմական փորձի հիման վրա, թե՞ ոչ: Բազմիցս ասել եմ, որ ֆիլմի բովանդակությունը պատմաբանների վերուծությանը թողնելու առաջարկը ես ընդունում եմ այնպես, ինչպես Հայոց ցեղասպանությունը պատմաբանների քննարկմանը հանձնելու թուրքերի առաջարկը»:*

«Սարդարապատ» ֆիլմի աշխատանքների ընթացքում կինոռեժիսորը ուսումնասիրել է բազմաթիվ փաստեր, արխիվային նյութեր, հայթայթել նոր տեսանյութեր՝ Հայաստանում եւ արտերկրում, հանդիպել մարդկանց, մասնավորապես Դանիել Բեկ-Փիրումովի մոսկվայաբնակ թոռան՝ Յուրի Բեկ-Փիրումովին: Այս ընթացքում հավաքված բազմաթիվ փաստագրական նյութերի հիման վրա նա սեփական նախաձեռնությամբ եւ միջոցներով ստեղծել է «Սարդարապատ déjà vu» ֆիլմը, որի 68 րոպե տեւողությամբ նկարահանումները վերաբերում են 1916-20 թվականների Կովկասյան ճակատին, Հայաստանի առաջին հանրապետության տարիներին, իսկ ամենակարեւորը՝ տեսանյութի մի մասն առաջին անգամ է հայտնվում էկրանին: Դրանք ժամանակին ռուսական, ամերիկյան, գերմանական կողմի արված նկարահանումներից են: Այս ֆիլմի արգելման պատճառը, ըստ կինոռեժիսորի, առաջինի չընդունելն է: Նա մտահոգված է 2-րդ ֆիլմի ճակատագրով, գտնելով, որ «Սարդարապատի» իրավունքը պատվիրողինն է: Երկրորդում օգտագործել է հոգեբանության մեջ կիրառվող մի հասկացողություն, ինչը նշանակում է մեկ անգամ տեսած: «Ընդամենը մարդկանց ուշադրությունն ուզում էի հրավիրել այն փաստին, որ մենք նույն փոցխի վրա կանգնում ենք նորից ու նորից, երբ պառակտված հասարակությունը, օտարացված իշխանությունը ճակատագրական պահերին մեզ դնում է ծանր իրավիճակում: Վերնախավը նման պահերին կամ բացակայում, կամ բոլորովին չի համապատասխանում օրվա պահանջներին»: «Ինձ բավական դժվար է ծռել, ջարդել, որքան էլ դա փորձեն անել՝ արգելելով իմ ֆիլմերը, միեւնույն է՝ չի հաջողվելու: Ես կինոռեժիսոր եմ եւ հույս ունեմ իմ երկրում ընտանիս պահել իմ աշխատանքով: Բայց սա վտանգավոր է մի ամբողջ սերնդի համար. երբ նրանք տեսնեն, որ շատ հեշտությամբ կարելի է սանձել, դուրս շպրտել երկրից կամ մասնագիտական ասպարեզից նրան, ով չի փորձում հարմարվել»:

DVD տարբերակով «Սարդարապատ déjà vu» ֆիլմը հասնելու է հանրությանը, փաստաթղթերը գրքույկի տեսքով՝ ընթերցողին, որպիսեսի ինչպես զուգակիցս է ասում, ֆիլմը արված է ոչ թե պատմաբանների կամ մշակույթի նախարարության աշխատողների, այլ հանդիսատեսի համար:

Ի դեպ, Տիգրան Խզմալյանի ստեղծագործական կենսագրությունը գնալով հարստանում է արգելված ֆիլմերով: «Երեւան» հեռուստաֆիլմերի ստուդիան, որտեղ աշխատել է 8,5 տարի՝ կանոնավորել-կարգավորելով եւ նախկին անմխիթար կացությունից վերափոխել նորմալ աշխատանքային վիճակի, լուծարվեց տարիներ առաջ: Ռեժիսորը զրկվեց աշխատանքից՝ կրելով դա սոցիալական եւ բարոյական հետեւանքները: Կարճ ժամանակ անց դարձյալ վերադարձավ կինո եւ սկսեց ֆիլմեր նկարել ինքնուրույն: Ժիրայր Սեֆիլյանի հետ նախաձեռնած «Արախից Քոռ, Արցախից Ջավախք» ֆիլմի CD-ները առգրավվեցին Սեֆիլյանի ձերբակալությունից հետո:

Վերջերս Վենետիկի բիենալեում ճարտարապետ Աշոտ Արշակյանը Հայաստանի ազգային նախագիծ ծրագրում ներկայացրել էր Տիգրան Խզմալյանի նկարահանած 10 րոպեանոց «Օպերա» ֆիլմը՝ հայերենով, անգլերենով, իտալերենով: Ռեժիսորը օպերայի շենքը դիտել է որպես երեւույթ, որպես ճարտարապետական կառույց, որպես Բաբելոնի աշտարակ, որի շուրջը անընդհատ կրթեր են բորբոքվում՝ օգտագործելով 1988-ի, 1998-ի եւ 2008-ի վավերագրական կադրեր՝ առանց մեկնաբանության: Ֆիլմի ցուցադրությունը հայկական տաղավարում արգելվել է քաղաքականության նախարարությունում, մեկնելու նախորդ օրերին:

«Քաղաքական հալածանքները զուգորդվում են մշակութային հալածանքներին: Եվ վտանգն այն է, որ քաղաքական անհանդուրժողականությունը, վախի մթնոլորտը ապահովում են ոչ միայն ոստիկանները, զորը կամ դատախազները, այլ հենց մտավորականները՝ իրենց պասիվ կեցվածքով կամ հարմարվողականությամբ: Նման հասարակական մթնոլորտում է հնարավոր այսպիսի հալածանքներ: Եթե մեր երիտասարդ սերնդի հետ հաջողվի անել այն, ինչ իրենք են ձգտում՝ սպառող եւ հարմարվող, ապա մենք կորցնելու ենք երկիրը: Որովհետեւ միակ բանը, որ Հայաստանին տարբերում է 3-րդ, 4-րդ կարգի աշխարհից, մշակույթն է: Իսկ որ մենք կորցնում ենք մշակույթը, ակնհայտ է, հեռուստաթերթերը ամեն պահի դա են ապացուցում: Դրանով մենք դառնալու ենք ոչ միայն խոցելի, այլեւ վերանալու ենք որպես ազգ: Սա ազգային անվտանգության խնդիր է: Ես պատրաստ եմ հետամուտ լինել այս խնդրին մինչեւ վերջ, որքան կկարողանամ: Տվյալ դեպքում ոչ թե իմ ֆիլմն եմ պաշտպանում, այլ՝ մեր բոլորի իրավունքը՝ կարդալ, դիտել այն, ինչ մենք ենք ուզում, այլ ոչ թե ինչ որոշում են մեր փոխարեն ուրիշները: Մտավորականների պարտականությունն է դիմադրության շարժման մեջ լինել միշտ, դիմադրել գորշությանը, որը կա միշտ. կար եւ կոմունիստների ժամանակ, եւ հիմա: Այսօր ոտղակի գորշությունը, գավառականությունը, քաղքենիականությունը իշխանության է եկել, որտեղ աշխատում են մարդիկ, ովքեր ուզում են ավելի կաթոլիկ լինել, քան Հռոմի պապը՝ ինչ-ինչ նկրտումներով: Որեւէ մեկը ինչո՞ւ պիտի որոշի՝ ես ինչ պիտի անեմ եւ որտեղ պիտի աղրեմ: Ստեղծում են պայմաններ՝ հեռանալու, բայց ես միեւնույն է՝ չեմ գնալու: Կարծում եմ՝ իրենց չի հաջողվելու, մենք կպահենք մեր գրքերը, կնկարահանենք մեր ֆիլմերը՝ պահպանելով դիմադրության մթնոլորտը»:

Հ. Գ. Մի քանի խոսք՝ պատվիրված ֆիլմի ֆինանսական խնդիրներին առնչվող:

«Սարդարապատ» ֆիլմի նկարահանումների համար տրամադրվել է 3,5 մլն դրամ: Բյուջեից նախատեսված գումարի 40 տոկոսը ձեւակերպվել է որպես «Հայկ» ստուդիայի ներքին ծախսեր, մյուս 40 տոկոսը՝ որպես պետական հարկեր եւ գանձումներ: Ռեժիսորը ստացել է 50 հազար դրամ սցենարի համար եւ 3 անգամ 50-ական հազար դրամ աշխատավարձ՝ աշխատանքային շրջանում: Պայմանագրի ժամկետի ավարտից մեկ շաբաթ առաջ ֆիլմի նկարահանման փաստացի վճարումները կազմել են բյուջեի ընդամենը 4 տոկոսը: Մնացած աշխատանքներն ավարտվել են սեփական միջոցներով, իսկ աշխատակազմը բեմադրական վարձատրություն առայժմ չի ստացել: ■

Դժվար է մուսուլման հայ լինելը...

Ջ էջից

տեղ բռնում», ասում է Քեմալ Յալչընը: Գերմանիայում Քեմալ Յալչընի հետ ինձ ծանոթացնելու առիթ ստեղծելով՝ Բյահթալի հայերը զարմանալի բաներ հասկացրին:

Գյուղում հսկա մի ջամի կար: Շրջակայքում այլ ջամի չլինելու հակառակ՝ թուրքերից ոչ մեկը այդ ջամին չէր մտնում, որովհետեւ այդ ջամին անվանում էին «գյավուրի ջամի», նման վիճակով են աղրել: 5 անգամ նամազ կատարեիր, հազ էլ գնայիր, ջամի էլ կառուցեիր, միեւնույնն է, բոլոր դեպքերում էլ հայերի՝ «գյավուր» լինելն էին ակնարկում:

Այս ամառ երեխաներին Վաֆտիզի տանելու խնդրի համար իյոտիթալեցի Բեքիր Ջանթեքինը զանազան խոչընդոտներ հարուցեց: Մի լրագրողի հարցին, թե «Ե՞րբ եք դուք ձեզ հայ գիտակցում», նա շփոթվել եւ չի կարողացել պատասխանել. «Իմ հետեւից ամեն մեկն էլ ինձ հայ է ասում: Ինչո՞ւ քրիստոնյա չլինեմ: Ես ինչ-որ եմ, դա եմ: Ես այս համայնքում զինվորություն եմ անում, աղրում եմ այս երկրում, աշխատում եմ, վճարում հարկերը, ո՞րն է հարցը»: Հարցի դիմաց հարցով է պատասխան տալիս, ասելով՝ հարցը մեծ է՝ հայ լինելը է: Քեմալ Յալչընը պատմում է հարեւանի հետ կապված քաշքշուկների մասին, որին երկար տանջելուց հետ պատասխանում են, որ... հայրը, մայրը մուսուլման դարձած «շրջված հայ» են, կրկին քրիստոնյա դառնալու պատճառով հարցը վերանայվելու է, այդպես են հասկացրել: Բոլոր այս եղելությունները եւ Հալաչօղլուի արած բացահայտումները միայն մի նպատակ են հետապնդում... Ժամանակակից այս գրվածքը, որ մարդկային պատմություններն են, հակամարտ են եւ չմոռացվող: Այս ընթացքում եթե աղրում ենք, պիտի առերեսվենք մեր անցյալի հետ: Այս ասելով ճամփա ենք ընկնում՝ մի հայի պատճառով հայրուրներն են տուժելու: Ասում է. «Բոլորս էլ հայ ենք»: Հաճորդ օրը այս մարդկանց ասում են «շրջվածներ», եթե հայ լինելը նույնիսկ սիմվոլիկ է լինում, միեւնույնն է՝ չի ընդունվում: Ոչ մեկը չի ասում՝ «Վաս վարվեցինք հայերի հետ, ափսոս եղավ», ընդհակառակը, ամեն տեսակ չեղած բաներ ավելացնելով՝ մեղադրում են հային: Եթե ասվի՝ «Մեր հայրենիքը Թուրքիան է», ոչինչ չի փոխվում, մուսուլման էլ, քրիստոնյա էլ՝ «հայ» բառից մարդկանց մազերը բիզ-բիզ է կանգնում: «Հայ» բառը մազեր է բիզ-բիզ կանգնեցնում:

Բայց չէ՞ որ այսօրվա թուրք բնակչության մեծ մասը բռնի հավատափոխված «գյավուրներից» է սերում...

Հալաչօղլուն հայտարարում է, որ իր ձեռքում է գտնվում հայերի ծագման մի ցանկ: Վիճաբանություն է ծավալվել մամուլում այս խնդրի շուրջ: Որովհետեւ ազգայնամոլների ձեռքին ցանկի հայտնվելը կայֆէջերից, որ մաս առ մաս հայ, քուրդ եւ ասորի երեւելի անձանց հասցեներն էլ են տրվում, նախատիպերի պատճառ է դառնում: Դեռեւս անհայտ է մնում այդ ցուցակների կազմման հարցը. ինչ անձիք են ներգրավված եղել այդ ցուցակների կազմմանը, որի պատճառով շատ երեւելի անձիք թիրախ են դարձել այդ անվանացանկերով: Յուսուֆ Հալաչօղլուն հայերի եւ քրդերի դեմ իր ունեցած ելույթներով հայտնի է, եւ նրա «հայտնագործությունն» է ալեւի քրդերի՝ հայկական ծագում ունենալու գյուտը: Պետության կողմից դեռեւս չկա ոչ մի արձագանք: Նրա հրապարակած «հայտնությունից՝ շուտ եկած հայերի, քուրդերի» ցուցակների վերաբերյալ: Ինչ նպատակով են այդ ցանկերը կազմվել, մտցվել համացանցի մեջ, որ տեղ են գտել նաեւ «չթփլատված» ձերբակալվողների եւ «զինվորությունից փախչողների» ցուցակները եւս: Մի խոսքով՝ համացանցերում, կայքերում հրապարակված ցուցակների այս արարքը վիճաբանությունների տեղիք տվեց: Այս ցուցակները շատ են հիշեցնում նացիստների հրեական ցուցակները, եւ Թուրքիայում տարբեր խմբավորումներն իզուր չեն անհանգստանում:

«ԱԿՕՍ», 2007 թ.

ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ ՊՈՂՈՍ ԲԵԺԱՆԲԵԿ

ՄՈՒՐԱԴ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Ռուսական բանակի մարտական սպաներից էր Պողոս (Պավել) Պետրոսի Բեժանբեկը (Բեժանբեկյանը): Գնդապետի զինվորական կոչումը նա արժանացել է 1912-ի դեկտեմբերի 6-ին: Մարտական զանազան սխրագործությունների համար Բեժանբեկը պարգեւատրվել է Սբ. Ստանիսլավի 3-րդ աստիճանի՝ սրով եւ ժապավենով, Սբ. Աննայի 3-րդ աստիճանի՝ սրով եւ ժապավենով, Սբ. Ստանիսլավի 2-րդ աստիճանի՝ սրով, Սբ. Աննայի 2-րդ աստիճանի՝ սրով, Սբ. Աննայի 4-րդ աստիճանի «Խիզախության համար» մակագրությամբ, Սբ. Վլադիմիրի 4-րդ աստիճանի՝ սրով եւ ժապավենով ու Սբ. Վլադիմիրի 3-րդ աստիճանի սրով եւ ժապավենով շքանշաններով: Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Պ. Բեժանբեկը ծառայել է Կովկասյան ռազմաճակատում, ակտիվորեն մասնակցել թուրքական զորքերի դեմ ռուսական բանակի մղած մարտական գործողություններին: 1915-ի հունիսի 10-ին Բեժանբեկն ուղարկվել է Թուրքիայի տարածքներ, նշանակվել Կովկասյան ռազմաճակատի ռուսական բանակի կազմում գործող հայ կամավորական ջոկատների (դրուժինաների) մարտական եւ տնտեսական պատրաստվածությունը ստուգող ու կարգավորող սպա, այնուհետեւ վերադարձել է Երեւան, 1915-ի օգոստոսին նշանակվել Արարատյան դաշտավայրում գործող քրդերի դեմ ռուսական պատժիչ զորաջոկատի պետ, աչքի է ընկել մի շարք կռիվներում:

1916-ի ամռանը, հայ կամավորական ջոկատների կազմացրումից հետո, Բեժանբեկը Կովկասյան ռազմաճակատի ռուսական բանակի հրամանատարության հետ մասնակցել է ռազմաճակատում հայկական կանոնավոր զորամասերի՝ մասնավորապես հայկական հրաձգային գումարտակների կազմավորմանը՝ համագործակցելով Անդրանիկի, Թիֆլիսի Հայոց Ազգային բյուրոյի անդամներ Հ. Խունունցի, Ն. Աղբալյանի, գնդապետներ Արտեմ Տեր-Նիկողոսյանի, Պավել Բեկ-Փիրումյանի, Միխայել Մելիք-Մուրադյանի եւ այլոց հետ: 1916-ի մարտի 27-ին Բեժանբեկը նշանակվել է ռուսական բանակի Առաջին հայկական հրաձգային գումարտակի հրամանատար: Այս պաշտոնում նա ակտիվորեն մասնակցել է թուրքերի դեմ մարտական գործողություններին, Արեւմտյան Հայաստանի տարածքների ազատագրմանը, աչքի է ընկել մի շարք մարտերում՝ մասնավորապես Էրզրումի, Երզնկայի, Քիլիթի, Սվազի եւ Ենիքեյի շրջաններում տեղի ունեցած կռիվներում: 1916-ի հունիսին Քիլիթի եւ Երզնկայի շրջանում Բեժանբեկի գլխավորած Առաջին հայկական հրաձգային գումարտակի գործողությունների մասին շաբաթային զեկուցագրում ասված է. «Հունիսի 25-ի լույս 26-ի գիշերը հրամայվեց գրոհել թուրքական անառիկ դիրքերի դեմ: Հայկական 1-ին գումարտակը արագորեն կատարեց հանձնարարված առաջադրանքը, առաջանալով լեռնաշղթայի վրայով եւ միանալով հարեւան զորամասերին՝ տիրեց Բալինթափանակ գյուղի մոտ գտնվող 2300, 2350 եւ 2660 բարձունքներին: Դրանից հետո թուրքերը, մեծ կորուստներ կրելով, հեծելազորի պաշտպանությամբ սկսեցին նահանջել: Այս առաջին ճակատամարտի ժամանակ իր կազմավորումը նոր ավարտած գումարտակը դրսեւորեց բարձր մարտական ոգի, հիանալի կարգապահություն եւ անդրդվելի տոկունություն: Կորցնել ամբողջ անձնակազմի կեսից ավելին (55 տոկոսը) ու նորից գործը գլուխ բերել՝ հաճախ վեր է մինչեւ իսկ հին ու փորձված զորամասերի ուժերից»: Զեկուցագրում նաեւ նշվում է, որ այդ արյունահեղ մարտերում «գումարտակը լիովին ջախջախեց ու փախուստի մատնեց թուրք երիտասարդության ծաղկից կազմավորված «Ավջի թաբուրու» («Որսորդական գումարտակ».- Մ.Կ.) կոչվող աշխարհազորային զորամասը, որը կազմավորվել էր գերմանացիների անմիջական մասնակցությամբ ու միջոցներով»: 1916-ի օգոստոսի 8-ին Բեժանբեկն ուղարկվել է Սարիղամիշ, նշանակվել ռուսական 22-րդ Կովկասյան հրաձգային գնդի հրամանատար: 1917-ի ամռանը, երբ արդեն ռուսական բանակի փլուզման անխուսափելիությունն ակնհայտ էր, եւ պարզ էր դարձել, որ իրավիճակը ճակատում կարող են փրկել միայն հայկական զորամասերը Բեժանբեկը Անդրկովկասի հայ հասարակական-քաղաքական շրջանների ներկայացուցիչներ Ա. Խաչատրյանի, Հ. Ջավրիյանի, Լ. Նազարյանի եւ այլոց հետ մասնակցել է Կովկասյան ռազմաճակատում հայկական ազգային զորամասերի ընդարձակման գործընթացին: 1917-ի հունիսի 1-ին Բեժանբեկը՝ որպես հայ քաղաքական եւ զինվորական շրջանների պատվիրակության նախագահ, գործուղվել է Պետրոգրադ՝- Ռուսաստանի ժամանակավոր կառավարության ռազմական նախարար Կերենսկուն զեկուցելու, որ կազմավորվեն հայկական զինվորական նոր միավորումներ՝ մասնավորապես Կովկասյան ճակատում հայկական գնդեր, բրիգադներ, դիվիզիաներ, ապա բանակային կորպուս: 1917-ի սեպտեմբերի 11-ին Պ. Բեժանբեկին շնորհվել է գեներալ-մայորի կոչում, եւ նա նշանակվել է 1-ին հայկական հրաձգային բրիգադի հրամանատար: Պ. Բեժանբեկի անմիջական ջանքերով ու ղեկավարությամբ, մինչեւ 1917-ի հոկտեմբերի 15-ը Կովկասյան ճակատում կազմավորվել է 1-ին հայկական հրաձգային բրիգադը, որի կազմում կար 3 գունդ 2-ական գումարտակով՝ 3441 զինվոր, 143 սպա եւ 24 գնդացիր:

1917-ի հոկտեմբերի 23-ին Բեժանբեկն ազատվել է պատշտոնից, մնացել պահեստազորում: 1917-ի նոյեմբերին Բեժանբեկը կրկին անցել է պահեստազորից իսկական զինծառայության: 1918-ի մարտի 6-ին, Էրզրումի անկումից հետո, նա նշանակվել է Հայկական բանակային կորպուսի արեւմտահայ հավաքական զորաջոկատի հրամանատար՝ այդ պաշտոնում փոխարինելով զորավար Անդրանիկին: Ակտիվ մասնակցություն է ունեցել 1918-ին Անդրկովկաս ներխուժած թուրքական զորքերի դեմ Հայկական կորպուսի զորամասերի մղած հերոսական կռիվներին, աչքի է ընկել հատկապես 1918-ի մայիսի 22-28-ը տեղի ունեցած Սարդարապատի հերոսամարտում, եղել է Երեւանյան զորախմբի թիկունքի պետ:

1918-ի մայիսի 31-ին՝ մայիսյան հերոսամարտերից հետո, Հայկական կորպուսի հրամանատար գեներալ-լեյտենանտ Թ. Նազարբեկյանի հրամանով գեներալ Բեժանբեկը նշանակվել է Երեւանի նահանգի հայ եւ թաթար ազգաբնակչությունների, գաղթականության միջեւ հարաբերությունների կարգավորման եւ բախումների կանխարգելման համար ստեղծվող հայ եւ թաթարական տեղական ազգային խորհուրդների անդամներից ստեղծված խառը հանձնաժողովի նախագահ եւ միացյալ զորաջոկատի հրամանատար:

1918-ի հուլիսին, Հայաստանի Հանրապետության կազմավորումից հետո, Բեժանբեկը Թիֆլիսում ակտիվ մասնակցություն է ունեցել Հայաստանի Հանրապետության բանակի կազմավորման գործընթացին. զբաղվել է հավաքական զորաջոկատի զինվորներին Հայաստան ուղարկելու աշխատանքներով: 1919-ին Քննիչ հանձնաժողովի ռազմապատմական բաժնի վարիչ, գեներալ Ա. Կուլեբյակինի խնդրանքով նա շարադրել է իր հուշերը, որոնք պահվում են Հայաստանի ազգային արխիվում: Նրանց մի զգալի մասը հրատարկվել է: Տաղանդավոր զորապետ, մեծ հայրենասեր գեներալ-մայոր Պ. Պ. Բեժանբեկը, որն անբասիր ծառայել էր հայրենիքին, վախճանվել է Թիֆլիսում: ■

«Նա, ով մարդ է դառնալու, արդեն մարդ է»

Հղիության արհեստական ընդհատում. մարդասպանությո՞ւն, թե՞...

ՄԱՐԻԱՄ ՄՈՒՂՈՒՍՅԱՆ

Ըստ Առողջապահության համաշխարհային կազմակերպության տվյալների՝ յուրաքանչյուր տարի աշխարհում 70.000 կին մահանում է հղիության արհեստական ընդհատման պատճառով առաջացած բարդությունների հետեւանքով: Կինը, փորձելով ազատվել երեխայից, հաճախ չի դիմում բուժհաստատություն, արդյունքում նա կարող է կորցնել ոչ միայն մայր դառնալու շնորհը, այլեւ կյանքը:

Տնային պայմաններում անցանկալի հղիությունից ազատվելու համար հնում կիրառում էին միջոցներ, ինչպիսիք մեջքին հարվածելը, բարձր տեղից ցատկելը, վիժում առաջացնող թուրմ խմելը եւ այլն:

Թվում է՝ մեր օրերում արդեն այս միջոցները պետք է մերժված լինեին, սակայն դրանք դեռ կիրառելի են հատկապես նյութական սուղ պայմանների պատճառով: Թեեւ այսօր հղիության արհեստական ընդհատման ընդունված գինը բուժհաստատություններում 15.000 դրամ է, սակայն մարդկային կյանքն անգամ սրանից մատչելի է գնահատվում ոմանց կողմից: Մասնագետները փաստում են, որ ներկայումս հղիության արհեստական ընդհատումն անվճար դարձնելու միտում է նկատվում:

Բժիշկների խոսքով՝ անցանկալի հղիությունից խուսափելու շատ ձեւեր կան ներկայումս. հակաբեղմնավորիչ հաբեր, պահպանակ, ներարգանդային պարույր եւ այն: Սակայն վերոհիշյալ միջոցներից եւ ոչ մեկը չեն կարող 100 տոկոսանոց երաշխիք լինել: Լինում են դեպքեր, երբ սրանք էլ չեն օգնում: Բացի այդ բժիշկները նշում են մի շարք ինֆեկցիոն հիվանդություններ, որոնց դեպքում լույս աշխարհ եկած երեխան ունենում է բազմաթիվ խնդիրներ: Դրանցից են կարմրուկը, կարմրախտը, ջրծաղիկը, տուբերկուլյոզը, սիֆիլը եւ այլ հիվանդություններ:

Այսօր բժիշկները միանշանակ կարծիք չունեն հղիության արհեստական ընդհատման մասին: Այնուամենայնիվ, բժիշկների համար սա նախ աշխատանք է: Շենգավիթ բժշկական կենտրոնի բժիշկ-գինեկոլոգ Հասմիկ Անդրեասյանն ասում է, որ նախքան անցանկալի հղիության ընդհատում կատարելը՝ փորձում է համոզել մորը, սակայն կինն է վերջնական որոշում կայացնողը: Ասում է, որ սա վիճելի հարց է. «Չեմ կարող ասել՝ մարդ է, թե ոչ, բայց, համենայն դեպս, կենդանի էակ է: Անշուշտ, սա էլ մտածելու տեղիք է տալիս»:

Բժշկուհին նշեց նաեւ, որ հղիության արհեստական ընդհատումն անհետեւանք չի մնում. «Կանայք կարծում են՝ եթե հղիության արհեստական ընդհատումից մեկ ամիս հետո բարդություններ չեն առաջանում, ապա ամեն ինչ հարթ է, սակայն ամեն դեպքում հնարավոր չի խուսափել որոշ հիվանդություններից: Առաջանում են վերքային մակերես, ցիկլի խախտում, բորբոքային երեւույթներ: Հնարավոր է՝ առաջանան նաեւ երկրորդային չբերություն, ինչը հաճախ հոգեբանական նախադրյալներ է ունենում»:



Կա կարծիք, որ առաջին հղիության արհեստական ընդհատումից հետո կրկին հղիանալու հավանականությունը նվազում է: Հասմիկ Անդրեասյանը հավաստիացնում է, որ 2 դեպքում էլ ռիսկը մեծ է: Նարինեն դա վառ օրինակ է. «Ես ինը տարի առաջ հղիության արհեստական ընդհատում եմ կատարել: Արդեն յոթ տարի է, ինչ բուժվում եմ, սակայն չեմ կարողանում նորից հղիանալ: Դա իմ առաջին հղիությունն էր»:

Ըստ Առողջապահության համաշխարհային կազմակերպության տվյալների՝ վերջին տասնամյակում աշխարհում կտրուկ աճել է հղիության արհեստական ընդհատումների թիվը՝ տարեկան հասնելով 25 միլիոնի այն երկրներում, որտեղ այն արգելված չէ: Մինչդեռ ընդամենը 1 դար առաջ հղիության արհեստական ընդհատում կատարող կանայք դատապարտվում էին կամ 3 տարվա ազատազրկման, կամ մահվան:

Կան երկրներ, որտեղ հղիության արհեստական ընդհատումն արգելվում է սահմանադրությամբ, օրինակ՝ ԱՄՆ-ի որոշ նահանգներում, մուսուլմանական երկրներում եւ մի շարք այլ երկրներում: Իսկ ահա Անգլիայում մինչեւ հղիության 18 շաբաթականը պտուղը մարդ չի համարվում: Կան երկրներ, որտեղ անգամ մինչեւ երեխայի ծնունդը պտուղը մարդ չի համարվում:

Հայաստանում չկա որեւէ իրավական մարմին, որն արգելի հղիության արհեստական ընդհատումը, սակայն բժշկական տեսանկյունից ցանկալի է, որ պտուղը հեռացվի մինչ 12 շաբաթականը, երբ այն համարվում է էմբրիոն: Դրանից հետո, ըստ ընդունված կարգի, պտուղը հեռացնում են միայն բժշկական ցուցումի համաձայն: Սա, սակայն, հաճախ է անտեսվում: Կան կանայք, որ հեռացրել են երեխային անգամ հղիության վերջին շրջանում, իհարկե, բժշկի անմիջական մասնակցությամբ: Անահիտը հղիության արհեստական ընդհատում է կատարել, երբ պտուղն արդեն 5 ամսեկան է եղել: Ասում է, որ ընդհատումն իրականացնող բժշկի կամ հիվանդանոցի հետ որեւէ խնդիր չի ունեցել: Վերջինս չցանկացավ նշել տվյալ հիվանդանոցի անունը:

Այսօր չկա պետական որեւէ մարմին, որը դրա համար որեւէ տույժի ենթարկի մորը կամ ընդհատումն իրականացնող բժշկին: Մինչդեռ այդ մասին հնում Հայոց կանոնագրում ասվել է. «Իսկ ովքեր չար դեղերով սպանում են մանուկներին որովայնում եւ արգանդը դեղերով կապում են հաճախակի պոռնկանալու համար եւ տղամարդուն ու կնոջը միմյանց ատելի դարձնում պսակի ընթացքում, արժան է, որ քահանան կարգի ու աղաչխարության բերի: Եւ եթե նույն մոլորության մեջ մեռնի, ապա չար կլինի նրանց մահը: Թող զրկվեն սուրբ օրենքներից եւ քրիստոնյաների շարքում չթաղվեն»: Նման օրենքները վերացվեցին 1917 թվականից հետո միայն: Այսօր անգամ խրախուսվում է հղիության արհեստական ընդհատումը:

ՀՀ օրենսդրության «Մարդու վերարտադրողական առողջության եւ վերարտադրողական իրավունքների մասին» օրենքի 10-րդ հոդվածի 1-ին կետում այդ մասին ասվում է. «Յուրաքանչյուր կին ունի հղիության արհեստական ընդհատման իրավունք»: Այնուհետեւ կարդում ենք. «Հղիության արհեստական ընդհատումը մինչեւ հղիության 12 շաբաթական ժամկետը կատարվում է կնոջ դիմումի համաձայն»:

Օրենսդրությամբ ամրագրված է նաեւ, որ հղիության արհեստական ընդհատումը մինչեւ 22 շաբաթականը կարող է կատարվել բժշկական ցուցումների դեպքում՝ կնոջ համաձայնությամբ:

Եթե բժիշկների եւ օրենսդիրների մեծ մասը պտուղը մարդ չի համարում, ապա ըստ Հայ առաքելական եկեղեցու՝ պտուղը բեղմնավորման պահից սկսած ունի հոգի, ուստի հղիության արհեստական ընդհատումը մարդասպանություն է: Դրանում հավասարապես մեղավոր է եւ բժիշկը, եւ մայրը: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբան Վարազդատ Քոչարյանը նշում է, որ առավելագույն հանցանքը կրում է հենց մայրը, քանի որ վերջինս անարգում է ոչ միայն մայրության շնորհը, իր մարմինը, այլեւ սպանում է իր մանկանը: «Կյանքն սկսվում է սաղմնային վիճակում՝ բեղմնավորման պահից սկսած: Ինչպե՞ս կարող է մարդ չլինել, եթե օրեցօր սաղմը փոփոխությունների է ենթարկվում, զարգանում, այսինքն՝ աճում է: Բացի այդ, կինն անարգում է նաեւ իր մարմինը, ինչը դատապարտելի է ոչ միայն եկեղեցու տեսանկյունից, այլեւ մարդկային առումով»: Վ. Քոչարյանը պատմում է, որ դեռեւս երկրորդ դարում հոգեւոր հայր Տերտուղիանոսն ասել է. «Նա, ով մարդ է դառնալու, արդեն մարդ է»:

Հիմա, սակայն, եկեղեցու կարծիքն ա ռանձնապես հաշվի չի առնվում: Կանանց մեծ մասը, ովքեր դիմում են այդ քայլին, սաղմը մարդ չեն համարում, ոչ էլ իրենց՝ մարդասպաններ: «Ես 8 անգամ հղիության արհեստական ընդհատում եմ կատարել: Ոչ ոք չի կարող ինձ համոզել, որ նրանք մարդիկ են եղել: Բացի այդ ավելի լավ է մի երեխա ունենամ, լավ պահեմ, քան չորսը՝ վատ, -ասում է 45-ամյա Գայանեն եւ ավելացնում,- ես ասվածավախ եմ, ինձ քրիստոնյա եմ համարում»: Նա այստեղ ոչ մի հակասություն չի տեսնում:

Նշենք, որ ամերիկացի բժիշկ-գինեկոլոգ Բերնարդ Նատանսոնը, որ 1000-ից ավելի հղիության արհեստական ընդհատում էր կատարել, հետագայում նկարահանեց ուլտրաձայնային ֆիլմ, որտեղ ցույց էր տալիս, թե ինչ է կատարվում մոր արգանդում պտղի հետ՝ հղիության արհեստական ընդհատման ժամանակ: Հայտնի է, որ ֆիլմի ցուցադրությունից հետո շատ բժիշկներ մեկընդմիշտ հրաժարվել են արհեստական ընդհատում կատարելուց: ■

ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅ ՄԱՄՈՒԼ

Եռակողմ հարաբերությունների դինամիկան

«Եռաոs աթոռ» է անվանում հայ-ադրբեջանա-թուրքական հարաբերությունների նորոյա դինամիկան «Կալիֆոռնիա կուրիեր» շաբաթաթերթի հրատարակիչ եւ խմբագիր Հարութ Սատունյանը: Ստորեւ թարգմանաբար՝ նրա հոդվածը:

Հայաստանի եւ Թուրքիայի ղեկավարները վերջին շաբաթների ընթացքում համաձայնել են բարելավել երկար ժամանակ սառեցված իրենց հարաբերությունները հետեւյալ սկզբունքների հիման վրա՝ բացել սահմանը, Հայաստանի հետ հաստատել դիվանագիտական հարաբերություններ եւ ստեղծել մի քանի հանձնախմբեր, որոնցից մեկը կզբաղվի հայ-օսմանական հարաբերությունների եւ մասնավորապես հայոց ցեղասպանության հարցերով:

Սփյուռքում եւ Հայաստանում շատ հայեր մտահոգված են այս վերջինիս մասնակցելու հայկական կողմի պատրաստակամության խնդրով, հաշվի առնելով, որ թուրք պաշտոնական այրերը քանիցս նշել են, որ նման հանձնախմբերի ստեղծման նպատակն է տարհամոզել աշխարհի երկրներին եւ նրանց հետ կանգնեցնել ցեղասպանության փաստը ընդունելու որոշումներ կայացնելուց:

Մյուս լուրջ խնդիրը արցախյան հակամարտությունն է: Տարիներ շարունակ Անկարան Հայաստանի հետ հարաբերությունների կարգավորման նախապայման է դնում հայկական ուժերի հետ քաշվելը:

Անցյալ շաբաթ Հայաստանի եւ Թուրքիայի նախագահները, ինչպես նաեւ Հայաստանի, Թուրքիայի եւ Ադրբեջանի արտգործնախարարները Նյու Յորքում էին՝ մասնակցելու ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի նիստերին:

Սեպտեմբերի 23-ին Թուրքիայի նախագահ Աբդուլլահ Գյուլը ելույթ ունենալով՝ փայլուն կերպով ներկայացրեց Թուրքիայի մերօրյա նախաձեռնությունները, նպատակ ունենալով հրապուրել ՄԱԿ-ի անդամ պետություններին եւ նրանց միջոցով ապահովել Անվտանգության խորհրդում ժամանակավոր աթոռ զբաղեցնելու իր ցանկության իրականացումը: Նաեւ հետագայում հետեւողական լինելու Եվրոմիություն մուտք գործելու իր երազանքը: Նա կենտրոնացավ սեպտեմբերին Հայաստան եւ Ադրբեջան կատարած իր այցելությունների վրա՝ հույս հայտնելով, որ սառեցված հակամարտությունները լուծում կստանան «տարածքային ամբողջականության սկզբունքը հարգելու հիման վրա»:

Երկու օր անց ելույթ ունեցավ ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը: Նա նշեց, որ ուրախ էր, որ Թուրքիայի նախագահը խիզախ գտնվելով ընդունել էր իր հրավերը: «Վստահ եմ, որ ժամանակը եկել է կարգավորելու հայ-թուրքական խնդիրները, եւ ես նման վճռականություն նկատեցի նախագահ Գյուլի կողմից: Անհրաժեշտ է արագ եւ վճռականորեն առաջ գնալ այդ ուղղությամբ», ասաց նա:

Ի հակադրություն այս հաճոյախոսությունների, նա շատ քննադատական խոսքեր ուղղեց Ադրբեջանի հասցեին: Նա երկար կանգ առավ Արցախի կարգավիճակի եւ նրա ինքնորոշման իրավունքի, նույնիսկ անկախության հարցերի վրա: Նա ուժեղ քննադատության ենթարկեց ՄԱԿ-ի այն 39 անդամներին, որոնք այս տարվա սկզբներին ադրբեջանամետ բանաձեւի օգտին էին քվեարկել, դրանով էլ ավելի ռազմատենչ դարձնելով ազերի ղեկավարներին: Նա իր ելույթն ավարտեց նշելով, որ «Հայերը ցեղասպանություն են արել»:

Հետաքրքրական է, որ նախագահ Սարգսյանը հայերենով ելույթ ունեցավ, որը ՄԱԿ-ի պատմության մեջ աննախադեպ երեւույթ է: Դժբախտաբար նրա ելույթի անգլերեն տարբերակը, ընդհանուր առմամբ լավ թարգմանված լինելով հանդերձ, որոշ տեղերում շեղվում է հայերեն բնագրից եւ աղավաղում որոշ բառերի իմաստը:

Երկու օր անց ելույթ ունեցավ Ադրբեջանի արտգործնախարար Էլմար Մամեդյարովը: Նա կոչ արեց. «Դուրս բերել հայկական զորքերը գրավյալ տարածքներից եւ դրանցում վերահաստատել Ադրբեջանի ամբողջական ինքնիշխանությունը»: Խոսելով արցախյան հակամարտության մասին, նա գովաբանեց բոլոր այն երկրներին, որոնք Գլխավոր ասամբլեայի նախորդ նիստում հօգուտ Ադրբեջանի էին քվեարկել:

Հստակ է, որ հայ-թուրքական եւ հայ-ադրբեջանական հարաբերությունները միեւնույն հարթության վրա չեն ընթանում: Վերջին 2 երկրների ղեկավարները օգտագործեցին ՄԱԿ-ի ամբիոնը՝ բարձրաձայնելու իրենց անհամաձայնությունները միմյանցից:

Քանի որ Թուրքիան արցախյան հակամարտության կարգավորումը նախապայման է համարում Հայաստանի հետ իր հարաբերությունների նորմալացմանը, պետք է սպասել տեսնելու, թե ինչպես կանդրադառնա հայ-ադրբեջանական խոսակցությունը այդ գործընթացի վրա:

Հնարավոր սցենարներից մեկը հետեւյալն է.

Անջատելով արցախյան հակամարտության կարգավորումը հայ-թուրքական հարաբերություններից, Թուրքիան կբացի սահմանը Հայաստանի հետ եւ կհաստատի դիվանագիտական հարաբերություններ Երեւանի հետ: Փոխարենը Հայաստանը կմասնակցի պատմաբանների հանձնաժողովի աշխատանքներին, իսկ Արցախը ժեստ անելով դուրս կգա բուֆերային գոտու մի փոքրիկ հատվածից, որն առանձնապես մարտավարական նշանակություն չի ունենա Հայաստանի համար: Բայց երբ թուրքերն ու ազերիները տեսնեն, որ հայերը չեն ցանկանում հավելյալ զիջումների գնալ, Թուրքիան կարող է խզել նորահաստատ հարաբերությունները Հայաստանի հետ եւ դարձյալ փակել սահմանը:

Դժվար է պատկերացնել նման սցենարի իրականացումը: Կցանկանա՞ Թուրքիան իր շահերը վերադասել Ադրբեջանի շահերից: Մյուս կողմից՝ հայերը կցանկանա՞ն հետ քաշվել բուֆերային գոտու թեկուզ մի փոքրիկ հատվածից:

Ադրբեջանում՝ նախագահական, իսկ Թուրքիայում սպասվող խորհրդարանական ընտրություններից հետո միայն պարզ կդառնա հավանաբար, թե նորափթիթ հարաբերությունները Հայաստանի եւ Թուրքիայի միջեւ ինչպիսի զարգացում կունենան:

Թարգմ. Հ. Ծ.

Յարուզելսկին իրեն մեղավոր չի համարում

Լեհաստանի նախկին նախագահ Վոյցեխ Յարուզելսկին իրեն մեղավոր չի համարում 1981-ին երկրում ռազմական դրություն մտցնելու համար: «Ես մերժում եմ դատախազի ներկայացրած մեղադրանքները», հայտարարել է Յարուզելսկին Վարշավայի օկրուգային դատարանում, որը քննում է նրա գործը: Ֆրանսիրեն գործակալությունը մեջբերում է նրա այն խոսքերը, որ ռազմական դրությունն այն ժամանակ «չարյաց փոքրագույնն էր», եւ ինքը ստիպված էր դիմել այդ քայլին, որպեսզի կանխվեր համազգային աղետը: Յարուզելսկու խոսքերով, ռազմական դրության այլընտրանքը կլիներ խորհրդային զորքերի մուտքը Լեհաստան, ինչպես դա տեղի էր ունեցել Չեխոսլովակիայում 1968-ին:

«Ես ինձ չեմ համարում անմեղ զոհ, լիակատար պատասխանատվություն եմ կրում ամենայն լավի եւ վատի համար, բայց պետք է հաշվի առնել պատմական համատեքստը», հայտարարել է նախկին նախագահը:

Յարուզելսկին ավելացրել է, որ ցավում է եւ ներողություն է խնդրում ընդդիմությանը ճնշելու նպատակով երկրում արտակարգ դրություն մտցնելու համար, սակայն նշել է, որ դա չի նշանակում իրեն ներկայացված մեղադրանքների ընդունում:

Յարուզելսկու կարծիքով, 80-ական թթ. ռազմական դրության պատճառ դարձած «Համերաշխություն» արհմիությունը հեռանկարային առումով իրավացի էր: Միաժամանակ նա արդարացված է համարում կառավարության ձեռնարկած գործողությունները: Ավելին, նա պնդում է, որ հենց այդ գործողություններն ապահովեցին «Համերաշխության» վերջնական հաղթանակը:

Լեհաստանում ռազմական դրություն մտցվեց 1981-ի դեկտեմբերին եւ չեղյալ հայտարարվեց 1983-ի հուլիսին: Այդ ժամանակամիջոցում սպանվեցին ընդդիմության 90 ակտիվիստներ: 2007 թվականին Լեհաստանի ազգային հիշողության ինստիտուտը հայտարարեց Յարուզելսկուն դատի տալու մտադրության մասին: Դատավարությունը սկսվեց այս տարվա սեպտեմբերի 12-ին:

ԱՄՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Նյու Յորքերը» կաջակցի Օբամային

Ամերիկյան «Նյու Յորքեր» հրատարակությունը հանդես է եկել նախագահության դեմոկրատ թեկնածու Բարաք Օբամայի պաշտպանությամբ: «Ընտրություն» վերնագրված ծավալուն խմբագրական հոդվածը հանդեսում կհրապարակվի հոկտեմբերի 13-ին եւ արդեն իսկ հրապարակված է դրա կայքէջում:

Հանդեսը քննադատում է նախագահ Ջորջ Բուշին, որը հունվարին թողնելու է իր պաշտոնը: Քննադատվում է նաեւ նրա կուսակիցը՝ նախագահության հանրապետական թեկնածու Ջոն Մակքեյնը: Հոդվածագրի կարծիքով, ամերիկացիներից շատերը ներկայիս վարչակազմին մեղավոր են համարում երկիրը եւ դրա իդեալները քայքայելու մեջ: Ուստի նոյեմբերին կայանալիք ընտրությունները հստակապես կարեւոր են: Հանդեսը Օբամային անվանում է առաջնորդ, որը պատրաստ է լավագույնս լուծել

արդի համաշխարհային հիմնահարցերը եւ Ամերիկայի առջեւ ծառացած դժվարությունները:

«Նյու Յորքերը» լույս է տեսնում 1920-ական թվականներից եւ լավ հայտնի է ինչպես Նյու Յորքում, այնպես էլ դրանից դուրս: 2004-ին հրատարակությունն առաջին անգամ հանդես եկավ նախագահության դեմոկրատ թեկնածուներից մեկի՝ Ջոն Քերրի պաշտպանությամբ:

Փոխնախագահության թեկնածուների բանավեճում հաղթեց Բայդենը

Ամերիկյան CNN եւ CBS հեռատաալիքների ուղիղ եթերում հեռարձակվել է նախագահության դեմոկրատ եւ հանրապետական թեկնածուներ Ջո Բայդենի եւ Սառա Պեյլինի բանավեճը: Հեռուստադիտողների շրջանում անցկացված հարցումները վկայում են, որ բանավեճի հաղթող է ճանաչվել Ջո Բայդենը:

CNN-ի հարցման համաձայն, հեռուստադիտողների 51 տոկոսը նախապատվությունը տվել է Բայդենին, 36 տոկոսը՝ Պեյլինին: CBS-ի հարցման տվյալներով, հեռուստադիտողների 46 տոկոսը հաղթող է համարում Բայդենին, 21 տոկոսը՝ Պեյլինին:

Փոխնախագահության թեկնածուների առայժմ միակ այդ բանավեճը տեղի է ունեցել հոկտեմբերի 2-ին Սենթ Լուիսի «Վաշինգտոն» համալսարանում:

Նախագահության թեկնածուներ Օբամայի եւ Մակքեյնի ավելի վաղ կայացած բանավեճում նույնպես հաղթել էր դեմոկրատ թեկնածուն: Օբամայի եւ Մակքեյնի երկրորդ բանավեճը տեղի կունենա հոկտեմբերի 7-ին:

ԱՄՆ-ում անօրինական ներգաղթը նվազել է

Pew Research Center հետազոտական կազմակերպության հրապարակած զեկուցագրի համաձայն, անօրինական կերպով ԱՄՆ մուտք գործող անձանց թիվը կրճատվել է: Այդ մասին հաղորդում են «Նյու Յորք թայմս» եւ «Լոս Անջելես թայմս» թերթերը:

Ավելի վաղ ԱՄՆ մարդահամարի բյուրոյի հրապարակած վիճակագրության հիման վրա մասնագետներն արդեն արձանագրել էին, որ երկրում ներգաղթի ընդհանուր հոսքը նվազել է տնտեսական ճգնաժամի պատճառով:

Ինչպես պարզվում է, վերջին տասնամյակի ընթացքում առաջին անգամ անօրինական ներգաղթյալների թիվը օրինական հիմունքներով երկիր մտած անձանց թվից փոքր է եղել: Անօրինական ներգաղթյալների թվի կրճատման պատճառներն են համարվում աշխատանքի ամերիկյան շուկայում ցածր վարձատրվող աշխատատեղերի թվի կրճատումը եւ սահմանների վրա ու երկրի ներսում անվտանգության միջոցների ուժեղացումը:

Pew Research Center-ի զեկուցագրի համաձայն, 2000-2004 թթ. տարեկան ԱՄՆ է մուտք գործել մոտ 800 հազար մարդ: Բայց 2005-ից նրանց թիվը իջել է տարեկան մոտ 500 հազարի: Ընդսմին անօրինական ներգաղթյալների թիվը կայուն կերպով պահպանվում է տարեկան մոտ 650 հազարի մակարդակի վրա: Հետազոտողների հաշվարկների համաձայն, ԱՄՆ-ում ապրող անօրինական ներգաղթյալների թիվը անցած մարտին կազմել է մոտ 11,9 միլիոն, այսինքն՝ երկրի բնակչության գրեթե 4 տոկոսը: Այդ խմբի մոտավորապես 58 տոկոսը կազմում են մեքսիկացիները, 22 տոկոսը՝ լատինամերիկյան մյուս երկրների եւ Կարիբյան ավազանի պետությունների ներկայացուցիչները: Վերջին մեկ տարում ԱՄՆ-ում ապրող անօրինական ներգաղթյալների թիվը չի ավելացել:

Իսրայելցիները շուտով ԱՄՆ կմտնեն առանց այցագրի

Աշխատանքային այցով ԱՄՆ-ում գտնվող Իսրայելի ներքին գործերի նախարար Մեիր Շիտրիտը հանդիպում է ունեցել ԱՄՆ ներքին անվտանգության նախարար Մայքլ Չերտոֆի եւ պետդեպարտամենտի ղեկավարի տեղակալ Ջոն Նեգրոպոնտեի հետ: Կողմերը պայմանավորվել են իսրայելցիների համար ԱՄՆ մուտքի այցագրերի վերացման գործընթաց սկսել: Այդ մասին հաղորդում են իսրայելական լրատվամիջոցները:

Վերջին ամիսներին ԱՄՆ իշխանությունները մուտքի այցագրերը չեղյալ են հայտարարել Հունգարիայի, Լիտվայի, Լատվիայի, Սլովակիայի եւ մի շարք այլ երկրների քաղաքացիների համար: 2008 թվականից Իսրայելը եւս համապատասխանում է այն պահանջներին, որոնք թույլ են տալիս չեղյալ հայտարարել այցագրերը: Սակայն պետդեպարտամենտը մինչեւ վերջերս հրաժարվում էր լուծել այդ հարցը:

Չերտոֆը հայտարարել է, որ տվյալ կացության պատճառն այն է, որ վերջին տարիներին Իսրայելն այցագրերի հարցը պաշտոնապես չի բարձրացրել:

ԱՄՆ ղեկավարությունը պահանջում է Իսրայելի ներկայիս թղթե անձնագրերը փոխարինել կենսաչափական տվյալներ պարունակող «խելացի» արտասահմանյան անձնագրերով, որոնք դժվար կլինի կեղծել:

Իսրայելում կենսաչափական տվյալներ պարունակող անձնագրեր կհայտնվեն 2009 թվականին: Մեկ ամիս առաջ երկրի կառավարությունը հաստատել է կենսաչափական բազային վերաբերող օրինագիծ, որի համաձայն 16-ից բարձր տարիքի բոլոր իսրայելցիները, ինչպես նաեւ անչափահասները արտասահմանյան անձնագիր կարող են ստանալ ՆԳՆ բաժիններում՝ թողնելով իրենց մատնահետքերը եւ ունենալով հատուկ լուսանկար: Օրինագիծը վերացրել է այն բոլոր ուղղումները, որոնք դրուզ եւ մահմեդական կանանց թույլատրում էին լուսանկարվել գլխաշորով:

Օրինագիծը մոտ օրերս քննարկվելու է Իսրայելի խորհրդարանում:

Մշակույթ

Վոկալ խնկարկումներ

Yerevan Musicfest-ի առավելապես գործիքային ծրագրերն անկասկած աչխուժացրին Մեցցոսոպրանո Զանդրա Մակմաստերի (Հյուսիսային Իռլանդիա) մասնակցությամբ անցկացված երկու համերգները: Ներկայումս Իսպանիայում բնակվող Մակմաստերը շարունակում է հյուրախաղերով հանդես գալ ամբողջ աշխարհում, գլխավորապես հանդես գալով համերգներով, մեներգելով օրատորիաներում եւ մեսսաներում, ձայնագրելով խասսկավառակներ: Նրա գործունեության մեջ օպերային պրակտիկան ունի երկրորդական նշանակություն, թեեւ սիրելի օպերաների արիաները երգչուհին ներառում է իր ելույթների մեջ:

Լոնդոնում երաժշտական կրթություն ստանալով եւ ապա իտալացի երգիչների (մասնավորապես նշանավոր Ռենատա Սկոտտոյի) մոտ կատարելագործվելով՝ Մակմաստերը դաստիարակվել է գերմանական դասականության ոգով, որտեղ գլխավորը ոչ թե երգեցողության գեղեցկությունն է (belcanto), որքան երաժշտության իմաստային արտահայտչականությունը: Ռիթմիկան եւ ֆոնիկան, դինամիկան եւ ստատիկան, շնչառության երկարատեւությունն ու կարճատեւությունն իրենց միասնականությամբ ուղղված են բեմական գեղարվեստական կերպարի ստեղծմանը: Վերջինս, ի տարբերություն ավանդական օպերայինի, առավել խիստ է, ոճային առումով զուտ եւ մշակված է նույնիսկ օժանդակ մանրամասնություններում:

Ահա թե ինչու Զանդրա Մակմաստերին լսելիս նախեւառաջ ուշադրություն ես դարձնում երգչուհու բարձր որակավորման, հարուստ վոկալ եւ առհասարակ երաժշտական փորձի վրա, որն արտացոլվում է երեւանցի ունկնդրին մատուցվող բոլոր ստեղծագործությունների կատարման ժամանակ:

Դրամատիկ սոպրանոյին մոտեցող նրա ձայնը աչքի է ընկնում բոլոր ռեգիստրներում ձայնավորման թեթեւությամբ, թեեւ միջին ռեգիստրում ձայնն ավելի մոտ է իր բնականությանը: Զգացմունքների արտահայտման մեջ զուտ Մակմաստերը անհրաժեշտության դեպքում օգտագործում է իր հղկված ձայնի պահեստային պաշարները, որոնք թույլ են տալիս հաղթահարել տեխնիկական դժվարությունները:

Այսպես, առաջին համերգի ժամանակ (Կամերային երաժշտության տուն, սեպտեմբերի 19), որտեղ «Սերենադ» կամերային նվագախումբը (դիրիժոր Էդուարդ Թոփչյան) եւ Զանդրա Մակմաստերը կատարեցին Վ. Ա. Մոցարտի երաժշտությունը, երգչուհին ի հայտ բերեց ֆիորիտուրայի նախանձելի տեխնիկա: Նա կոնցերտային երկու արիաները՝ «Vado, ma dove!», KV

583 ու «Alma Grande», KV 578 եւ ինչպես ամենից հաճախ Մոցարտի գործերում՝ իտալերենով կատարեց երկու օպերային արիաներ՝ դոնիա Էլվիրայի N3 «Mi tradi» արիան «Դոն Ժուան» եւ Սեստոյի «Parto, parto» արիան «Տիտոսի բարեգործությունը» օպերաներից: Պետք է ասել, որ Մակմաստերը Մոցարտի երաժշտության կլասիցիզմի հատկանշական վոկալ տեխնիկան, անհրաժեշտ տեմպ-ռիթմը եւ հուզականությունը վերարտադրեց իսկական վարպետությամբ:

Երկրորդ համերգի ժամանակ («Արամ Խաչատրյան» համերգասրահ, սեպտեմբերի 24) Զանդրա Մակմաստերը (թերեւ Երեւանում առաջին անգամ) երգում էր Ռիխարդ Վագների ձայնի եւ նվագախմբի համար գրած «Մ. Վեզենդոնկի հինգ բանաստեղծությունը»: Գերմանացի մեծ կոմպոզիտորը այն գրել է ճիշտ 150 տարի առաջ՝ 1858-ին, երբ խզեց կապերը բանաստեղծուհի Մաթիլդա Վեզենդոնկի հետ եւ նոր սիրով բոցավառվեց Կոզիմա Լիստի՝ իր աղջկա կնոջ հանդեպ:

Մաթիլդա Վեզենդոնկի պոեզիան ներթափանցված է խարական թթիռով եւ նրբինությամբ: Ռ. Վագները, որը գրական տեքստը երաժշտականի փոխադրելու անգերազանցելի վարպետ էր, Վեզենդոնկի կանացի պոեզիայում որսացել է իրեն արտամոտ մոտիվը՝ զգայականության եւ ցավ-տառապանքի անբաժանելիությունը: «Վալկիրիայում», «Զիգֆրիդում», «Տրիստան եւ Իզոլդայում» եւ «Պարսիֆալում» այդ մոտիվը մեծ զարգացում ստացավ: Ճիշտ է, իր վերջին օպերայում՝ «Պարսիֆալում» կոմպոզիտորը դրան տալիս է նոր, կրոնական ուղղվածություն:

«Մ. Վեզենդոնկի հինգ բանաստեղծությունը» («Հրեշտակ», «Կանգ առ», «Ջերմոցում», «Տառապանք», «Երազանք») խարահոգեբանական երաժշտական բանաստեղծությունների միասնական զարգացման մի ամբողջ շարք է, որոնք 20-րդ դարի առաջին կեսին շարունակեցին Գուստավ Մալերը, Առնոլդ Շյոնբերգը, Ալբան Բերգը, Անտոն Վեբեռնը, Ռիխարդ Շտրաուսը, իսկ երկրորդ դարակեսին՝ Հանս Յորգեն ֆոն Բոզեն եւ գերմանացի շատ ուրիշ կոմպոզիտորներ:

Զ. Մակմաստերը իր երգեցողությամբ անմիջապես կլանեց դահլիճը: Նրա վոկալ կուլտուրան եւ երաժշտական տեխնիկան նկատմամբ նուրբ վերաբերմունքը ըստ էության ակադեմիական են, եւ դա գլխավորն էր: Վագներյան խոսքի ու երաժշտության միաձուլումը հանձին Մակմաստերի գտավ հավասարիմ մեկնաբանի: Երգչուհին առանց որեւէ լարվածության բացահայտում էր ներքին դինամիկան, շեշտելով կամ երկարաձգելով անհրաժեշտ բառերը:

Արտասովոր նրբությամբ կատարվեցին երրորդ եւ հինգերորդ երգերը: «Ջերմոցում», որտեղ բարձր ռեգիստրի սառը անջատվածությունը ընդգծեց ցածրերի ջերմությունը, այլաբանորեն զգացվում էր ներաշխարհ ունեցող մի ինչ-որ սնամեջ բան: Բառի ուշադիր երգեցողություն (կամ դրա ինտոնացիոն ընթերցում, գրեթե որպես Շյոնբերգի Sprechgesang-ը)՝ ահա՛ ձեզ զուտ գերմանական ավանդույթ:

Այստեղ նվագախումբը եւս պատշաճ բարձրության վրա էր. զարմանալի է, որ նոր ստեղծագործությունները, ինչպես եւ Գիա Կանչելիի «Ստիսը» բարձրացնում են հայ ֆիլհարմոնիստների պրոֆեսիոնալիզմը: Շատ հաջող ստացվեց հինգերորդ երգի՝ «Երազանքի» նվագախմբային նախաբանը, որը ներքաշում է փխրուն զգացմունքների եւ չքացող տեսիլքների աշխարհ: Հալչող ինչողություններն ասես մարում էին իրականությունը, այն վերածելով պատրանքի: Գեղեցիկ էին ինչում փողայիններին ձգված ակորդները, անհրաժեշտ տոնայնական-տեմբրային աուրա ստեղծելով Մակմաստերի ոգեշնչված երգեցողության համար:

Այդ երաժշտությունից հետո դժվար էր անցնել Պ. Ի. Չայկովսկու՝ իրականության մասշտաբային ընդգրկում եւ կերպարների հակադրություն ունեցող 5-րդ սիմֆոնիային: Սակայն պարզ էր, որ Yerevan Musicfest-ը պետք է ունենար հանդիսավոր երաժշտական եզրափակում: Սիմֆոնիայի չորս մասերի մեջ ամենից լավ հնչեց վերջինը: Նվագախմբային զարգացման միջոցներն այստեղ առավել համոզիչ մարմնավորում ստացան Հայաստանի ֆիլհարմոնիկ նվագախմբի դիրիժորի եւ ամբողջ կոլեկտիվի երաժշտական-կատարողական համախմբվածության շնորհիվ:

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՄԱՐԳԱՐՅԱՆ
Արվեստագիտության դոկտոր

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

«Զմյուռնիայի ավերումը»

Լոնդոնի «Կոմիտաս ինստիտուտից» ստացված մամլո հաղորդագրությունը տեղեկացնում է, որ ինստիտուտի «Սթեռնդեյլ կլասիկո» հրատարակչությունը օրերս վերահրատարակել է Ջորջ Հորտոնի հայտնի «The Blight of Asia», Զմյուռնիայի ավերումը նկարագրող գիրքը, որի նախնական առաջաբանը գրել էր Գերմանիայում Մ. Նահանգների նախկին դեսպան Ջեյմս Ջերարդը: Նոր հրատարակությունը պարունակում է նաեւ նոր առաջաբան՝ գրված Վաշինգտոնում գործող ամերիկացի հույն իրավաբան Ջեյմս Մարկեսոսի կողմից:

Ըստ նրա, թուրքերի նպատակն էր արմատախիլ անել քրիստոնեությունը ամբողջ Փոքր Ասիայի տարածքում եւ անհնարին դարձնել դրա վերածնունդը: «Դա նպատակադրված ցեղասպանական արարք էր», վկայում է նա:

Հորտոնն ինքը Մ. Նահանգների հյուպատոսն է եղել այդ ժամանակ Զմյուռնիայում եւ ականատես է եղել հրդեհներին ու բնաջնջման: Նրա գիրքը ժամանակին «Գյավուր իզմիր» (անհավատ իզմիր) են անվանել թուրքերը:

Գրքի վերաբերյալ հավելյալ տեղեկությունների համար այցելել «info@garodbooks.com» կայքը:

Հ. Ծ.

Մեկնարկեց Պատկերապատման առաջին փառատոնը

Հոկտեմբերի 3-5-ը Երեւանում կանցկացվի պատկերապատման (կոմիկսներ) առաջին փառատոնը, որի հիմնական նպատակն է Հայաստանում զարգացնել շարժանկարների արվեստը:

«Պատկերապատումն աշխարհում տարածված արվեստի տեսակ է: Ունենք սկսնակ, սակայն խոստումնալից արվեստագետներ: Առայժմ մեզ մոտ առաջին հիմնաքարերն են դրվում: Շարժանկարները ձեւավորում են ճաշակ, յուրահատուկ հանգուցալուծումներ պատկերում: Թեպետ պատկերապատումը ժամանակակից արվեստ է, սակայն ներառում է նաեւ ազգային ավանդույթներ: Կարծում եմ, այս առումով հայկական շարժանկարները կառանձնանան: Պատկերապատումը միայն ծաղր չէ: Հիմնականում ցանկանում ենք նկարներով արտահայտված ինչ-որ հետաքրքրական պատմություններ ներկայացնել: Կան նաեւ ռեալիստական, լուրջ նկարներ, սակայն եթե ստեղծագործությունում բացակայում է էքսպրեսիան, հումորը, իմաստը, նկարն արժեզրկվում է», ասաց Հայաստանի երգիծանկարիչների ասոցիացիայի նախագահ Սուքիաս Թորոսյանը:

Պատկերապատումը ժանրային առումով նման է երգիծանկարչությանը, սակայն ունի նաեւ բազմաթիվ առանձնահատկություններ, ինչի շնորհիվ էլ նկարչության առանձին տեսակ է համարվում: Սուքիաս Թորոսյանը ժխտում է հնչեցրած կարծիքը, թե շարժանկարներով հիմնականում հետաքրքրվում են մանուկներն ու երիտասարդները: Նա փաստում է, որ իր 70-ամյա ընկերը մինչեւ օրս շարժանկարներ է հավաքում, պրում գրքերով՝ «ինչն ապացուցում է, որ պատկերապատման ոլորտը տարիքային սահմանափակումներ չունի»:

Ժան Ժիրոն, Ժիժեն, Կլեոն, Բրետեշն ֆրանսիական պատկերապատման լավագույն վարպետներն են:

Միջոցառմանը մասնակցում էր նաեւ Անգուլեմ քաղաքում կայացած պատկերապատման միջազգային փառատոնի հաղթող Շառլ Բերբերյանը. «Շարժանկարները ներկայացնում են մեր ամենօրյա իրականությունը, խնդիրները: Եվրոպայում արվեստի այս տեսակը լայն տարածում ունի: Բազմաթիվ երկրներում ենք ցուցադրվել, սակայն արձագանքները տարբեր են եղել: Եթե տվյալ երկրում պատկերապատման արվեստը զարգացած էր, ապա արձագանքներն ավելի բուռն էին: Եղել են երկրներ, երբ մարդիկ գալիս էին ցուցասրահ, սակայն գրեթե ոչինչ չէին հասկանում: Այդ ժամանակ բացատրում էինք շարժանկարների իմաստը»:

Միջոցառման ընթացքում մայիս ամսին կայացած պատկերապատման փառատոնի ցուցադրասրահի մրցույթին ներկայացված լավագույն 3 աշխատանքներն արժանացան մշակույթի նախարարության պատվոգրի: Իսկ հոկտեմբերի 5-ին պարգեւների կարժանանան արդեն փառատոնի լավագույն աշխատանքները:

ՀԱՍՄԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Յան Պոուլսենն արդարացումներ է փնտրում

Հոկտեմբերի 11-ին եւ 15-ին Հայաստանի ֆուտբոլի ազգային հավաքականն ախարհի առաջնության ընտրական մրցաշարում հյուրընկալվելիս ուժերը կչափի Բելգիայի ու Բոսնիայի հավաքականների հետ: Այդ հանդիպումներին նախապատրաստվելու համար ՀՀ հավաքականի գլխավոր մարզիչ Յան Պոուլսենը հոկտեմբերի 6-ից սկսվող ուսումնամարզական հավաքի է հրավիրել 27 ֆուտբոլիստի, որոնցից 20-ը հոկտեմբերի 9-ին կմեկնեն Բրյուսել: Այս մասին Պոուլսենը տեղեկացրեց երեկ ֆուտբոլի ֆեդերացիայում կայացած մամուլի ասուլիսում:

Վնասվածքի պատճառով այս անգամ հավաքական չի հրավիրվել Էդգար Մանուչարյանը: Բացակայում են նաեւ Ռոմիկ Խաչատրյանն ու Կարեն Դոխոյանը, որոնք ըստ մարզչի իջեցրել են իրենց խաղամակարդակը, կորցրել արագությունը: Փոխարենը հավաքական են հրավիրվել մի խումբ երիտասարդ ֆուտբոլիստներ, որոնք ըստ Պոուլսենի իրենց լավ են դրսեւորում ՀՀ առաջնությունում: Նրանք են Հենրիխ Մխիթարյանը, Գեւորգ Ղազարյանը, Արթուր Եդիգարյանը, Կառլեն Մկրտչյանը, Նարեկ Բեգլարյանը, Հրայր Մկոյանը, Հովհաննես Գրիգորյանը, Կարեն Խաչատրյանը եւ Արսեն Բալաբեկյանը: Լրագրողների այն հարցին, թե ինչո՞ւ նրանց թվում չէ երիտասարդական հավաքականում իրեն լավ դրսեւորած Հովհաննես Գոհարյանը, մարզիչը պատասխանեց, որ ինքն այնքան էլ տպավորված չէ վերջինիս խաղից, բացի այդ նա կարճահասակ է եւ նրա ոճի խաղացողներ հավաքականում կան: Ըստ Պոուլսենի, ինքն աշխատում է հավաքականում ընդգրկել բարձրահասակ ֆուտբոլիստների: Թեեւ Արարատ Առաքելյանը Դոնեցկի «Մետալուրգի» հիմնական կազմում չի ընդգրկվում, սակայն ֆիզիկական տվյալների համար մարզիչը նրան խաղացնում է հավաքականում: Իրոք որ տարօրինակ մոտեցում է դրսեւորում Յան Պոուլսենը ֆուտբոլիստների ընտրության հարցում: Նա ընդհանրապես մտահոգված է, որ հավաքականի լեգեոնականներից շատերը չեն մասնակցում իրենց թիմերի հանդիպումներին, ուստի խաղային փորձի պակասը զգացվում է: Պոուլսենը դժգոհեց Համլետ Մխիթարյանից, որը Թուրքիայի հավաքականի հետ խաղում իրեն լավ չդրսեւորեց, ուստի չմասնակցեց իսպանացիների հետ հանդիպմանը: Ըստ մարզչի, Համլետ Մխիթարյանը դեռեւս 100 տոկոսով պատրաստ չէ, թեեւ խաղում է Իրանում եւ հրավիրվել է հավաքական: Լեգեոնականներից ոմանք հոկտեմբերի 6-ին եւ 7-ին իրենց թիմերում խաղեր ունեն անցկացնելու, ուստի միանգամից կժամանեն Բրյուսել: Այնպես որ, հոկտեմբերի 6-ին մեր հավաքականը ուսումնամարզական հավաքը կսկսի 23 ֆուտբոլիստով:

Անդրադառնալով Թուրքիայի եւ Իսպանիայի հավաքականների հետ ընտրական մրցախաղին, Պոուլսենը նշեց, որ թեեւ մեր ֆուտբոլիստներին մոտ հաղթելու ցանկությունը մեծ էր, սակայն դա իրականացնելը դժվար էր՝ հաշվի առնելով մրցակցի ուժն ու վարպետությունը: Ըստ Պոուլսենի, այդ խաղերում մեր պաշտպանները լավ էին կազմակերպել սեփական դարպասի պաշտպանությունը, շատ անգամ հաջողվում էր գնդակը խլել մրցակցից, բայց գոհները չէին սացվում, բացակայում էր կոլեկտիվ խաղը: Պոուլսենը գտնում է, որ թուրքերի հետ մեր խաղը չստացվեց, իսկ ահա իսպանացիների հետ մրցավեճում բացառությամբ առաջին 15 րոպեների, մեր հավաքականը նորմալ ֆուտբոլ ցուցադրեց, չընկճվեց բաց թողած գոլերից հետո: Իհարկե, պետք է աշխատել շտկել տեղ գտած սխալներն ու առաջիկա խաղերում ձգտել հաջող հանդես գալ: Թեեւ Բելգիայի ու Բոսնիայի հավաքականների հետ արտագնա խաղերում էլ մեր ֆուտբոլիստներին չափազանց դժվարին պայքար է սպասվում: Ըստ մարզչի, ՀՀ հավաքականը սովորաբար չի կարողանում մրցակցի դաշտում գոլ խփել ու հաջողության հասնել, բայց պետք է խախտել այդ ավանդույթը:

Պոուլսենը խոստովանեց, որ Հայաստանի հավաքականի համար իրատեսական չէ աշխարհի 2010-ի առաջնության եզրափակիչ փուլի ուղեգիր նվաճելը, իսկ երկու պարտություններից հետո վիճակն էլ ավելի անհուսալի է: Սակայն պետք է փորձել դուրս գալ այս իրավիճակից ու հնարավորության դեպքում հաջող ելույթներ ունենալ: Զգացվում էր, որ մարզիչը որոշ չափով նեղացել էր լրագրողներից: Նա ընդգծեց, որ երբ իր գլխավորությամբ հավաքականն ընկերական հանդիպումներում հաջող ելույթներ էր ունեցել, բոլորը գոհ էին, իսկ երբ ընտրական խաղերում հավաքականը պարտվեց, այդ ժամանակ լրատվամիջոցները սկսեցին քննադատել ֆուտբոլիստներին: Ընդհանրապես Պոուլսենը սկսել է պարտությունները պատճառաբանել հայկական ֆուտբոլի ցածր խաղամակարդակով, առաջնության մասնակից թիմերի եւ լեգեոնականների փոքր թվով, ՖԻՖԱ-ի դասակարգման ցուցակում մրցակիցների զբաղեցրած բարձր դիրքով եւ այլ հիմնախնդիրներով: Բայց չէ՞ որ նոյնպիսի իրավիճակում անցած տարի մեր հավաքականը Իան Պորտերֆիլդի գլխավորությամբ բավական հաջող խաղաց Լեհաստանի, Պորտուգալիայի, Սերբիայի ընտրանիների հետ:

«Ազգի» այն հարցին, որ եթե իրատեսական չէր եզրափակիչի ուղեգրի նվաճումը, արդա ինչո՞ւ մարզիչը ժամանակին այդ մասին չի ասել ֆեդերացիայի նախագահին եւ իրականում ո՞ր տեղերի համար կարելի է պայքարել, Պոուլսենը հետեւյալը պատասխանեց. «Ես դեռ ընտրական մրցաշարի մեկնարկից 3 ամիս առաջ էի լրագրողներից մեկի հարցին պատասխանել, որ իրատեսական չէ եզրափակիչի ուղեգրի համար պայքարելը: Սակայն դա չի նշանակում, թե անհնարին է եւ չպետք է փորձենք պայքարել: Մենք լավ թիմ ունենք, որը պետք է ձգտի լավ արդյունք ցույց տալ: Իհարկե, կարետր է նաեւ մարզական բախտը: Իսկ եթե իրատեսորեն գնահատենք իրավիճակը մեր խմբում, ապա Հայաստանի հավաքականը կարող է պայքարել 4-5-րդ տեղերի համար»: Կարծում ենք, որ այս խոսքերը պետք է հնչեին այն ժամանակ, երբ ՀՖՖ նախագահ Ռուբեն Հայրապետյանը կոնկրետ խնդիր էր դնում Յան Պոուլսենի առաջ: Այդ դեպքում մեր հավաքականի երկու պարտությունները գուցե այդքան ցավագին չընդունվեին: Թեեւ հարցը ոչ այնքան պարտություններն էին, որքան հավաքականի ցուցադրած անբովանդակ խաղը:

Ստորեւ ներկայացնում ենք Հայաստանի ազգային հավաքական հրավիրված ֆուտբոլիստների ընդլայնված ցուցակը.

Դարպասպահներ՝ Ռոման Բերեզովսկի («Խիմկի», Ռուսաստան), Գեւորգ Կասպարով («Ուլիս»), Գրիգոր Մելիխեթյան («Փյունիկ»):

Պաշտպաններ՝ Սարգիս Հովսեփյան («Փյունիկ»), Ռոբերտ Արզումանյան («Ռանդերս», Դանիա), Ալեքսանդր Թադեւոսյան («Վիտեբսկ», Բելառուս), Աղվան Մկրտչյան («Գոմել», Բելառուս), Հրայր Մկոյան («Արարատ»), Հովհաննես Գրիգորյան («Բանանց»), Կարեն Խաչատրյան («Փյունիկ»), Վահագն Մինասյան («Արարատ»):

Կիսապաշտպաններ՝ Արարատ Առաքելյան («Մետալուրգ», Ուկրաինա), Լեւոն Փաչաջյան (ԳԱԻՍ, Շվեդիա), Արթուր Ոսկանյան («Վիտեբսկ», Բելառուս), Արտավազդ Քարամյան («Տիմիշոարա», Ռումինիա), Կարեն Ալեքսանյան («Տորպեդո», Ժոդինո, Բելառուս), Արթուր Եդիգարյան («Փյունիկ»), Հենրիխ Մխիթարյան («Փյունիկ»), Կառլեն Մկրտչյան («Փյունիկ»):

Հարձակվողներ՝ Գեւորգ Ղազարյան («Փյունիկ»), Սամվել Մելքոնյան («Մետալուրգ», Ուկրաինա), Համլետ Մխիթարյան («Ռահահան», Իրան), Արա Հակոբյան («Գոմել», Բելառուս), Արման Քարամյան («Տիմիշոարա», Ռումինիա), Ռոբերտ Զեբելյան («Բալթիկա», Ռուսաստան), Արսեն Բալաբեկյան («Բանանց»), Նարեկ Բեգլարյան («Միկա»):

Վերադարձը նշեց գոլով

Երեկ Գյումրիում կայացած «Շիրակ»-«Միկա» հանդիպումով մեկնարկեց ֆուտբոլի Հայաստանի առաջնության 22-րդ տուրը: Հյուրերը հաղթեցին 1-0 հաշվով եւ վաստակելով 38 միավոր, շրջանցեցին 3-րդ տեղում գտնվող «Գանձասարին»: Հաղթական գնդակը 34-րդ րոպեին խփեց երկարատեւ ընդմիջումից հետո «Միկա» վերադարձած Արամ Ոսկանյանը: 33-ամյա ֆուտբոլիստը խաղում էր Ղազախստանի «Եսիլ Բոգատիրում»: «Միկան» Սուրեն Բարսեղյանի գլխավորությամբ առաջին հաղթանակը տոնեց:

ՈՒԵՖԱ-Ի ԳԱՎԱԹ

Խմբային մրցաշարի մասնակիցները որոշվեցին

Հայտնի դարձան ՈՒԵՖԱ-ի գավաթի խմբային մրցաշարի 40 մասնակիցները: Նախկին ԽՍՀՄ հանրապետությունների թիմերից պայքարը կշարունակեն Մոսկվայի «Սպարտակն» ու ԲԿՄԱ-ն, Խարկովի «Մետալիստը»: Վերջինս սեփական հարկի տակ 4-1 հաշվով պարտության մատնեց թուրքական «Բեշիքթաշին»: «Սպարտակը» սեփական հարկի տակ ոչ-ոքի (1-1) խաղաց չեխական «Բանիկի» հետ եւ հաջորդ փուլ մտավ ի հաշիվ առաջին խաղում տոնած հաղթանակի (1-0): Իսկ ԲԿՄԱ-ն երկու անգամ հաղթեց խորվաթական «Սլավենին» (2-1, 1-0): Պայքարից դուրս մնաց «Մոսկվան», որն առաջին խաղում 1-2 հաշվով պարտվելով «Կոպենհագենից», սեփական հարկի տակ չկարողացավ հաղթել (1-1):

Բոլորից հաջող հանդես եկան իսպանական թիմերը, որոնց չորս ակումբներն էլ հաղթահարեցին առաջին փուլի արգելքը: Պայքարը կշարունակեն «Սեւիլիան», «Վալենսիան», «Դեպորտիվոն» ու «Ռասինգը»: Իտալական չորս թիմերից միայն «Նապոլիին» չհաջողվեց հաղթահարել «Բենֆիկայի» արգելքը (0-2): Իսկ ահա «Միլանը», «Ուդինեզեն» ու «Սամպդորիան» ընդգրկվեցին խմբային մրցաշարի մասնակիցների կազմում: «Միլանին» «Յուվենտուսի» նկատմամբ հաղթանակ պարգեւեց Անդրեյ Շեւչենկոյի խփած միակ գոլը:

Անգլիական չորս թիմեր՝ «Տոտենհեմը», «Աստոն Վիլան», «Պորտսմուտն» ու «Մանչեսթր Սիթին» կշարունակեն պայքարը, իսկ ահա 5-րդ ներկայացուցիչը՝ «Էվերտոնը» զիջեց «Սանդերլենդին» (1-2): Գերմանական 6 թիմերից միայն Դորտմունդի «Բորուսիան» անհաջողության մատնվեց՝ 11 մ հարվածներով զիջելով իտալական «Ուդինեզեին»: Իսկ ահա «Հերտան», «Շտուտգարտը», «Շալկե-04-ը», «Համբուրգը» եւ «Վոլֆսբուրգը» կշարունակեն պայքարը պատվավոր մրցանակի համար: Հոկտեմբերի 7-ին կայանալիք վիճակահանությամբ 40 ակումբները կբաժանվեն 8 խմբի, որոնցում լավագույն արդյունքի հասած երեք թիմերը կշարունակեն պայքարը 1/16 եզրափակիչում:

Դրամական պարգեւները նպատակային չեն ծախսվում

Սպորտի եւ երիտասարդության հարցերի նախարարությունում երեկ հրավիրված խորհրդակցությունը նվիրված էր Երեւանի հանրակրթական դպրոցների 7-րդ մարզական խաղերի անցկացմանը: Խորհրդակցությանը մասնակցում էին Երեւանի քաղաքապետարանի կրթության վարչության, համայնքների եւ սպորտի նախարարության համապատասխան բաժնի աշխատակիցները:

Սպորտի եւ երիտասարդության հարցերի նախարար Արմեն Գրիգորյանը կարեւորելով հանրակրթական մարզական խաղերի անցկացումը, միաժամանակ անդրադարձավ տեղ գտած բազմաթիվ թերություններին ու բացթողումներին: Գլխավորներից մեկն այն է, որ այս վեց տարիներին մայրաքաղաքի ոչ բոլոր դպրոցներն են մասնակցել միջոցառմանը: Մրցումների ոլորտն են ընդգրկվել 195 դպրոցներից 128-ի աշակերտները: Բացի այդ, հիմնականում դրամական պարգեւների են արժանանում մի խումբ դպրոցներ: Ըստ կանոնադրության, այդ պարգեւավճարները պետք է ուղղվեն ֆիզիկական կուլտուրայի աշխատանքների բարելավմանը, գույքի եւ հանդերձանքի ձեռքբերմանը, մրցումների կազմակերպմանը եւ այլն: Սակայն դրանք նպատակային չեն ծախսվում: Պատճառը մի շարք դպրոցների տնօրենների անտարբեր վերաբերմունքն է ֆիզկուլտուրա առարկայի հանդեպ:

Հանրակրթական դպրոցների մարզական 7-րդ խաղերի ծրագրում ընդգրկված է հինգ մարզաձեւ՝ վոլեյբոլ, բասկետբոլ, սեղանի թենիս, շախմատ եւ կրոսավազք: Ըստ նոր մշակած կարգի, յուրաքանչյուր աշակերտ կարող է մասնակցել միայն մեկ մարզաձեւից անցկացվող մրցումներին: Այսպիսով, յուրաքանչյուր դպրոցից միջինը 87 աշակերտ կմասնակցի մրցումներին, իսկ ընդհանուր առմամբ մրցանակների համար կպայքարի 1500 աշակերտ: Մրցումների նախնական փուլն արդեն մեկնարկել է, իսկ եզրափակիչը կկայանա նոյեմբերի 8-ին:

Ծանուցում

United Nations Development Programme

Vacancy Announcement No. 015-08-HR

The United Nations Development Programme in Armenia invites applications from qualified and experienced candidates for the position of the **Expert-Human Rights/Legal Aspects of Human Trafficking** within the framework of the Project Anti-Trafficking Programme: Capacity Developing Support and Victims Assistance Phase II.

Please visit **http://www.undp.am/?page=Jobs** to obtain full Job Description, application procedures and requirements.

Applications can be submitted through **http://oc.undp.am/?go=vacancies** site, or delivered hard copies to the UN House Security Desk, 14, P. Adamyan str., to the attention of the HR Associate.

Please clearly indicate in your application the title of the post and the vacancy number.

A complete application form should consist of a letter of motivation, full CV, copies of diplomas. Incomplete applications will not be considered. Only short listed applicants will be contacted.

Date advertised: 4 October 2008

Application deadline: 17 October 2008, 18:00

Women candidates are encouraged to apply

UNDP / UN House is a non-smoking environment

Մրցույթի հրավեր 108/08

ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի հայաստանյան գրասենյակը հայտարարում է 2 մրցույթ՝

1. Հայաստանում ներարկային թմրամոլության, հեպատիտ Բ-ի, հեպատիտ Շ-ի եւ ՄԻԱՎ-ի տարածվածության ուսումնասիրություն չհավակնված թմրամոլների շրջանում:

2. Հայաստանում հավակնված ներարկային թմրամոլների շրջանում մահացության եւ դրա հիմնական պատճառների ուսումնասիրություն:

Մրցույթի մանրամասն հրավերին կարելի է ծանոթանալ ՄԱԶԾ-ի http://www.undp.am ինտերնետային կայքից կամ գնումների բաժնից ք. Երեւան, Պետրոս Ադամյան 14 հասցեում: Տեխնիկական հարցերով դիմել Զարուհի Բեգլարյանին՝ հեռ. 54 67 31, վարչական հարցերով՝ Գրիգոր Ախնոյանին, հեռ. 56 60 73 (ներքին) 126 կամ Գագիկ Շահինյանին՝ հեռ. 56 60 73 (ներքին) 119, ժամը 14:00-16:00:

Փաստաթղթերի ներկայացման վերջնաժամկետը՝ հոկտեմբերի 15, ժամը 17:00:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«Անիտուր» տուրիստական գործակալությունը հոկտեմբերի 7-ին կազմակերպում է 14-օրյա բացառիկ շրջագայություն դեպի պատմական Հայաստան եւ Կիլիկիա:

Բացի պատմական քաղաքներից Դում կբարձրանաք Մուսալեռ եւ հեթանոս աստվածների նստավայր Նեմրութ սար:

Շտապեք մասնակցել մեր շրջագայություններին:

Մանրամասների համար զանգահարել. (010) 51-92-26 կամ (094) 203-206

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հոկտեմբերի 14-ին, ժամը 11.00-ին **ՀՀ բնապահպանության նախարարությունը, «Հայռուսգազարդ» ՓԲԸ, Սեւանի քաղաքապետարանը** կազմակերպում են հասարակական լսումներ՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի Սեւանի ափամերձ տարածքի գազամատակարարման ռեժիմի կարգավորման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության վերաբերյալ: Նախագծային փաստաթղթերին կարելի է ծանոթանալ ք. Երեւան, Կոմիտաս 29 հասցեում:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ՄԱՍԻՆ

«Պետական գնումների գործակալություն» ՊՈԱԿ-ն (պատվիրատու) «ՊԳԳ-ԳՀԱՊՁԲ-08/52» ծածկագրով կազմակերպում է գնանշման հարցում՝ **«Պետության կարիքների համար անհրաժեշտ տնտեսական ապրանքների ձեռքբերման» գնման պայմանագիր կնքելու նպատակով:** Գնանշման հարցման հրավեր ստանալու համար անհրաժեշտ է 700 ՀՀ դրամ փոխանցել «Արդշինինվեստբանկ», Հ/Հ 247230066158 «Բեջ-Գալ» ՍՊԸ -ի հաշվեհամարին եւ սույն հայտարարության հրապարակման օրվան հաջորդող 8 աշխատանքային օրվա ընթացքում դիմել պատվիրատուին հետեւյալ հասցեով՝ ք.Երեւան, Կոմիտասի պ., 54/բ, հեռ.՝ 28-93-25, հանձնաժողովի քարտուղար Է.Բոռնուչյանին:

Հրավերն անձին տրվում է անձը հաստատող փաստաթղթի, իսկ կազմակերպության անունից հանդես գալու դեպքում՝ նաեւ անձի լիազորությունները հավաստող համապատասխան փաստաթղթի հիման վրա: Հայտերը պետք է ներկայացնել մինչեւ դրանց բացման պահը՝ գնանշման հարցման հայտարարության հրապարակման օրվան հաջորդող օրվանից հաշված 10-րդ աշխատանքային օրը, ժամը 15:30:

***

«Պետական գնումների գործակալություն» ՊՈԱԿ-ն (պատվիրատու) «ՊԳԳ-ԳՀԱՊՁԲ-08/54» ծածկագրով կազմակերպում է գնանշման հարցում՝ **ՀՀ պետության կարիքների համար գույքի ձեռքբերման նպատակով:** Հրավեր ստանալու համար անհրաժեշտ է 775 ՀՀ դրամ փոխանցել «Արդշինինվեստբանկ» «Բեջ-Գալ» ՍՊԸ-ի, 247230066158 հաշվեհամարին եւ սույն հայտարարության հրապարակման օրվան հաջորդող 8 աշխատանքային օրվա ընթացքում դիմել պատվիրատուին հետեւյալ հասցեով՝ ք. Երեւան, Կոմիտասի պ., 54/բ, հեռ.՝ 28-93-25, Հ. Սարգսյանին:

Հրավերն անձին տրվում է անձը հաստատող փաստաթղթի, իսկ կազմակերպության անունից հանդես գալու դեպքում՝ նաեւ անձի լիազորությունները հավաստող համապատասխան փաստաթղթի հիման վրա: Հայտերը պետք է ներկայացնել մինչեւ դրանց բացման պահը՝ սույն հայտարարության հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 10-րդ աշխատանքային օրվա ժամը 15.00-ն:

ԳՈՎԱՅԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատուական գործունեությունը իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետության 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրված՝ 17.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիսեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրված է տպագրության՝ 3.10.2008, գինը՝ 100 դրամ, տպագրում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում՝ Արշակունեաց 2: